


ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՒԲՅԱՆ
ԼԻԼԻԹ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՆԱՐԵ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԳԱՂԹԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ,
ՑԱՆՑԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ
ՀԱՄԱՏԵՔԱՏԸ



ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ՀԱԿՈՒՅԱՆ
ԼԻԼԻԹ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
ՆԱՐԵ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ.
ՑԱՆՑԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍԸ

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2022

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ НАН РА

МИГРАН ГАЛСТЯН
ГАЯНЕ АКОПЯН
ЛИЛИТ МНАЦАКАНЯН
НАРЕ ГАЛСТЯН

ПРОБЛЕМА ЭМИГРАЦИИ НАСЕЛЕНИЯ ПОСТСОВЕТСКОЙ
АРМЕНИИ В КОНТЕКСТЕ СЕТЕВОЙ МИГРАЦИИ

INSTITUTE OF ARCHEOLOGY AND ETHNOGRAPHY OF NAS RA

MIHRAN GALSTYAN
GAYANE HAKOBYAN
LILIT MNATSAKANYAN
NARE GALSTYAN

THE EMIGRATION PROBLEM
OF POST-SOVIET ARMENIA'S POPULATION.
THE NETWORK MIGRATION CONTEXT

ИЗДАТЕЛЬСТВО ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
PUBLISHING HOUSE OF THE INSTITUTE OF ARCHEOLOGY AND ETHNOGRAPHY
ЕРЕВАН 2022 YEREVAN

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

Հետազոտությունը կատարվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (թեմայի ծածկագիր՝ 20TTSH-040):

Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА (Научный проект № 20TTSH-040).

This work was supported by the Science Committee of RA (Research project № 20TTSH-040).

Նախագծի ղեկավար՝ պ. գ. դ. Մ. Վ. Գալստյան

Պատասխանատու խմբագիր՝ պ. գ. դ. Մ. Վ. Գալստյան

Գրախոսներ՝ պ. գ. դ. Ռ. Ս. Կարապետյան, պ. գ. դ. Ս. Ս. Մկրտչյան

Գալստյան Մ. Վ., Հակոբյան Գ. Լ., Մնացականյան Լ. Ռ., Գալստյան Ն. Ս., Հետխորհրդային Հայաստանի բնակչության արտագաղթի հիմնախնդիրը. ցանցային միգրացիայի համատեքստը // ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ. — Եր.: ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., 2022, 178-էջ:

Գրքում վերհանվում են հետխորհրդային Հայաստանի բնակչության արտագաղթի հիմնախնդիրները. համակողմանիորեն վերլուծվում է ցանցային միգրացիայի դերը արտագաղթի հոսքերի ձևավորման, ընդլայնման, նրանց տեղավորման ծախսերի և ռիսկերի նվազեցման, արտերկրում աջակցության, վստահելիության, սոցիալական կապիտալի, ադապտացիայի և միգրանտների՝ հանրապետությունում մնացած ընտանիքների համար որպես կարևոր հոգեբանական գործոնի համատեքստում: Աշխատությունը կարող է հետաքրքրել միգրացիայի խնդիրներով զբաղվող հասարակական և հումանիտար ոլորտի մասնագետներին, այդ հարցում պետական քաղաքականություն մշակողներին և ընթերցողների լայն շրջանակին:

ISBN 978-9939-886-33-6

- © Գալստյան Մ. Վ., 2022
- © Հակոբյան Գ. Լ., 2022
- © Մնացականյան Լ. Ռ., 2022
- © Գալստյան Ն. Ս., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	7
ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ	
<i>Մ. Վ. Գալստյան</i>	
ԱՐՏԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ	14
1.2. Արտագաղթածների մասնագիտական նկարագիրը	15
1.3. Արտագաղթածների ընտանեկան կարգավիճակը	17
ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
<i>Մ. Վ. Գալստյան</i>	
ՍՓՅՈՒՌՔԻ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՑԱՆՑԻ ԴԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ	23
2.1. Հայաստանից արտագաղթի պատճառները	23
2.2. Արտագաղթողների որոշումների կայացման վրա սփյուռքի միգրացիոն ցանցի ունեցած դերը	28
2.3. Սփյուռքի միգրացիոն ցանցի ազդեցությունը Հայաստանից արտագաղթի ուղղությունների ընտրության հարցում	34
ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
<i>Ն. Մ. Գալստյան</i>	
ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱՌՁԵՎ ԾԱՌԱՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՑԱՆՑԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ	43
3.1. Միգրանտների առջև ծառայած խնդիրները	43
3.2. Սփյուռքի միգրացիոն ցանցի դերը արտերկրում միգրանտների աջակցության հարցում	47
ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ	
<i>Գ. Լ. Հակոբյան</i>	
ԱՐՏԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ	57
4.1. Արտագաղթածների զբաղվածության կարգավիճակը և ոլորտները	57
4.2. Արտագաղթածների իրավական կարգավիճակը	61

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գ. Լ. Հակոբյան

**ՑԱՆՑԸ ԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ
ԱԳԱՊՏԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

64

- 5.1. Սփյուռքի համայնքային կառույցների
և նոր միգրանտների փոխառնչությունները 64
- 5.2. Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը
և ցանցային հարաբերությունները 73

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գ. Լ. Հակոբյան

**ՄԻԳՐԱՑԻՈՆ ՑԱՆՑԸ ԵՎ ՆՈՐ ԱՐՏԱԳԱՂԹԻ
ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ**

79

- 6.1. Նոր արտագաղթի հավանականությունը,
ուղղություններ և գործուններ 79
- 6.2. Արտագաղթի մտադրություն ունեցողների
սոցիալ-ժողովրդագրական տվյալները 86

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գ. Լ. Հակոբյան, Ն. Մ. Գալստյան

**ԱՐՏԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ԿԱՊԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ՀԱՐԱՋԱՏՆԵՐԻ ՀԵՏ**

90

- 7.1. Հայաստանի հետ կապվածության ձևերն
արտագաղթածների շրջանում 90
- 7.2. Արտագաղթածների սեփականությունը Հայաստանում 96
- 7.3. Հայաստան հնարավոր վերադարձի մասին կարծիքները 97

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Լ. Ռ. Մասցականյան

**ԷԹՆԻԿ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԳՐԱՆՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԲՆԱԿՎՈՂ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԳԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

103

- 8.1. Էթնիկ սոցիալական ցանցը՝ որպես արտագաղթը
պայմանավորող և ընդունող երկրում ինտեգրմանն
օգնող գործոն 108

8.2. Միգրացիոն ցանցի դերը համայնքային կյանքում. ինքնության խնդիրները	113
8.3. Սփյուռքի միգրացիոն ցանցի հանդեպ վերաբերմունքը՝ ըստ ազգակցական կապի բնույթի	120
8.4. Ցանցը արտագաղթի մասին տրավմատիկ հիշողության համատեքստում	122
<i>Մ. Վ. Գալստյան</i> ԱՄՓՈՓՈՒՄ	126
ПРОБЛЕМА ЭМИГРАЦИИ НАСЕЛЕНИЯ ПОСТСОВЕТСКОЙ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ СЕТЕВОЙ МИГРАЦИИ: РЕЗЮМЕ	138
THE EMIGRATION PROBLEM OF POST-SOVIET ARMENIA'S POPULATION. THE NETWORK MIGRATION CONTEXT: SUMMARY	149
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	158
ՀԱՎԵԼՎԱԾ	161
Քանակական հարցման հարցաշար	161
Փորձագիտական հարցման ուղեցույց	175
Արտագաղթի հոգեբանական հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաքման ուղեցույց	176
Ընտանիքում արտագաղթի տոհմաձառի կառուցման հարցաշար	177

Նախարան

Հետխորհրդային Հայաստանի բնակչության շարունակական արտագաղթը անվտանգության, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և էթնոմշակութային հետևանքների առումով հանրապետության առջև ծառայած կարևոր հիմնախնդիրներից է: Այն Հայաստանի Հանրապետության հետագա հեռանկարային զարգացման և կանխատեսման առումով կարիք ունի խոր և համակողմանի վերլուծության: Այդ առնչությամբ Հայաստանում անցկացված բազմաթիվ հետազոտություններում միգրացիայի գլխավոր պատճառ վերջին հաշվով համարվել է տնտեսականը, հանրապետությունում գոյություն ունեցող վանող (գործազրկությունը, եկամուտների ցածր մակարդակը, աղքատությունը և այլն) և միգրացիայի նպատակակետ երկրներում ձգող (աշխատանք գտնելը, եկամուտների բարձր մակարդակը, անվտանգությունը, աշխատաշուկայում մուտք գործելու հնարավորությունը և այլն) գործոնները, որոնք նպաստում են արտագաղթի դրդապատճառների ձևավորմանը: Այդ համատեքստում Հայաստանի բնակչության արտաքին տեղաշարժերի օրինաչափությունների, մեխանիզմների բացահայտման նպատակով գրքում համակողմանիորեն վերլուծվել է ցանցային միգրացիայի դերը Հայաստանից արտագաղթի հոսքերի ձևավորման հարցում: Այստեղ միգրացիոն ցանցը դիտարկվել է որպես միգրացիայի վստահության և սոցիալական փոխհարաբերությունների կարևոր միջոց, որը միգրանտի ծագման և նոր բնակչության վայրի միջև ապահովում է աջակցություն, սոցիալական կապիտալի և նյութական միջոցների փոխանակում: Միգրացիայի գործընթացը թեթևացնելու առումով արտերկրում նույնէթնիկ, տարածքային խմբի անդամները միմյանց տրամադրում են որոշակի ռեսուրսներ: Ելնելով վերոնշյալ հանգամանքից՝ Հայաս-

տանից արտագաղթողները հակված են ընտրել այն երկրները, որտեղ ունեն արդեն իսկ ձևավորված ազգակիցների, բարեկամների, ընկերների ցանց: Աշխատությունում քննարկվում է, թե նոր միգրանտներն ինչպես են միգրացիոն ցանցի միջոցով արտերկրում կառուցակցում նոր հարաբերություններ և մուտք գործում ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուցիոնալ կառույցներ: Վերլուծվում է նաև, թե ավելի վաղ մեկնած ազգականների և բարեկամների սոցիալական կապերը նոր արտագաղթածների համար ինչ օգնություն և գիտելիք են ապահովում, ինչ հնարավորություններ են ընձեռվում զբաղվածության և այլ հարցերի լուծման առումով:

Առաջադրված տեսական մոտեցումների շրջանակներում գրքում համակողմանիորեն վերլուծվել է Հայաստանի բնակչության արտագաղթի հիմնախնդիրը՝ սփյուռքի ցանցային միգրացիայի (այսուհետ՝ նաև ցանց) համատեքստում. ըստ այդմ էլ առաջարկվել են գործընթացի հետագա կարգավորման նոր մոտեցումներ: Մասնավորապես, ուսումնասիրվել և վերլուծվել են հետևյալ հիմնախնդիրները.

1. ցանցի միջոցով արտագաղթածների սեռատարիքային կազմի, սոցիալ-ունեցվածքային վիճակի, կրթական-մասնագիտական ներուժի բացահայտում.
2. Հայաստանից արտագաղթելու որոշման կայացման վրա սփյուռքի միգրացիոն ցանցի ունեցած դերը և ազդեցությունը Հայաստանից բնակչության հոսքերի ձևավորման, ընդլայնման և ուղղությունների ընտրության հարցում.
3. ցանցի դերը միգրանտների տեղափոխման ծախսերի կրճատման, նրանց առջև ծառայած ռիսկերի նվազեցման, աջակցության, վստահելիության և այլ հարցերում.
4. ցանցը և արտերկրում միգրանտների ադապտացիայի խնդիրները.
5. արտագաղթածների կապերը և հարաբերությունները Հայաստանում բնակվող ընտանիքների հետ.

6. նոր արտագաղթի հավանականությունը սփյուռքի միգրացիոն ցանցի ազդեցությամբ.

7. Հայաստան հնարավոր վերադարձի պատճառները:

Այդ հիմնախնդիրների բացահայտման նպատակով 2021 թ. Հայաստանի բոլոր մարզերի քսան քաղաքային, երեսույթ գյուղական բնակավայրերում և Երևան քաղաքում հարցաթերթային հարցման միջոցով 639 ընտանիքների մասին հավաքվել է տեղեկատվություն, որոնց անդամներից 1259-ը արտագաղթել և մշտական բնակություն է հաստատել արտերկրում: Քանակական հետազոտության ընտրանքային համախմբության ծավալը հաշվարկվել է հատուկ վիճակագրական բանաձևով, և, որպես գլխավոր համախմբություն, դիտարկվել է ՀՀ տնային տնտեսությունների քանակը (ըստ 2011 թ. մարդահամարի տվյալների՝ այն կազմում է 763 584): Ընտրանքային համախմբությունը հաշվարկվել է 99% վստահության միջակայքում՝ 5% սխալի մեծության սահմաններում: Կիրառվել է բազմաստիճան շերտավորված տարածական ընտրանքի մեթոդը: Առաջին փուլում շերտավորումը կատարվել է ըստ մայրաքաղաքի և մարզերի, ապա՝ ըստ Երևանի համայնքների, մարզային քաղաքների և գյուղական համայնքների՝ տնային տնտեսությունների թվի համամասնությամբ: Երկրորդ փուլում ընտրվել են տնային տնտեսությունները՝ պատահական քայլի ընթացակարգով: Յուրաքանչյուր բնակավայրում ընտրանքի համամասնությամբ հաշվարկվել է երթուղիների քանակ: Ամեն երթուղում՝ վեց տնային տնտեսություն, իսկ սկզբնակետերն ընտրվել են հասցեների բազայից համակարգված հավանականության մեթոդով: Թիրախային են համարվել այն տնային տնտեսությունները, որտեղ եղել են արտագաղթած անդամներ: Յուրաքանչյուր հաջորդ տնային տնտեսության ընտրության քայլը երեքն է: Երրորդ փուլը հարցվողի ընտրությունն է. հարցմանը մասնակցել են ընտանիքի անդամների արտագաղթի պատմությանը լավատեղյակ անձինք: Մեկ տնային տնտեսությունում լրացվել է այնքան հարցաթերթ, ինչքան տվյալ տնային տնտեսությունից արտագաղթած ընտանիքների թիվն է:

Փորձագիտական հարցազրույցներ են անցկացվել տարբեր մասնագետների և գերատեսչությունների շրջանում, մասնավորապես, ՀՀ ԱԺ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ նախարարության Միգրացիոն ծառայության (այսուհետ՝ ՏԿԵՆ Միգրացիոն ծառայություն), Սփյուռքի գործերի հանձնակատարի գրասենյակի, մարզպետարանների համապատասխան վարչության, ժողովրդագիրների, վիճակագիրների, սփյուռքագետների, տնտեսագետների հետ: Ընդհանուր առմամբ, հարցմանը մասնակցել է քսանինը փորձագետ:

Ծրագրի հոգեբանը միգրանտ ունեցող ընտանիքներում անցկացրել է 60 զրույց (20-ը՝ Երևանում, 40-ը՝ տարբեր մարզերում), որին զուգակցվել են մասնակցային դիտարկման մեթոդը և ընտանիքի տոհմաձառի վերակառուցման մոտեցումը:

Կիրառվել է նաև փաստաթղթերի վերլուծության մեթոդը, որի շրջանակներում վերլուծվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի հրատարակած միգրացիայի տվյալները, արտագաղթի վերաբերյալ գիտական, մամուլային և այլ կարգի տպագիր նյութերը, միգրացիայի վերաբերյալ ՀՀ-ում ընդունված իրավական փաստաթղթերը և այլն:

Գրքում առաջ քաշված տեսակետները կարող են նպաստել Հայաստանից միգրացիայի հետագա կառավարման հարցում նոր քաղաքականության մշակմանը:

Ծրագրի իրականացմանը մասնակցել են ազգագրության, սոցիոլոգիայի, հոգեբանության, սփյուռքի ուսումնասիրությունների ոլորտի փորձառու մասնագետներ:

Սույն գրքի հեղինակներն են էթնոսոցիոլոգ, պատմական գիտությունների դոկտոր, հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ Մ. Վ. Գալստյանը, էթնոսոցիոլոգ, պատմական գիտությունների թեկնածու Գ. Լ. Հակոբյանը, կլինիկական հոգեբան, հոգեբանական գիտությունների թեկ-

նածու Լ. Ռ. Մնացականյանը և սոցիոլոգ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու Ն. Մ. Գալստյանը:

Գրքի հեղինակներն իրենց շնորհակալությունն են հայտնում գիտական թեմայի գործընկերոջը՝ ԱՄՆ-ի Լոս Անջելեսի Կալիֆոռնիայի համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի և Միջազգային ինստիտուտի պրոֆեսոր Վ. Աղաջանյանին՝ հետազոտության մեթոդաբանության և հարցաթերթերի մշակման, Հայաստանի մարզերում էթնոսոցիոլոգիական հետազոտության մասնակցության, վիճակագրական բազայի ամբողջականացման և արդյունքների վերլուծության հարցում արժեքավոր խորհրդատվության համար:

ԱՐՏԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԿՅԱԼՆԵՐԸ

1.1. Արտագաղթածների տարիքա-սեռային կազմը և կրթական բնութագիրը

Հետազոտության արդյունքներով՝ Հայաստանից արտագաղթածների մեծամասնությունն ակտիվ աշխատունակ տարիքում է. նրանց 34,9%-ը պատկանում է երիտասարդ (18-35 տ.), իսկ 39,4%-ը՝ 36-50 տ. տարիքային խմբերին: Այդ հանգամանքը, ըստ հետազոտողների, իր բացասական ազդեցությունն է թողնում Հայաստանի բնակչության սեռատարիքային կազմի համամասնության խաթարման և ժողովրդագրական գործընթացների վատթարացման վրա¹:

Աղյուսակ 1.

Արտագաղթածների տարիքային կազմը (%)

Տարիքը	%
18-35	34,9
36-50	39,4
51-62	18,0
63 և բարձր	7,7
Ընդամենը	100,0

Տարիքային ցուցանիշը համադրելով արտագաղթի երկրների հետ՝ կարող ենք նշել, որ նրանց 64,9%-ը մշտական բնակչության է

1 ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Եր., 2013, <http://files4.webydo.com/45/452723/UploadedFiles/7926b382-53f6-4128-8dbb-cacc8e6a8ff9.pdf> (հասանելի է՝ 06.07.2022):

մեկնել Ռուսաստանի Դաշնություն, 19,0-ը՝ եվրոպական երկրներ, 9,4%-ը՝ ԱՄՆ և Կանադա, 3,9 %-ը՝ ԱՊՀ երկրներ, իսկ 2,9%-ը՝ այլ երկրներ (աղ. 2): Այսպիսով, բերված ցուցանիշներից կարող ենք եզրակացնել, որ Ռուսաստանի Դաշնությունը շարունակում է մնալ Հայաստանից արտագաղթի հիմնական նպատակակետ երկիր: Համեմատության համար նշենք, որ Հայաստանից միգրանտների տարիքային այդ կազմի և մեկնման նախընտրելի երկրների մասին փաստում են նաև Հայաստանում անցկացրած այլ հետազոտության արդյունքներ²:

Աղյուսակ 2.

Արտագաղթածների բաշխումն ըստ տարիքի և երկրների (%)

Արտագաղթի երկիրը	Արտագաղթածների տարիքը				Ընդամենը
	18-35	36-50	51-62	63 և բարձր	
Ռուսաստան	23,2	26,1	12,6	2,9	64,9
ԱՊՀ երկրներ	0,7	1,7	0,9	0,6	3,9
Եվրոպական երկրներ	6,6	7,7	2,5	2,1	19,0
ԱՄՆ և Կանադա	3,0	3,0	1,5	1,8	9,4
Այլ երկրներ	1,4	0,9	0,5	0,2	2,9
Ընդամենը	34,9	39,4	18,0	7,7	100,0

Ըստ սեռի ցուցանիշի՝ արտագաղթածների կազմում տղամարդիկ գերակշռում են՝ 51,8%, իսկ կանայք կազմել են 48,2%: Արտագաղթի նպատակակետ երկրի հարցում թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք նախապատվությունը տվել են ՌԴ-ին, որը, ըստ հետազոտության արդյունքների, համապատասխանաբար կազմել է 34,9% և 30,0%: Ըստ աղյուսակ 3-ի՝ մյուս երկրներ մեկնածների տեսակարար կշռում (բացառությամբ նաև ԱՊՀ երկրների) կանանց թիվը մի փոքր ավելի է:

2 Միգրացիոն պատկերը Հայաստանի Հանրապետությունում 2019թ., https://www.armstat.am/file/article/migration_profile_arm_2019_2.pdf (հասանելի է՝ 11.05.2022):

Աղյուսակ 3.

Արտագաղթածների բաշխումը՝ ըստ սեռի և երկրների (%)

Արտագաղթի երկիրը	Արտագաղթածների սեռը		Ընդամենը
	Արական	Իգական	
Ռուսաստան	34,9	30,0	64,9
ԱՊՀ երկրներ	2,1	1,8	3,9
Եվրոպական երկրներ	9,1	9,8	19,0
ԱՄՆ և Կանադա	4,4	5,0	9,4
Այլ երկրներ	1,4	1,5	2,9
Ընդամենը	51,8	48,2	100,0

Արտագաղթի բացասական հետևանքներից է նաև Հայաստանից «ուղեղների արտահոսքը». այդ են վկայում նաև մեր հետազոտության արդյունքները: Արտագաղթածների կազմում բարձրագույն կրթություն ունի 39,5%-ը: Նրանց 21,7%-ը բնակչության է մեկնել ՌԴ, 10,2%-ը՝ եվրոպական երկրներ, 5,6%-ը՝ ԱՄՆ և Կանադա, իսկ մնացածը՝ ԱՊՀ և այլ երկրներ: Արտագաղթածների 37,0%-ն ուներ միջնակարգ և ցածր, իսկ 23,5%-ը՝ միջին մասնագիտական կրթություն (աղ. 4): Պաշտոնական վիճակագրական տվյալները նույնպես փաստում են բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող մարդկանց շրջանում գործազրկության համեմատաբար բարձր ցուցանիշների մասին, որը նույնպես խթանել է արտագաղթը: Ըստ 2021թ. ՀՀ վիճակագրական կոմիտեի հրատարակած տվյալների՝ կրթական ցուցանիշներով պաշտոնապես գրանցված գործազուրկների (61320 մարդ) 13%-ն ունեցել է բարձրագույն և հետբուհական, 23%-ը՝ միջին մասնագիտական նախա-մասնագիտական/արհեստագործական կրթություն³:

3 Աշխատանքի շուկան Հայաստանում, 2021 թ., ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://www.armstat.am/am/?nid=82&id=2447> (հասանելի է՝ 12.05.2022):

Աղյուսակ 4.

Արտագաղթածների բաշխումը՝ ըստ կրթության և երկրների (%)

Արտագաղթի երկրները	Արտագաղթածների կրթությունը			Ընդամենը
	Միջնակարգ և ցածր	Միջին մասնագիտական	Բարձրագույն և բարձր	
Ռուսաստան	27,7	15,5	21,7	64,9
ԱՊՀ երկրներ	2,0	1,2	0,7	3,9
Եվրոպական երկրներ	4,5	4,3	10,2	19,0
ԱՄՆ և Կանադա	1,7	2,0	5,6	9,4
Այլ երկրներ	1,0	0,6	1,3	2,9
Ընդամենը	37,0	23,5	39,5	100,0

1.2. Արտագաղթածների մասնագիտական նկարագիրը

Հետազոտությունից պարզվում է, որ արտագաղթածների մոտ կեսը բարձր որակավորում ունեցող մասնագետներ են, որոնց ներուժի օգտագործումը հանրապետությունում կարող էր նպաստել տնտեսության զարգացմանը: Արտագաղթածներն ունեն շատ լայն մասնագիտական նկարագիր. նրանց 23,1%-ը մինչև մեկնելն ունեցել է հասարակական գիտությունների ոլորտի մասնագիտություններ (հոգեբաններ, տնտեսագետներ, սոցիոլոգներ և սոցիալական աշխատանք, մանկավարժներ, իրավագետներ, քաղաքագետներ, զանգվածային լրատվության մասնագետներ և այլն): Արտագաղթածների 8,2%-ը ճարտարագիտություն և նոր տեխնոլոգիաների (քաղաքաշինություն և ճարտարագիտություն, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ), 7,9%-ը՝ բժշկական մասնագիտությունների (բժշկություն և միջին որակի բուժսպասարկում), 6,6%-ը՝ հումանիտար գիտությունների (պատմություն, լեզվագիտություն, բանասիրություն, մշակութաբանություն, արվեստ, սպորտ) ոլորտներից են: Նրանց մի մասը (2,6%) ունի բնական գիտությունների (ֆիզիկա, աստղագիտություն, կենսաքիմիա), մյուս մասը (1,0%)՝ գյուղատնտեսական գիտությունների

(գյուղատնտեսություն, ագրոքիմիա) մասնագիտություններ: Արտագաղթածների շրջանում միջին որակավորմամբ և սպասարկման ոլորտի մասնագետները 17,1% են: Վերը նշված մասնագիտությունների մեծ մասը Հայաստանի աշխատաշուկայում լայն պահանջարկ չունի կամ վճարվում է շատ ցածր. դա էլ խթանում է արտագաղթի մոտիվների ծավալմանը⁴: Արտագաղթածների շուրջ մեկ երրորդը չունի մասնագիտություն:

Աղյուսակ 5.

Արտագաղթածների մասնագիտական նկարագիրը (%)

Մասնագիտական ոլորտները	%	Մասնագիտությունները	%
Բնական գիտությունների մասնագիտություններ	2,6	Մաթեմատիկա	0,5
		Ֆիզիկա և աստղագիտություն	0,6
		Կենսաքիմիական գիտություններ	1,5
Ճարտարագիտություն և տեխնոլոգիա	8,2	քաղաքաշինություն և ճարտարապետություն	5,1
		համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	3,1
Բժշկական գիտությունների մասնագիտություններ	7,9	Բժշկություն	2,5
		միջին որակավորման բուժսպասարկում	5,4
Գյուղատնտեսական գիտությունների մասնագիտություններ	1,0	անասնաբուժություն	0,5
		գյուղատնտեսություն, ագրոքիմիա	0,5

4 Նշված որոշ մասնագիտությունների ցածր պահանջարկի մասին է վկայում ՀՀ վիճակագրական ծառայության կողմից 2021թ. բարձր որակավորման մասնագետների վերաբերյալ պահանջարկի ցանկը, Աշխատանքի շուկան Հայաստանում, 2021թ., ՀՀ վիճակագրական կոմիտե, <https://www.armstat.am/am/?nid=82&id=2447> (հասանելի է՝ 12.05.2022):

Հասարակական գիտությունների մասնագիտություններ	23,1	Հոգեբանություն	0,3
		տնտեսագիտություն և գործարարություն	7,1
		հաշվապահություն	3,7
		մանկավարժություն	6,6
		սոցիոլոգիա, սոցիալական աշխատանք	0,5
		իրավագիտություն	3,0
		քաղաքական գիտություններ	0,9
		զանգվածային լրատվություն և հաղորդակցություն	1,0
Հումանիտար գիտություններ և արվեստ	6,6	Պատմություն, մշակութաբանություն	0,5
		լեզվագիտություն, բանասիրություն	3,2
		Արվեստ	2,0
		Սպորտ	0,9
Անվտանգության ոլորտի մասնագիտություններ	0,8	Ոստիկանություն	0,2
		պաշտպանություն	0,6
Սպասարկման ոլորտի մասնագիտություններ	2,9	սպասարկման ոլորտի մասնագիտություններ	2,9
Միջին որակավորման մասնագիտություններ	14,2	միջին որակավորման մասնագիտություններ	14,2
Մասնագիտություն չունեն	30,7	մասնագիտություն չունեն	30,7
Դժվարանում են պատասխանել	2,0	Դժվարանում են պատասխանել	2,0
Ընդամենը	100,0	Ընդամենը	100,0

1.3. Արտագաղթածների ընտանեկան կարգավիճակը

Ինչ վերաբերում է արտագաղթածների ընտանեկան կարգավիճակին, ապա գերակշռող մեծամասնությունը՝ 77,5%, եղել է ամուսնացած և ունեցել է ընտանիք, 17,0%-ը՝ չամուսնացած, 2,8%-ը՝ ամուսնալուծված, իսկ 2,7%-ը՝ այրի:

*Աղյուսակ 6.
Արտագաղթածների ընտանեկան կարգավիճակը (%)*

Կարգավիճակը	%
Չամուսնացած	17,0
Ամուսնացած	77,5
Ամուսնալուծված	2,8
Այրի	2,7
Ընդամենը	100,0

Արտագաղթածների ամուսնական կարգավիճակը համադրելով մեկնման երկրների հետ՝ կարող ենք նշել, որ ամուսնացած է եղել ՌԴ մեկնածուների 79,1%-ը, ԱՄՆ և Կանադա՝ 78,0%-ը, եվրոպական երկրներ՝ 77,4%-ը:

*Աղյուսակ 7.
Արտագաղթածների ընտանեկան կարգավիճակը՝
ըստ մեկնման երկրների (%)*

Արտագաղթի երկիրը	Չամուսնացած	Ամուսնացած	Ամուսնալուծված	Այրի	Ընդամենը
Ռուսաստան	17,0	79,1	1,6	2,3	100,0
ԱՊՀ երկրներ	18,4	69,4	6,1	6,1	100,0
Եվրոպական երկրներ	17,2	77,4	3,3	2,1	100,0
ԱՄՆ և Կանադա	12,7	78,0	5,9	3,4	100,0
Այլ երկրներ	27,8	52,8	11,1	8,3	100,0

Հետազոտության արդյունքներից պարզվեց, որ նրանց 42,4%-ն արտագաղթել է ընտանիքի անդամների հետ, 25,7%-ի ընտանիքը կիսվել է՝ մի մասը մնացել է տեղում, իսկ անդամներից մեկը՝ սովորաբար հայրը (մայրը), տղան, գտնվել են դրսում և հետագայում՝ որոշ իրավական ընթացակարգեր անցնելուց հետո, ընտանիքի անդամները վերամիավորվել են արտերկրում (աղ. 8): Ըստ նույն աղյուսակի ցուցանիշների՝ 17,8%-ը մենակ է մեկնել արտերկիր, իսկ 14,1%-ը ամուսնացել է արտերկրում:

*Աղյուսակ 8.
Ընտանիքի անդամները միասին են գնացել,
թե՞ վերամիավորվել են (%)*

Ում հետ են մեկնել	%
Ընտանիքի անդամները միասին են գնացել արտերկիր	42,4
Ընտանիքը վերամիավորվել է արտերկրում	25,7
Ամուսնությունը կայացել է արտերկրում	14,1
Մենակ է գնացել/բնակվում է արտերկրում	17,8
Ընդամենը	100,0

Աղյուսակ 9-ի ցուցանիշներից կարող ենք եզրակացնել, որ միգրանտների գերակշռող մեծամասնությունը՝ 51,6%-ը, ԱՄՆ և Կանադա մեկնել է ընտանիքի անդամների հետ: Տոկոսային հարաբերությամբ ընտանիքների վերամիավորման ցուցանիշը բարձր է ՌԴ մեկնածուների շրջանում՝ 32,6% (աղ. 9):

*Աղյուսակ 9.
Ընտանիքի անդամները միասին են գնացել,
թե՞ վերամիավորվել են, ըստ երկրների (%)*

Արտագաղթի երկիրը	Ընտանիքի անդամները միասին են գնացել արտերկիր	Ընտանիքը վերամիավորվել է արտերկրում	Ամուսնությունը կայացել է արտերկրում	Մենակ է գնացել/բնակվում է արտերկրում	Ընդամենը
Ռուսաստան	41,0	32,6	10,8	15,6	100,0
ԱՊՀ երկրներ	50,0	15,4	23,1	11,5	100,0
Եվրոպական երկրներ	44,9	16,2	19,1	19,9	100,0
ԱՄՆ և Կանադա	51,6	12,5	15,6	20,3	100,0
Այլ երկրներ	17,4	13,0	26,1	43,5	100,0

Արտագաղթի հետևանքով ընտանիքի անդամների կիսավերու մասին է փաստում հետազոտությանը ձեռք բերված այն տվյալը, որ մինչև արտագաղթելը նրանց 65,6%-ը ապրել է միասին, նույն հարկի տակ: Հետևաբար, ինչպես արդեն վերևում նշեցինք, հիմնականում արտագաղթել են երիտասարդները, իսկ ՀՀ-ում մնացել են տարեց անդամները (աղ. 10):

Աղյուսակ 10.


Մինչև մեկնելը միասին, նույն հարկի տա՞լ էիք ապրում (%)

Պատասխաններ	%
Այո	65,6
Ոչ	34,4
Ընդամենը	100,0

Տնային տնտեսությունների կազմից արտագաղթին 1-4 անդամից բաղկացած մասնակցածների ցուցանիշը եղել է 85,6%, իսկ 5 և ավելի անդամից բաղկացածներինը՝ 14,4%: Տվյալները փաստում են այն մասին, որ նրանց գերակշռող մասը նուկլեար (երկսերունդ) ընտանիքներից են, իսկ մի փոքր մասը բազմանդամ ընտանիքներ են, որի կազմում առկա է երեք և ավելի սերունդ (գծ. 1):

Գծապատկեր 1.


Արտագաղթած ընտանիքի անդամների թիվը (%)



Տնային տնտեսություններից արտագաղթած ընտանիքների շուրջ կեսն ունեցել է անչափահաս երեխա: Անչափահասների ընդհանուր կազմում մեկ երեխա ունեցողները կազմել են 19,7%, երկու երեխա ունեցողները՝ 22,7%, իսկ երեք և ավելի երեխա՝ 6,9% (գծ. 2):

Գծապատկեր 2.

Ընտանիքում անչափահաս երեխաների թիվը (%)



Հետազոտության արդյունքներով՝ ՀՀ մարզերից արտագաղթի բարձր ցուցանիշ է գրանցվել Երևանից՝ 30,7%, իսկ ամենացածրը՝ Վայոց ձորի մարզից՝ 1,2%. դա պայմանավորված է նաև նրանց բնակչության թվի հարաբերակցությամբ: Մյուս կարևոր դիտարկումը, որը կարող ենք կատարել նշված գծապատկերից, մոտ 7-10% ցուցանիշ է գրանցվել այն մարզերում, որոնց մի մասը խորհրդային, իսկ մյուս մասը հետխորհրդային շրջանում առանձնացել են բնակչության աշխատանքային միգրացիայի համեմատաբար բարձր ցուցանիշներով: Դրանցից են Շիրակի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու, Գեղարքունիքի մարզերը, որտեղից աշխատանքային միգրացիայի հենքի վրա հետագայում ձևավորվել են արտագաղթի բարձր տեմպեր (գծ. 3):


ՀՀ վիճակագրական կոմիտեի ցուցանիշներով՝ 2015-2020 թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավվածները, որոնք մեկնել են արտերկիր և չեն վերադարձել նշված մարզերից, նույնպես կազմել են բարձր տոկոս⁵: Այսպիսով, վերը նշված ցուցանիշներից

5 Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021, ՀՀ վիճակա-

կարող ենք եզրակացնել, որ հանրապետությունից արտագաղթել են ակտիվ աշխատունակ տարիքի մարդիկ, որոնց մի մասն ուներ բարձրագույն կրթություն, ինչպես նաև տնտեսության տարբեր ոլորտների բարձր որակավորում ունեցող մասնագետներ էին, որոնք Հայաստանի աշխատաշուկայում չեն կարողացել գտնել աշխատանք կամ վճարվել են շատ ցածր: Նրանց գերակշռող մեծամասնությունը ամուսնացած էր և հիմնականում արտագաղթել է ընտանիքով, իսկ մի մասի ընտանիքը վերամիավորվել է արտերկրում: Արտագաղթած ընտանիքների շուրջ կեսն ունեցել է անչափահաս երեխա: Հայաստանից բնակչության այդ խմբերի արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում նրա սոցիալ-տնտեսական զարգացման և ժողովրդագրական գործընթացների վրա:

Գծապատկեր 3.

Արտագաղթածների ցուցանիշները՝ ըստ մարզերի (%)



գրական կոմիտե, էջ 25, <https://www.armstat.am/am/?nid=82&id=2438> (հասանելի է՝ 13.05.2022):

ՍՓՅՈՒՌԻ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՑԱՆՑԻ ԴԵՐՆ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ

2.1. Հայաստանից արտագաղթի պատճառները

Ինչպես արևմտյան, այնպես էլ հայրենական գիտնականների հետազոտություններում նշվում են բազմաթիվ պատճառներ, որոնք կարող են մարդուն միգրացիայի դրդել: Այնուհանդերձ, բոլորը միակարծիք են այն հարցում, որ առաջնայինն են տնտեսական գործոնը և ավելի բարձր աշխատավարձի ակնկալիքը, նյութական վիճակի բարելավման ձգտումը⁶: Որոշումների կայացման հարցում որոշ հեղինակներ կարևորում են միգրացիայի «սոցիալական տարածության» խնդիրը, որը նրանց համար ունի ձգող նշանակություն: Ինչքան մեծ թվով հնարավորություններ են կուտակված ընդունող երկրի տարածքում, այնքան այն ավելի գրավիչ է դառնում միգրանտների համար՝ սկսած տնտեսական հնարավորություններից, վերջացրած արժեքային հոգեբանական գործոնները: Միգրացիայի վերաբերյալ որոշումներ կայացնելուց առաջ նրանք համեմատում և կարևորում են ծագման և ընդունող երկրների տնտեսական, սոցիալ-մշակութային հնարավորությունները: Միգրացիայի որոշումների կայացման հարցում որոշ հեղինակներ կարևորում են ծագման և ընդունող երկրներում գոյություն ունեցող վանող և ձգող գործոնների անհամաչափության խնդիրը, ելքի երկրներում գոյություն ունեցող վանող (գործազրկություն, եկամուտների ցածր մակարդակ, աղքատություն, պատերազմներ և այլն) և մուտքի երկրներում՝ ձգող (եկամուտների բարձր մակար-

6 Ravenstein E. G. 1885, The Laws of Migration, Journal of the Statistical Society of London, Vol. 48, No. 2, pp. 167-235.

*Աղյուսակ 11.
Հայաստանից արտագաղթի պատճառները (%)*

Պատճառները	%
Հայաստանում աշխատանքի բացակայությունը	32,8
Բավարար կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարինությունը	22,5
Արտերկրում աշխատանք ունենալու հնարավորությունները	11,6
Ամուսնությունը	7,7
Կրթություն ստանալը, մասնագիտական առաջխաղացումը	5,9
Ընտանիքի միավորումը	5,2
Բարեկեցիկ կյանքի ակնկալիքները	4,3
Բուժում ստանալը	2,5
Երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարների բացակայությունը	2,2
Սոցիալական, բարոյահոգեբանական մթնոլորտը	2,2
ՀՀ քաղաքական անկայուն իրավիճակը	0,9
Արտերկրում սեփականություն (տուն, բիզնես) ունենալը	0,9
Ընտանեկան հանգամանքները	0,5
Դժվարանում եմ պատասխանել	0,8
Ընդամենը	100,0

դակ, անվտանգություն, աշխատաշուկայում մուտք գործելու հնարավորություն և այլն) գործոնները, որոնք պայմանավորում են միգրանտների ժամանումը և մեկնումը⁷: Մեր հետազոտության արդյունքները նույնպես փաստում են այն իրողությունը, որ Հայաստանից արտագաղթի գլխավոր պատճառը տնտեսականն է. հարցվածների 32,8%-ը նշել է աշխատանքի բացակայությունը, 22,5%-ը՝ բավարար կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարինությունը: Սա նշանակում է, որ

⁷ Everett S. Lee A. 1966, Theory of Migration, Demography, Vol. 3, No. 1, pp. 47-57.

Նրանց գերակշիռ մեծամասնության համար աշխատանքի կամ բավարար եկամուտ ապահովող աշխատանքի բացակայությունը շարունակում է մնալ հանրապետությունից արտաքին միգրացիայի վանող գործոն: Նրանք, միգրացիայի համար նշելով այդ պատճառը, որոշ դեպքերում ցանկանում են նաև արդարացնել իրենց վարքագիծը և շրջապատի համար դառնալ ընկալելի: Պատասխանողների 11,6%-ն իրենց ընտանիքի անդամ միգրանտների համար արտերկիր մեկնելու ձգող գործոն է համարել այնտեղ աշխատանք ունենալու հնարավորությունը:

Մյուս պատճառները, որոնք ներկայացված են 11-րդ աղյուսակում, ունեն գուտ ընտանեկան անհատական բնույթ, որոնց թվում կարող ենք նշել ամուսնության, ընտանիքի միավորման, բուժվելու, կրթություն ստանալու նպատակով տեղաշարժը: Հարցվածների որոշ մասն արտերկիր մեկնելու իրենց ընտանիքի անդամների վարքագիծը բացատրել է Հայաստանում ստեղծված սոցիալ-հոգեբանական խնդիրներով՝ երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարների բացակայությամբ, բարոյահոգեբանական մթնոլորտով, քաղաքական անկայուն իրավիճակով, արտերկրում բարեկեցիկ կյանք ապահովելու հանգամանքով: Նշված պատճառների մի մասը կարող ենք դիտարկել նաև համայնքներում միգրացիայի նկատմամբ ձևավորված ավանդույթների տեսանկյունից: Մասնավորապես, համայնքում էմիգրանտների ընտանիքները դրսի դրամական փոխանցումների շնորհիվ համեմատաբար ավելի բարեկեցիկ կյանքով են ապրում, քան միգրանտ չունեցողները, և վերջիններիս մոտ աճում է որոշ բարիքներից հարաբերականորեն զուրկ լինելու զգացումը⁸ դրդելով նրանց մտածել էմիգրացիայի մասին: Հարաբերական զրկանքը միգրանտ չունեցող ընտանիք-

8 Massey D., 1990, Social Structures, Household Strategies, and the Cumulative Causation of Migration, Population Index, N 56, pp. 3-26; Massey D., Arango J., Kouaouci A., Pellegrino A., Taylor J. E., 1994, An evaluation of Inter-national Migration Theory: The North American Case, Population and Development Review, N 20, pp. 699-752.

Աղյուսակ 12.

Արտագաղթի պատճառները՝ ըստ մեկնելու երկրների (%)

Արտագաղթի պատճառները	Ռուսաստան	ԱՊՀ երկրներ	Եվրոպական մեկնելու երկրներ	ԱՄՆ և կանադա	Այլ երկրներ
Հայաստանում աշխատանքի բացակայությունը	41,0	34,4	15,9	17,3	25,0
Բավարար կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարիտությունը	23,4	31,3	17,2	26,7	14,3
Երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարների բացակայությունը	1,0	0,0	0,6	13,3	3,6
Արտերկրում աշխատանք ունենալու հնարավորությունները	12,6	15,6	9,6	8,0	10,7
Բարեկեցիկ կյանքի ակնկալիքները	3,9	0,0	6,4	2,7	7,1
Արտերկրում սեփականություն ունենալը	1,2	0,0	0,0	1,3	0,0
Ընտանեկան հանգամանքները	0,6	0,0	0,6	0,0	0,0
Ընտանիքի միավորումը	3,9	3,1	6,4	12,0	3,6
Ամուսնությունը	6,4	6,3	9,6	8,0	21,4
Կրթություն ստանալը, մասնագիտական առաջխաղացումը	1,9	6,3	16,6	8,0	10,7
Սոցիալական, բարոյահոգեբանական մթնոլորտը	2,1	0,0	3,8	1,3	0,0
ՀՀ քաղաքական անկայուն իրավիճակը	0,6	3,1	1,9	0,0	0,0
Բուժում ստանալը	0,4	0,0	10,8	0,0	0,0
Դժվարանում եմ պատասխանել	0,8	0,0	0,6	1,3	3,6
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Աղյուսակ 13.

Արտագաղթի պատճառները՝ ըստ տարիքային կազմի (%)

Արտագաղթի պատճառները	Տարիքը			
	18-35	36-50	51-62	63 և բարձր
Հայաստանում աշխատանքի բացակայությունը	34,0	35,1	33,3	33,9
Բավարար կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարինությունը	22,8	24,7	33,7	25,4
Երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարների բացակայությունը	2,2	2,3	1,8	0,8
Արտերկրում աշխատանք ունենալու հնարավորությունները	11,7	11,5	10,0	7,6
Բարեկեցիկ կյանքի ակնկալիքները	3,7	3,4	4,3	4,2
Արտերկրում սեփականություն ունենալը	0,7	0,5	1,4	1,7
Ընտանեկան հանգամանքները	0,2	0,6	0,9	0,8
Ընտանիքի միավորումը	5,0	4,2	5,7	11,0
Ամուսնությունը	8,0	8,1	2,9	0,0
Կրթություն ստանալը, մասնագիտական առաջխաղացումը	6,3	3,6	1,8	4,2
Սոցիալական, բարոյահոգեբանական մթնոլորտը	2,0	1,9	1,4	0,0
ՀՀ քաղաքական անկայուն իրավիճակը	1,1	1,0	1,1	1,7
Բուժում ստանալը	1,5	2,9	1,4	5,1
Դժվարանում եմ պատասխանել	0,7	0,3	1,1	3,4
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0

ներում մեկնելու մտադրություն է ձևավորում, իսկ սոցիալական ցանցերն օգնում են այդ մտադրության իրագործմանը:

Արտագաղթի պատճառները, համադրելով նրանց ընդունող երկրների աշխարհագրության հետ, կարող ենք նշել, որ կրթություն ստանալու և մասնագիտական առաջխաղացման նպատակով եվրոպական երկրներ (16,6%) մեկնածների թիվը համեմատաբար բարձր է (աղ. 12):

Արտագաղթի պատճառները համադրելով միգրանտների տարիքային կազմի հետ՝ պարզ է դառնում, որ բոլոր տարիքային խմբերի՝ երիտասարդ (18-35 տ.), միջին (36-50 տ.), ավագ (51-62 տ.) և տարեց (63 տ. և բարձր) սերնդի մոտ նշվել են Հայաստանում աշխատանքի բացակայությունը և բավարար կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարինությունը (աղ. 13):

2.2. Արտագաղթողների որոշումների կայացման վրա սփյուռքի միգրացիոն ցանցի ունեցած դերը

Որոշ հեղինակներ, անդրադառնալով էմիգրացիայի խնդրին, կարևորում են ոչ այնքան երկրների միջև վարձատրությունների տարբերությունները, որքան աշխարհում ստեղծված միգրացիոն ցանցերի առկայությունը, որի միջոցով միգրանտները մեկնման համար հակված են ընտրել այն երկրները, որտեղ ունեն արդեն իսկ ձևավորված ազգակիցների, բարեկամների, ընկերների ցանց⁹: Այս համատեքստում Հայաստանից արտագաղթի տնտեսական պատճառները քննարկելու հետ նաև համակողմանի վերլուծության կարիք ունի մասնավորապես սփյուռքի գործոնի բացահայտումը: Սփյուռքի գոյությունը միգրացիոն ցանցի միջոցով արագացնում և հնարավորություններ է ստեղծում ծագման երկր-

9 Massey D., Joaquin Arango J., Hugo G., Kouaouci A., Pellegrino A., Edward T., 1993, Theories of International Migration: A Review and Appraisal, Population and Development Review, Vol. 19, No. 3., pp. 431-466, <https://www.jstor.org/stable/2938462?origin=crossref>

ներից բնակչության արտագաղթի և այդ հարցում նրանց որոշումների կայացման վրա: Ցանց հասկացության մեկնաբանության համար հիմնվել ենք արևմտյան միգրացիոն տեսություններում լայն տարածում ստացած Դ.Մասսեի այն մոտեցման վրա, ըստ որի՝ ցանցը բնութագրվում է որպես միջանձնային հարաբերությունների ամբողջություն, որը ձևավորվում է ազգակցական, բարեկամական, ինչպես նաև ընդհանուր սոցիալական ծագման հիման վրա՝ երեք խմբերի մարդկանց միջև. ծագման երկրում մնացածների, մեկնած միգրանտների և նոր բնակավայրում հաստատվածների միջև¹⁰:

Աղյուսակ 14.

Արտերկիր մեկնելու հարցում ընտանիքի/ազգականների, ընկերների/ծանոթների մասնակցությունը/ ազդեցությունը («այո» պատասխանները) (%)

Պատասխանները	%
Բացառապես նրա/նրանց որոշումն էր	39,0
Հայաստանում բնակվող ընտանիքը/ազգականները	16,3
Արտերկրում բնակվող ընտանիքը/ազգականները	37,2
Հայաստանում բնակվող ընկերները/ծանոթները	5,9
Արտերկրում բնակվող ընկերները/ծանոթները	22,8
Այլ	0,5
Ընդամենը	100,0

Այս բաժնում քննարկելու ենք, թե սփյուռքի միգրացիոն ցանցն ինչ ազդեցություն է ունենում Հայաստանից արտագաղթի որոշումների կայացման վրա և այդ հարցում, ընդհանուր առմամբ, ինչ դեր ունի ցանցի առկայությունը կամ բացակայությունը: Այս առումով կարևորում ենք բացահայտել Հայաստանում և արտերկրում բնակվող այն մարդկանց շրջանակները, որոնք իրենց ազդեցու-

10 Messey D., Arango J., Hugo G., Kouaouci A. Pellegrino and Tayllor E., նշվ. աշխ. p. 449 <https://www.jstor.org/stable/2938462?origin=crossref>

թյունն են ունեցել այդ հարցում: Մեր այն հարցին, թե «Ո՞վքեր են մասնակցություն/ ազդեցություն ունեցել արտերկիր մեկնելու հարցում» աղյուսակ 14-ում բերված տվյալներից կարող ենք եզրակացնել, որ, ընդհանուր առմամբ, վճռորոշ է եղել արտերկրում բնակվող ընտանիքի/ազգականների և արտերկրում բնակվող ընկերների/ ծանոթների գործոնը՝ 61,8%:


Նշված ցուցանիշից ելնելով՝ կարող ենք եզրակացնել, որ արտերկրում հարազատների, ընկերների բնակվելու փաստը կարևոր ազդեցություն է ունենում Հայաստանում գտնվողների էմիգրացիայի մեկնելու որոշումների կայացման վրա: Փորձագետների հետ անցկացված խորացված հարցազրույցի արդյունքները նույնպես փաստում են այդ գործոնի դերը Հայաստանից արտագաղթի հարցում. «Միգրացիան ինքնավարակող երևույթ է, և խմբերի արտագաղթելու հավանականությունը մեծանում է՝ կախված նրանից, թե իրենք արտասահմանում կապի ինչ փորձ ունեն՝ հանձինս արտասահմանաբնակ մոտիկ և հեռու բարեկամների, ընկերների, և արտասահմանում նախկինում բնակվելու և աշխատելու սեփական փորձի: Էսպեղ փարանումը բավական մեծ է, այսինքն՝ մարդիկ, որոնք արտասահմանում ունեն սոցիալական առումով հարուկ տեսակի բարեկամներ, սրանց մոտ արտագաղթելու տրամադրություններն ավելի ինտենսիվ են, քան նրանց մոտ, որոնց մոտ ուրիշ տեսակի են կամ ընդհանրապես բացակայում են՝ հաշվի առնելով, իհարկե, երկիրը, հաշվի առնելով՝ ինչ է ինքը էսպեղ կորցնում և այլն: Սիյուոքի ազդեցությունն արտագաղթի առումով ամենայն հավանականությամբ սա է՝ հրավիրող կողմի, ինտեգրող կողմի առկայությունը» (փորձագիտական հարցազրույց ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիայի հարցերով զբաղվող դասախոսի հետ):

Այդ ընտանիքի անդամների, հարազատների, ընկերների առկայությունը հնարավորություն է ընձեռում Հայաստանից էմիգրացիայի գործընթացի աստիճանական ընդլայնմանը և նոր ընտանիքների և անհատների ներգրավմանը: Հարցման մասնակիցների

35,1%-ի կարծիքով՝ արտերկրում բարեկամների/ընկերների բնակվելու փաստն էմիգրացիայի նրանց որոշումների կայացման վրա ունեցել է «շատ մեծ», իսկ 26,6%-ի՝ «որոշ չափով» ազդեցություն (գծ. 4):

Գծապատկեր 4.

Արտերկրում բարեկամների/ընկերների բնակվելու ազդեցությունն արտագաղթի որոշումների կայացման վրա (%)



Վերը նշված ցուցանիշները, համադրելով մեկնման երկրների աշխարհագրության հետ, կարող ենք նշել, որ այդ հարցում համեմատաբար բարձր տոկոս է կազմել ԱՄՆ-ում և Կանադայում բարեկամների և ընկերների բնակվելու փաստը (40,6%, աղ. 15):


Հայաստանից միգրացիայի որոշման կայացման հարցում կարևոր է նաև ընտանիքի անդամների կարծիքը¹¹, քանի որ այդ խնդիրը միանշանակորեն չեն ընդունվում բոլորը: Այդ որոշումը կայացվում է ընտանիքի անդամների միջև բանակցություններից հետո՝ ելնելով յուրաքանչյուր անդամի ունեցած դերային պարտավորությունից¹²: Ըստ գծապատկեր 5-ի տվյալների՝ հարցվածների 46,0%-ը՝ կողմ, 30,0%-ը՝ չեզոք, իսկ 21,6%-ը դեմ է եղել ընտանիքի անդամի արտագաղթելու որոշմանը:

11 Haug S., 2008, Migration Networks and Migration Decision-Making, Journal of Ethnic and Migration Studies, 34:4, 585-605.
 12 Մելիքջանյան Ս., 2021, ՀՀ-ում կանանց աշխատանքային միգրացիայի հարցի շուրջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, 107-117:

Աղյուսակ 15.
Արտագաղթողների որոշումների կայացման վրա արտերկրում բնակվող բարեկամների/ընկերների ազդեցությունը՝ ըստ երկրների (%)

Ազդեցությունը	Արտագաղթի երկիրը				
	Ռուսաստան	ԱՊՀ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	Այլ երկրներ
Ընդհանրապես ազդեցություն չի ունեցել	20,3	3,8	21,3	26,6	30,4
Ավելի շուտ ազդեցություն չի ունեցել	4,6	11,5	6,6	4,7	8,7
Որոշ չափով ազդեցություն է ունեցել	31,3	34,6	18,4	17,2	13,0
Շատ մեծ ազդեցություն է ունեցել	34,9	38,5	33,1	40,6	30,4
Բարեկամներ/ընկերներ չունի արտերկրում	7,7	11,5	20,6	10,9	13,0
Դժվարանում են պատասխանել	1,3	-	-	-	4,3
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Գծապատկեր 5.
Ընտանիքի անդամների դիրքորոշումներն արտերկիր մեկնելու հարցում (%)



Ընտանիքի անդամի արտագաղթելուն դեմ լինելու կողմնակիցների դիրքորոշումներում կարող ենք առանձնացնել երկու մոտեցում. առաջին՝ անձնական, հատկապես ընտանիքում տարեցների միայնակության մեջ հայտնվելու, հարազատներից հեռու ապրելու, օտարության, կարոտի, ընտանիքը կիսվելու պատճառը, երկրորդ՝ հայրենիքի նկատմամբ ունեցած պատասխանատվության, այն է՝ հայրենիքը չլքելու հանգամանքը (աղ. 16):

Աղյուսակ 16.

Արտերկիր մեկնելու որոշման վերաբերյալ ընտանիքի անդամների դեմ լինելու պատճառները (%)

Պատճառները	%
Հայրենիքը չլքելու պատճառով	26,8
Օտարության պատճառով	10,9
Մենակ եմ մնացել	20,3
Հեռավորության պատճառով	23,9
Կարոտի պատճառով	5,1
Ընտանիքը կիսվել է	10,9
Այլ	2,2
Ընդամենը	100,0

Ինչ վերաբերում է ընտանիքի այն անդամներին, որոնք հավանություն են տվել երկրից մեկնելուն, իրենց պատասխաններում կարևորել են արտերկրում բարեկեցիկ կյանքով ապրելու, աշխատանք ունենալու, կրթություն ստանալու/ մասնագիտական առաջխաղացման, որակյալ բուժում ստանալու հնարավորությունը: Նրանք այդ հարցում իրենց համաձայնությունը պատճառաբանել են նաև Հայաստանում առկա մի շարք խնդիրներով, որոնք խոչընդոտում են մարդկանց կանոնավոր կենսապայմանների ապահովումը: Որոշ մասն էլ իր համաձայնությունը պայմանավորել է ընտանիքի միավորման և ամուսնության հանգամանքով (աղ. 17):

Աղյուսակ 17.

Ինչո՞ւ եք հավանություն տվել նրանց որոշմանը (%)

Պատճառները	%
Բարեկեցիկ կյանքով ապրելու, աշխատանք ունենալու հնարավորության համար	46,6
Հայաստանում ապրելու հնարավորություն չունեին, աշխատանք չկար	15,0
Ընտանիքի միավորման համար / ամուսնանում էր	12,2
Արտերկրում կրթություն ստանալու / մասնագիտական առաջխաղացման համար	7,1
Բուժման նպատակով էին գնում	4,4
Հայաստանում հեռանկարի բացակայության պատճառով	6,8
Ընդունել եմ իրենց որոշումը	6,5
Դժվարանում եմ պատասխանել	1,4
Ընդամենը	100,0

2.3. Սփյուռքի միգրացիոն ցանցի ազդեցությունը Հայաստանից արտագաղթի ուղղությունների ընտրության հարցում

Այս բաժնում քննարկելու ենք, թե ինչ սկզբունքով են ձևավորվում Հայաստանից արտագաղթի ուղղությունները, և այդ հարցում ինչ դեր է կատարում սփյուռքի էթնիկ ցանցը: Ցանցը «միգրացիայի վստահության» և սոցիալական փոխհարաբերությունների կարևոր միջոց է՝ հիմնված ծագման և բնակության վայրի միջև աջակցության, վստահության և նյութական միջոցների փոխանակման վրա: Այս խնդիրը քննարկելու համար կարևորում ենք Ա. Պորտեսի այն մտտեցումը, որ «նույնէթնիկ, կրոնական, տարածքային խմբի անդամներին ռեսուրսների տրամադրումը նպատակ է հետապնդում՝ թեթևացնելու միգրացիայի գործընթացը, և այն նա

Աղյուսակ 18.

Արտագաղթի երկրներն ընտրելու հիմնական պատճառները (%)

Գործոնները	%
Ընտանիքի անդամների, հարազատների առկայությունը	28,7
Ընկերների, ծանոթների առկայությունը	8,5
Երկիր մուտք գործելու հասանելիությունը	8,3
Բնակության պետական ծրագրից օգտվելու հնարավորությունը	1,6
Աշխատանքի հնարավորությունը/առաջարկը	18,3
Բարձր վարձատրությունը	1,6
Սեփականության/բիզնեսի առկայությունը	1,1
Նախկինում այդ երկրում աշխատելը, ծառայելը, հանգիստը	5,2
Երկրի զարգացվածությունը	5,1
Լեզվի իմացությունը	6,3
Ամուսնությունը	8,2
Կրթությունը	3,0
Առողջապահական համակարգից օգտվելու հնարավորությունը	1,8
Այլ	0,3
Դժվարանում եմ պատասխանել	1,9
Ընդամենը	100,0

քնորոշում է որպես «կապված համերաշխություն»¹³: Մեր կարծիքով, արտերկրում ցանցի կողմից մարդկային և նյութական ռեսուրսների տրամադրումն իր ազդեցությունն է թողնում երկրի ընտրության պատճառների վրա: Այն հարցին, թե «Որո՞նք են տվյալ երկիրն ընտրելու հիմնական պատճառները», ըստ տրված պատասխանների առաջնահերթության՝ հարցվածների 37,2%-ը կարևորել է այնտեղ ունեցած ազգակիցների (28,7%-ը՝ ընտանիքի անդամներ, հարազատներ) և ոչ ազգակիցների (8,5%-ը՝ ընկեր-

13 Portes A. 1998, Social Capital: Its Origins and Applications in Modern Sociology. Annual Review of Sociology, 24 (1), pp. 1-24.

ներ, ծանոթներ) գործոնը: Մնացած պատասխանները առնչվում են նպատակակետ երկրներում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական բարենպաստ պայմաններին՝ աշխատանք գտնելու հնարավորություններ, երկիր մուտք գործելու հասանելիություն, ամուսնություն, լեզվի իմացություն, նախկինում այդ երկրում ունեցած աշխատանքային փորձ, կրթություն և այլ գործոններ (աղ. 18):

Երկրների ընտրության պատճառների հարցում Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետը նույնպես կարևորել է սփյուռքի հայկական համայնքների դերը. «*Ինչո՞ւ են այս կամ այն երկրներն ընտրվում արտագաղթի ուղղություն կամ ինչո՞ւ են պոպուլյար, դրա պարճառներից մեկը ընտրված երկրներում հայկական համայնքների առկայությունն է, հայկական միջավայրի առկայությունն է, կապերի առկայությունն է, որն ավելի հեշտացնում է արտագաղթի՝ աշխատանքի մեկնող կամ մշտական բնակության փոխափոխվող ընտանիքների գործը, որը թույլ է տալիս արագ հարմարվել նոր պայմաններին, գտնել աշխատանք, իմանալ մեկ-երկուսին, որին կարող են դիմել, և սա, իհարկե, գործոն է և դեր խաղացող հանգամանք» (փորձագիտական հարցազրույց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետի հետ):*

Ըստ այլ երկրներում ընտանիքի անդամների, հարազատների առկայության գործոնի (որոնք ազդեցություն են ունեցել Հայաստանից արտագաղթի ուղղության վրա)՝ համեմատաբար բարձր տոկոս են կազմում ԱՄՆ և Կանադա (37,0%), այնուհետ՝ Ռուսաստանի Դաշնություն (29,3%) նախընտրածները: ԱՊՀ երկրներ մեկնելու ընտրության հարցում այնտեղ գտնվող ընտանիքի անդամների, հարազատների գործոնը կարևորել է հարցվածների 27,5%-ը, այլ երկրներ (ԱՄԷ, Չինաստան, Սիրիա և այլն)՝ 25,4%-ը, եվրոպական երկրներ՝ 23,4%-ը (աղ. 19):

Աղյուսակ 19.

Հիմնական պատճառները՝ ըստ արտագաղթի երկրների (%)

Երկիրն ընտրելու գործոնները	Արտագաղթի երկիրը				
	Ռուսաստան	Վրչ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ, Կանադա	Այլ երկրներ
Ընտանիքի անդամների, հարազատների առկայությունը	29,3	27,5	23,4	37,0	25,4
Ընկերների, ծանոթների առկայությունը	9,8	6,3	8,2	4,1	0,0
Երկիր մուտք գործելու հասանելիությունը	10,8	6,3	5,7	0,0	3,8
Բնակության պետական ծրագրից օգտվելու հնարավորությունը	0,4	0,0	0,6	13,7	0,0
Աշխատանքի հնարավորությունը / առաջարկը	21,3	18,8	9,5	12,3	30,8
Բարձր վարձատրությունը	0,6	3,1	3,8	1,4	7,7
Սեփականության / բիզնեսի առկայությունը	1,8	0,0	0,0	0,0	0,0
Նախկինում այդ երկրում աշխատելը, ծանայելը, հանգիստը	6,8	9,4	2,5	0,0	0,0
Երկրի զարգացվածությունը	1,6	3,1	12,0	13,7	7,7
Լեզվի իմացությունը	8,6	3,1	3,8	0,0	0,0
Ամուսնությունը	6,6	9,4	10,1	8,2	26,9
Կրթությունը	0,6	0,0	8,9	6,8	7,7
Առողջապահական համակարգից օգտվելու հնարավորությունը	0,2	0,0	7,6	1,4	0,0
Այլ	0,2	0,0	0,6	0,0	0,0
Դժվարանում եմ պատասխանել	1,6	3,1	3,2	1,4	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Սոցիալական ցանցը դառնում է միգրացիոն ուղիների կազմակերպման կարևոր միջոց՝ ազդելով Հայաստանի բնակչության արտաքին տարածքային տեղաշարժերի վրա. այն կանխորոշում է նաև երկրի ընտրության հարցը: Այդ ցանցերը նպաստում են նաև կոնկրետ ուղղությամբ իրականացվող միգրացիայի ակտիվացմանը: Նման դիտարկում է արել նաև ծրագրի փորձագետներից մեկը. «ՌԴ-ում կան ձևավորված համայնքներ, այդ թվում՝ գյուղական համայնքներ, որոնք Հայաստանի որևէ աշխարհագրական վայրից կամ մարզից փեղափոխվածների համահունք են ներկայացնում: Կարծես Հայաստանի մի համայնքը վերցնես և փեղափոխես ՌԴ-ի որևէ փարածաշրջան: Այսօրեղ աշխարհում են համայնքային, ընկերական, ազգակցական կապերը, և այս իմաստով սոկրատեսական համայնքը մեկնման երկրում մեծ գործոն է, որ այդ ուղղությամբ միգրացիան լինի ավելի ակտիվ» (փորձագիտական հարցազրույց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետի հետ):

Հետազոտությունը ցույց տվեց, որ, բացի երկրի ընտրության վրա ունեցած ազդեցությունից, ցանցը հատկապես ՌԴ-ի համար բնակավայրերի ընտրության հարցում հիմնվում է նաև Հայաստանի ներհամայնքային տարբեր միգրացիոն խմբերի ռազմավարությունների վրա: ՌԴ-ի այս կամ այն տարածաշրջանը, որը, շնորհիվ սոցիալական ցանցի, մեծ ճանաչում ունի ներհամայնքային միգրացիոն որոշակի խմբի մոտ, գործնականորեն կարող է չհետաքրքրել մյուսներին, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ունի մեկնման իր միգրացիոն վեկտորը և ՌԴ-ում մշտական բնակվելու իր նախընտրելի բնակավայրերը: Շնորհիվ միգրացիոն այդ ռազմավարությունների՝ Հայաստանի նույն բնակավայրից տարբեր ազգակից ընտանիքներ և համագյուղացիներ հավաք ձևով բնակություն են հաստատել ՌԴ-ի տարբեր մարզերում: Եթե համայնքի անդամներից որևէ մեկը միգրացիայի ուղի է բռնում, հետագայում այն հիմք է դառնում համայնքի մյուս ազգակից անդամների միգրացիայի մասնակցության հնարավորությունների ընդլայն-

ման համար: Միգրացիոն այդ ուղղություններն առավել ցայտուն են դրսևորվում հատկապես Հայաստանի այն մարզերում, որոնք խորհրդային շրջանում ունեցել են հանրապետությունից դուրս ակտիվ աշխատանքային միգրացիայի հոսքեր: Դրանք հիմնականում Շիրակի, Լոռու և Գեղարքունիքի մարզերն են, որտեղ խորհրդային շրջանում դիտարկվել են արտագնացության բարձր տեմպեր, և նրանց մի մասը հետագայում նախընտրել է մշտական բնակությունը: Գեղարքունիքի մարզի Սարովսան գյուղից 1970-ական թվականներից մինչև այժմ նրանց երրորդ սերունդը հիմնականում արտագնացության է մեկնում այն բնակավայրեր, որտեղ տարիներ շաբունակ մեկնել են պապերը և հայրերը: Նրանց միգրացիոն ուղղությունները ներառում են Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ, Չելյաբինսկ, Սարատով, Վոլգոգրադ, Սոչի, Նիժնի Նովգորոդ, Տյումեն, Եկատերինբուրգ մարզերը: Միայն Նիժնի Նովգորոդում այդ գյուղից, շնորհիվ արտագնա աշխատանքի, մշտական բնակություն է հաստատել շուրջ 400 ընտանիք, Տյումենի մարզում՝ 200, Եկատերինբուրգում՝ 120 ընտանիք: Էթնիկ ցանցը երկրի ընտրության հարցում իր ազդեցությունն է թողնում նաև հայրենակցական սկզբունքով (հայաստանցիներ, որտեղ առանձնանում են նաև մարտունեցիներ, գյումրեցիներ, լոռեցիներ և այլն). համախմբման համար էական դեր է կատարում նրանց տարածքային ինքնությունը:

Հայաստանից արտագաղթի աշխարհագրությունը բավական ընդգրկուն է, որը, ըստ հետազոտության արդյունքների, ներառում է 35 երկիր, որից 61,0%-ը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը, 9,2%-ը՝ ԱՄՆ-ին, 7,2%-ը՝ Գերմանիային, 4,9%-ը՝ Ֆրանսիային, 2,7%-ը՝ Իսպանիային, 2,7%-ը՝ Ուկրաինային, 1,3%-ը՝ հավասարաչափ Բելգիային և Հունաստանին, իսկ 1,1%-ը՝ Լեհաստանին: Մնացած երկրներում գրանցվել է 1,0%-ից ցածր արտագաղթածների ցուցանիշ (աղ. 20):


Աղյուսակ 20.
Արտագաղթի երկիրը (%)

Երկրները	%
Ռուսաստան	61,0
ԱՄՆ	9,2
Գերմանիա	7,2
Ֆրանսիա	4,9
Իսպանիա	2,7
Ուկրաինա	2,7
Բելգիա	1,3
Հունաստան	1,3
Լեհաստան	1,1
Չինաստան	0,8
Վրաստան	0,8
Ղազախստան	0,8
Նիդեռլանդներ	0,6
Կանադա	0,6
Թուրքիա	0,5
Բելառուս	0,5
Անգլիա	0,3
Աբխազիա	0,3
Շվեյցարիա	0,3
ԱՄԷ	0,3
Հնդկաստան	0,3
Բուլղարիա	0,3
Շվեդիա	0,3
Չեխիա	0,3
Ավստրիա	0,2
Մեքսիկա	0,2
Իռլանդիա	0,2

Սիրիա	0,2
Իսրայել	0,2
Թուրքմենստան	0,2
Իտալիա	0,2
Լատվիա	0,2
Կիպրոս	0,2
Դանիա	0,2
Լիբերիա	0,2
Ընդամենը	100,0

Ըստ տարածաշրջանների խմբավորումից հետո հայերի համար արտագաղթի նախընտրելի երկիր շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը, այնուհետև նախապատվությունը տալիս են եվրոպական երկրներին, ԱՄՆ-ին և Կանադային (գծ. 6):


*Գծապատկեր 6.
Արտագաղթի երկիրը (%)*



Միգրացիայի մասին որոշում կայացնող անձն ունենում է ոչ թե մեկ, այլ մի քանի ուղղության ընտրություն: Շտրիիվ ցանցային միգրացիայի՝ միգրանտների որոշ մասը սկզբնական շրջանում բնակություն է հաստատել արտերկրի այս կամ այն քաղաքում կամ գյուղում, բայց, բավարարված չլինելով, ցանցն աջակցել է տեղափոխվել այլ բնակավայր: Հետազոտության արդյունքներով՝ արտերկրում բնակություն հաստատածների 2,2%-ն առաջիկա մեկ տարվա համար մտադրություն է հայտնել շարունակել մնալ այդ

երկրում, բայց փոխել բնակավայրը, իսկ 0,5%-ը՝ տեղափոխվել այլ երկիր՝ բնակության: Որպես տեղափոխվելու պատճառ նշել են աշխատանք և բարձր եկամուտներ ունենալու հնարավորությունը, իսկ այդ հարցում ակնկալում են նաև ցանցի աջակցությունը (գծ. 7):

*Գծապատկեր 7.
Առաջիկա մեկ տարվա համար տեղափոխվելու
մտադրությունները (%)*



Այսպիսով, Հայաստանից բնակչության արտագաղթը պայմանավորված է փոխկապակցված մի շարք պատճառներով, իսկ հարցվածների գերակշիռ մեծամասնությունն այն համարել է աշխատանքի կամ բավարար եկամուտ ապահովող աշխատատեղերի բացակայությունը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ վերջինս առավել իրական է դառնում այն ժամանակ, երբ արտերկրում առկա է միզբացիոն ցանցը, որն արագացնում և հնարավորություններ է ստեղծում ծագման երկրից բնակչության արտագաղթի և այդ հարցում նրանց որոշումների կայացման վրա: Արտերկրում միզբացիոն ցանցի առկայությունը ենթադրում է Հայաստանից էմիգրացիայի գործընթացի աստիճանական ընդլայնում և նոր ընտանիքների ներգրավում: Ցանցի կողմից մարդկային և նյութական ռեսուրսների տրամադրումն իր ազդեցությունն է թողնում Հայաստանից արտագաղթի ուղղությունների վրա:

ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՑԱՆՑԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

3.1. Միգրանտների առջև ծառայած խնդիրները

Այս գլխում քննարկելու ենք այն հարցը, թե արտերկրում մշտական բնակության համար ինչ աջակցություն են ցուցաբերել նրանց պետական կամ մասնավոր կառույցները և ոչ ֆորմալ ցանցային կապերը: Միգրացիայի գործընթացը դառնում է արդյոք ավելի ինստիտուցիոնալացված, թե՛ այդ հարցում շարունակում են սպասվինել համայնքի ցանցային օգնությանը: Աղյուսակ 21-ի վիճակագրական ցուցանիշներից կարող ենք եզրակացնել, որ արտերկիր մեկնելիս նրանց գերակշիռ մեծամասնությունը՝ 63,3%-ը, օգտվել է այնտեղ բնակվող բարեկամների, ընկերների աջակցությունից (52,7%-ը՝ արտերկրում, իսկ 10,8-ը՝ Հայաստանում): Ըստ նույն աղյուսակի՝ այդ հարցում ոչ թե մեծ է ՀՀ-ում և արտերկրում գտնվող պետական ծառայությունների, այլ ոչ ֆորմալ ցանցային հարաբերությունների դերը: Ելնելով այդ ցուցանիշներից՝ կարող ենք նշել, որ ցանցով պայմանավորված միգրացիան դուրս է մտնում պետական կառավարման քաղաքականությունից, իսկ գործընթացը դժվարությամբ է վերահսկողության ենթարկվում: Ինչ վերաբերում է Հայաստանում և արտերկրում գործող մասնավոր ընկերությունների ծառայություններից օգտվելուն, սպա դրանցից օգտվողների թիվը կազմել է ամենացածր տոկոսը (13,2%): Այդ կազմակերպությունները, այդ թվում՝ նաև իրավական, տրամադրում են տարատեսակ ծառայություններ, բայց արտերկիր մեկնելու համար քչերն են օգտվել դրանցից (աղ. 21):

Աղյուսակ 21.

Ի՞նչ աջակցություններից են օգտվել («այո» պատասխանները) (%)

Ծառայություններ	%
Օգտվել են պետական ծառայություններից ՀՀ-ում (դեսպանատուն, պետական ծրագրեր և այլն)	24,7
Օգտվել են պետական ծառայություններից ընդունող երկրում	22,5
Օգտվել են մասնավոր ընկերությունների ծառայություններից Հայաստանում	4,9
Օգտվել են մասնավոր ընկերությունների ծառայություններից ընդունող երկրում	8,3
Օգտվել են Հայաստանում բնակվող բարեկամների/ընկերների աջակցությունից	10,6
Օգտվել են արտերկրում բնակվող բարեկամների/ընկերների աջակցությունից	52,7

Աղյուսակ 22.

Արտերկրում ունեցած դժվարությունները (%)

Դժվարությունները	%
Աշխատանք գտնելու/աշխատելու	17,6
Բնակարան գտնելու	18,0
Անհրաժեշտ փաստաթղթային ձևակերպումների	17,9
Ֆինանսական/սյութական	19,5
Նոր ծանոթությունների հաստատման	6,4
Լեզվի չիմացության	2,0
Առողջապահական	0,5
Կրթական	0,1
Մշակութային ադապտացիայի	0,1
Ոչ մի	16,2
Դժվարանում եմ պատասխանել	1,8
Ընդամենը	100,0

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ արտերկիր մեկնելուց հետո միգրանտների 83,8%-ն այնտեղ ունեցել է որոշակի դժվարություններ, այդ թվում՝ ֆինանսական, ինչպես նաև վարձով բնակարան գտնելու, անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման, շփվելու, լեզվի չիմացության հետ կապված (աղ. 22):

Արտերկրում միգրանտների առջև ծառայած խնդիրներին անդրադարձել են նաև հարցմանը մասնակցած փորձագետները: Այդ առումով ներկայացնենք ՏԿԵՆ Միգրացիոն ծառայության փորձագետներից մեկի կարծիքը. «*Խնդիրները շատ փարբեր են: Եթե էլի իմ փորձից ասեմ, բայց արդեն հետին հայացքով, երբ արդեն վերադարձողների հետ ենք աշխատում կամ հայրենադարձների, եթե իրենց աչքերով նայենք իրենց խնդիրներին, ապա բոլոր հնարավոր և անհնար խոչընդոտներին իրենք կարող են բախվել: Էլի կախված երկրից՝ փարբեր են: Ինչքանով է երկիրն ավելի բաց՝ միգրանտներին ընդունելու, ինչքանով էլ երկրում կա համայնքների, միգրացիոն ցանցի առկայություն... և դրանից կախված արդեն խնդիրներն էլ են շատ փարբեր: Ինձ համար իրազեկման պակասն է կարևոր, ես խնդրից եմ գալիս, այսինքն՝ որտեղից են գալիս առաջանում մյուս խնդիրները: Իսկ մնացած խնդիրները՝ փաստաթղթերի խնդրի են բախվում, աշխատանքի, բժշկական հարցերի, կրթության: Բոլոր տեսակի խնդիրներին կարող են բախվել, եթե չգիտեն, թե էդ հարցերին ինչպես պետք է մոտենալ, ինչպես պետք է լուծել» (փորձագիտական հարցազրույց ՏԿԵՆ Միգրացիոն ծառայության մասնագետի հետ):*

Միգրանտների առջև ծառայած դժվարությունները, ըստ երկրների, ունեն որոշ առանձնահատկություններ. այսպես, ԱՄՆ, Կանադա և եվրոպական երկրներ մեկնածները համեմատաբար դժվարությամբ են աշխատանք գտել, բախվել են նաև անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման խնդիրների: ՌԴ մեկնածները դժվարությամբ են վարձով բնակարան գտել, սկզբնական շրջանում ունեցել են ֆինանսական խնդիրներ: Ֆինանսական դժվարությունների մասին նշել են նաև ԱՄՆ և Կանադա ու եվրոպական երկրներ մեկնածները (աղ. 23):

Աղյուսակ 23.

Արտերկրում ունեցած դժվարությունները՝ ըստ երկրների (%)

Դժվարությունները արտերկրում	Արտագաղթի երկիրը				
	Ռուսաստան	ԱՊՀ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	Այլ երկրներ
Աշխատանք գտնելու/աշխատելու	17,0	13,5	19,3	19,8	12,5
Բնակարան գտնելու	21,7	5,4	14,6	11,3	6,3
Անհրաժեշտ փաստաթղթային ձևակերպումների/կարգավորումների	17,1	16,2	21,5	13,2	18,8
Ֆինանսական/սյուսկական	20,3	16,2	18,6	18,9	15,6
Նոր ծանոթությունների հաստատման	5,0	8,1	8,4	8,5	9,4
Լեզվի չհմացության	0,8	0,0	4,7	1,9	6,3
Առողջապահական	0,5	2,7	0,4	0,9	0,0
Կրթական	0,2	0,0	0,0	0,0	0,0
Մշակութային ադապտացիայի	0,0	0,0	0,4	0,0	0,0
Ոչ մի	15,8	35,1	10,6	22,6	31,3
Դժվարանում եմ պատասխանել	1,8	2,7	1,5	2,8	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Արտերկիր մեկնելուց հետո այնտեղ հաստատվելու նպատակով միգրանտների մոտ մեկ հինգերորդը դիմել է տեղական իշխանություններ՝ ապաստան հայցելու իրավունքի համար:

Աղյուսակ 24-ում բերված մյուս ցուցանիշներից կարող ենք եզրակացնել, որ հայ համայնքին որևէ խնդրի լուծման ակնկալիքով դիմած միգրանտների թիվը շատ փոքր է՝ պայմանավորված փոխվստահության, տեղեկատվության, միգրանտների փորձի պակասով:

Աղյուսակ 24.

Ի՞նչ քայլերի են դիմել «այո» պատասխանները) (%)

Քայլերը	%
Դիմել են տեղական իշխանություններ՝ ապաստան հայցելու իրավունքի համար	19,7
Դիմել են տեղի հայ համայնքին՝ որևէ խնդրի լուծման ակնկալիքով	3,9
Դիմել են բարեգործական միություններ / կազմակերպություններ	1,6

3.2. Սփյուռքի միգրացիոն ցանցի դերը արտերկրում միգրանտների աջակցության հարցում

Սոցիալական ցանցը կատարում է նաև աջակցող և ուղեկցող գործառույթ, և այդ առումով, ինչպես նշում է Դ. Մասսեին, արտերկրում հաստատված միգրանտների և նրանց հայրենիքում գտնվող հարազատների, ընկերների, հարևանների միջև կապերը հիմնվում են անուղղակի պարտականությունների վրա¹⁴: Այդ անուղղակի պարտականություններից են նաև արտերկիր մեկնելու աջակցությունը և ցանցի միջոցով արտերկրում նոր հարաբերությունների կառուցումը, ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուցիոնալ կառույցներ մուտք գործելու հնարավորությունների ստեղծումը:

Հետազոտության արդյունքներով՝ ցանցը նոր միջավայրում օգնում է լուծել նորեկների առջև ծառայած կարիքները և արտերկրում հեշտացնում է նրանց մուտքը սոցիալ-տնտեսական մի շարք ոլորտներ: Նրանք, հենվելով ավելի վաղ այդ երկիր մեկնած ազգականների, ընկերների, ծանոթների ձևավորած ֆորմալ և ոչ ֆորմալ կապերի վրա, հնարավորություն են ունենում ստանալու տեղեկատվություն, նյութական և ոչ նյութական աջակցություն: Ցանցը դառնում է ռեսուրսների փոխանակման կարևոր միջոց:

14 Messey D., Arango J., Hugo G., Kouaouci A. Pellegrino and Tayllor E., 1993, Theories of International Migration: A Review and Appraisal, Population and Development Review. Vol. 19. No. 3, p. 449, <https://www.jstor.org/stable/2938462?origin=crossref>

Այդ առումով տեղին է «Մի ունեցիր հարյուր ռուբլի, այլ ունեցիր հարյուր բարեկամ» հայտնի ասացվածքը, որը լավագույնս է բնութագրում սոցիալական ցանցի դերը: Միգրանտների առաջին սերունդը, որպես սոցիալական ցանցեր ձևավորող և վերարտադրող, նորեկների համար դառնում է կարևոր մարդկային ռեսուրս. այդ միջոցով նրանք ստանում են «թույլտվություն»՝ այլ կառույցներ մուտք գործելու համար: Սփյուռքի միգրացիոն ցանցը նպաստում է Հայաստանից միգրանտների տեղափոխման ծախսերի նվազեցմանը, ռիսկերի կրճատմանը և արտերկրում ծառայած խնդիրների հաղթահարմանը: Այն հարցին, թե «Խնդրում եմ նշել՝ ո՞ր հարցերում են աջակցություն ստացել Ձեր հարազատները», մասնակիցների 44,0%-ը նշել է, որ արտերկրում նրանց օգնությամբ գտել է աշխատանք, 36,3%-ը՝ բնակարան, 32,2%-ին աջակցել են նոր ծանոթությունների հաստատման հարցում, 30,7%-ը որոշ ժամանակ բնակվել է հարազատների մոտ, 27,4%-ը ստացել է անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման հետ կապված օգնություն, 25,8%-ը՝ նյութական աջակցություն, 18,9%-ը՝ ուղևորության գործընթացի կազմակերպման հարցում աջակցություն և այլն (աղ. 25):

Աղյուսակ 25.

Արտերկրում միգրանտներին ցուցաբերած աջակցության ձևերը (%)

Աջակցության ձևերը	%
Աշխատանք գտնել	44,0
Բնակարան գտնել	36,3
Համատեղ բնակվել	30,7
ՀՀ-ում անհրաժեշտ ձևակերպումներ	9,2
Արտերկրում անհրաժեշտ ձևակերպումներ	27,4
Ուղևորության գործընթաց	18,9
Նյութական	25,8
Նոր ծանոթությունների հաստատում	32,2
Այլ	1,6
Աջակցություն չեն ստացել	31,0
Դժվարանում եմ պատասխանել	4,5

Ըստ երկրների՝ միգրանտներին ցուցաբերած աջակցության ձևերի մասին աղյուսակ 26-ում ներկայացված տվյալներից կարող ենք եզրակացնել, որ ցանցի կողմից օգնություն չստացածների թիվը կազմել է 9%-14%: Մնացածներին մեկնման երկրներում ցանցը ցուցաբերել է տարբեր տեսակի աջակցություն:

Աղյուսակ 26.

Աջակցության ձևերը՝ ըստ երկրների (%)


Աջակցության ձևերը	Արտագաղթի երկիրը				
	Ռուսաստան	ՄԴՀ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	Այլ երկրներ
Աշխատանք գտնել	19,3	20,6	11,0	13,8	16,0
Բնակարան գտնել	15,4	14,7	10,5	11,8	14,0
Համատեղ բնակվել	11,8	11,8	11,6	12,8	6,0
ՀՀ-ում անհրաժեշտ ձևակերպումներ	2,7	1,5	5,2	5,1	4,0
Արտերկրում անհրաժեշտ ձևակերպումներ	9,5	8,8	13,3	9,7	14,0
Ուղևորության գործընթաց	5,4	5,9	9,9	11,3	10,0
Նյութական	9,5	7,4	10,5	11,8	8,0
Նոր ծանոթությունների հաստատում	12,9	14,7	11,0	10,3	14,0
Այլ	0,6	0,0	0,6	1,0	0,0
Աջակցություն չեն ստացել	11,6	11,8	13,5	9,2	14,0
Դժվարանում եմ պատասխանել	1,1	2,9	2,8	3,1	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Ըստ տոկոսային հարաբերության և տարեթվերի՝ աջակցող այդ անձանց 36,4%-ը Հայաստանից արտերկրում բնակության է տեղափոխվել 1992-2000 թթ., 21,1%-ը՝ 2001-2011 թթ., 8,2%-ը՝ 2012-2020 թթ., 18,1%-ը՝ 1971-1991 թթ., իսկ 2,5%-ը՝ 1940-1970-ական թթ.: Հետևաբար, խորհրդային շրջանում ձևավորված հայկական ցանցը տոկոսային հարաբերությամբ շատ քիչ դեր է ունեցել այդ հարցում,

իսկ Հայաստանից արտաքին տարածքային ակտիվ տեղաշարժերին նպաստել են հետխորհրդային տարիներին արտերկրում հաստատված միգրանտները:

Գծապատկեր 8.

Աջակցող ցանցի՝ արտերկրի տեղափոխման տարեթիվը (%)



Հայաստանից արտերկիր բնակության մեկնածների համեմատաբար մեծ մասը բաժին է ընկնում 1992-2001 թթ., որը համարվում է հանրապետությունից զանգվածային արտագաղթի շրջան (1992-1994 թթ.՝ մոտ մեկ միլիոն, 1995-2001 թթ.՝ 250 հազ. մարդ)¹⁵, որոնք հետագայում դարձել են աջակցող ցանցեր նոր միգրանտների համար: Ըստ երկրների՝ այդ տարիներին ՌԴ մեկնածների և աջակցողների թիվը կազմել է 39,5%, եվրոպական երկրներ՝ 33,3%, ԱՄՆ և Կանադա՝ 30,4% (աղ. 27):

¹⁵ Եգանյան Գ. 2020, Միգրացիոն իրավիճակը և բնակչության տեղաշարժերի կառավարման ռազմավարությունները ՀՀ-ում, Բանբեր Երևանի համալսարանի (տնտեսագիտություն) գիտական հանդես, N 3 (33), էջ 52-66:

*Աղյուսակ 27.
Ըստ երկրների աջակցող ցանցի՝
արտերկիր տեղափոխման տարեթիվը (%)*


Ե՞րբ են տեղափոխվել արտերկիր	Արտագաղթի երկիրը				
	Ռուսաստան	Վրչ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	Այլ երկրներ
1940-ական թթ. մինչև 1970-ական թթ.	2,3	5,6	1,1	0,0	16,7
1971-1991 թթ.	19,0	27,8	10,3	30,4	0,0
1992-2000 թթ.	39,5	27,8	33,3	30,4	22,2
2001-2011 թթ.	21,9	22,2	26,4	10,9	5,6
2012-2020 թթ.	7,5	0,0	9,2	13,0	11,1
Տեղացի են	1,6	0,0	2,3	0,0	22,2
Դժվարանում են պատասխանել	8,2	16,7	17,2	15,2	22,2
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Աջակցող ցանցի դերակատարների վերաբերյալ պատկերացում են տալիս գծապատկեր 9-ում բերված տվյալները, որտեղ ներկայացված են «Աջակցող անձինք ի՞նչ կապ ունեն ձեր հարազատի հետ» հարցի պատասխանները:

Այդ տվյալներից կարող ենք եզրակացնել, որ նրանք արտերկրում հաստատված ազգակիցներ են (հայր/մայր, եղբայր/քույր, որդի/դուստր, այլ ազգականներ), որոնք ցանցում ապահովում են «ուժեղ» սոցիալական կապեր: Նրանք ընդհանուրի մեջ կազմել են 64,9%: Մնացած մասի համար այնտեղ բացակայել են (կամ նրանք նպատակահարմար չեն համարել օգտվել) «ուժեղ» կապերը, և նրանց անհրաժեշտ ռեսուրսներ տրամադրել են ընկերները, գործընկերները, հարևանները, ծանոթները (32,1%): Դրանք բնութագրվում են որպես «թույլ» սոցիալական կապեր, և երբեմն վիճարկ-

վում է նաև դրանց ամրության խնդիրը¹⁶: Այդ առումով Մ. Ամբրոզինին հակված է կարծել, որ թեկուզ թույլ սոցիալական կապիտալը, ընդհանուր առմամբ, ավելի կարևոր է, քան միգրանտի կրթական կարգավիճակը¹⁷:

Գծապատկեր 9.
Արտերկրում աջակցող ցանցի անձանց կապը
Նոր միգրանտների հետ (%)



Աջակցող ցանցի անձանց կապը նոր միգրանտների հետ, ըստ արտերկրների, ներկայացված է աղյուսակ 28-ում, որտեղ հիմնականում գերակայում են նրանց միջև գոյություն ունեցող ազգակցական հարաբերությունները:

Նոր միգրանտների աջակցության հարցում փորձագետները կարևորել են ավանդական սիյուոքի դերը. «Ես կարծում եմ, որ հիմնականում ավանդական սիյուոքն է, որ ունի դրական ազդեցություն՝ օգնելու արտագաղթած մեր քաղաքացիներին, որովհետև ունեն կապեր իշխանական, պետական կառույցների հետ: Ունեն մեծ ավանդ այդ երկրներում ներդրված՝ որպես քաղաքացիներ,

16 Granovetter, Mark S. 1983, The Strength of Weak Ties: A Network Theory Revisited. Sociological Theory 1, pp. 201-233.

17 Ambrosini M. 2017, Why irregular migrants arrive and remain: the role of intermediaries. Journal of Ethnic and Migration Studies, 43 (11), pp. 1813-1830.

որպես աշխատասեր մարդիկ, իսկ նոր ափյուռքը էն գործոնը չի, ինչ որ ունի ավանդական ափյուռքը» (փորձագիտական հարցազրույց, պարզամավոր, ԱԺ աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ):

Աղյուսակ 28.

Աջակցող ցանցի անձանց կապը նոր միգրանտների հետ՝ ըստ երկրների (%)

Աջակցող անձինք	Արտագաղթի երկիրը				
	Ռուսաստան	ՄՊՀ երկրներ	Եվրոպական երկրներ	ՍՄԸ և Կանադա	Այլ երկրներ
Հայր / մայր	9,8	11,1	13,8	15,2	16,7
Որդի / դուստր	2,3	0,0	3,4	13,0	0,0
Հարս / փեսա	2,0	0,0	1,1	0,0	0,0
Եղբայր / քույր	18,3	16,7	11,5	17,4	16,7
Ընկեր / ընկերուհի	19,9	11,1	24,1	17,4	11,1
Գործընկեր / կոլեգա	4,6	5,6	3,4	4,3	22,2
Այլ ազգական	35,3	44,4	27,6	28,3	27,8
Ծանոթ / հարևան	6,5	11,1	12,6	2,2	0,0
Այլ	1,3	0,0	2,3	2,2	5,6
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Աջակցող ցանցի անդամները նոր միջավայրում դառնում են միգրանտների սոցիալ-տնտեսական կյանքի կազմակերպման, այլէթնիկ խմբերի հետ վարքագծային և կայուն մշակութային տարբերությունների ձևավորման կարևոր պայմաններից մեկը: Էթնիկ ցանցը միգրանտների և տեղի համայնքի միջև ապահովում է սակ շփումներ՝ խթանելով ազգային մշակույթի, սովորույթների վերարտադրությունը: Այն հարցին, թե «Արտերկիր տեղափոխվելուց հետո ի՞նչ փոխհարաբերություններ ունեն այստեղ բնակվող հա-

րագատների հետ», հարցվածների միայն 5,3%-ն է նշել, որ շփումները բացակայում են, իսկ մնացածների կարծիքով՝ միգրանտների 60,4%-ը շփվում է ամենօրյա ռեժիմով, 24,6%-ը հանդիպում է միայն տոնական օրերին և ընտանեկան միջոցառումներին, իսկ 5,9%-ն ունի ֆորմալ հարաբերություններ (աղ. 29):

Աղյուսակ 29.

Արտերկրում հարագատների հետ ունեցած փոխհարաբերությունները (%)

Փոխհարաբերությունները	%
Ունեն գրեթե ամենօրյա շփում, մտերիմ են	60.4
Հանդիպում են միայն տոնական օրերին, ընտանեկան միջոցառումներին	24.6
Հանդիպում են աշխատանքի բերումով, ֆորմալ փոխհարաբերությունների մեջ են	5.9
Ներկայումս չեն շփվում/գրեթե չեն շփվում	5.3
Դժվարանում են պատասխանել	3.8
Ընդամենը	100.0

Սոցիալական ցանցի դերը նոր միգրանտների համար կարևոր է նաև «սոցիալական կապիտալի» տեսանկյունից, որը Պ. Բուրդիեն սահմանել է որպես փաստացի կամ հավանական ռեսուրսներ՝ կապված ծանոթությունների վրա հիմնված կայուն կամ քիչ ինստիտուցիոնալ հարաբերությունների հետ¹⁸: Դրա միջոցով նոր միգրանտներն ընդունող երկրում կառուցում են նոր հարաբերություններ և մուտք գործում ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուցիոնալ կառույցներ: Ընդհանուր առմամբ, ցանցի առկայությունը նվազեցնում է նոր միգրանտների տեղաշարժերի ծախսերը, նպաստում է էմիգրացիայի նոր հոսքերի հնարավորությունների մեծացմանը և միգրացիայից ակնկալվող օգուտները: Արտերկրում ավելի վաղ


18 Bourdieu, P. 1985, The Forms of Capital. In Handbook of Theory and Research for the Sociology of Education, edited by J. G. Richardson, New York: Greenwood Press. pp. 241–258.

հաստատված միգրանտներն արտագաղթի մտադրություններ ունեցող իրենց հարազատների և ընկերների համար նվազեցնում են այդ գործընթացի հետ կապված ծախսերը՝ նրանց տրամադրելով նյութական և ոչ նյութական որոշակի ռեսուրսներ: Ցանցը նպաստում է նաև միգրացիայի հետ կապված ռիսկերի կրճատմանը՝ ապահովելով նոր միգրանտների համար անվտանգային խնդիրների և դրսի ճնշումների մեղմացումը:

Հարցման մասնակիցների 34,8%-ը, գնահատելով սոցիալական ցանցի դերը արտերկիր մեկնելու հարցում, արտահայտել է այն կարծիքը, որ եթե արտերկրում գտնվող հարազատները/ընկերները չաջակցեին, ապա նրանց ընտանիքի անդամները ինքնուրույն չէին կարող մեկնել արտերկիր՝ բնակության (գծ. 10):

Գծապատկեր 10.

Եթե արտերկրում գտնվող բարեկամները/ընկերները չաջակցեին, նրանք կարո՞ղ էին ինքնուրույն մեկնել տվյալ երկիր՝ բնակության (%)



Ներկայացված կարծիքները համադրելով ըստ մեկնման երկրների ցուցանիշների հետ՝ կարող ենք փաստել, որ հարցվածների գերակշիռ մեծամասնությունը՝ 65,2 %-ը, նշել է, որ եթե չլիներ ԱՄՆ-ում և Կանադայում բնակվող հարազատների/ընկերների աջակցությունը, ապա նրանք ինքնուրույն չէին կարող մեկնել այդ երկրներ:

Աղյուսակ 30.

Ինքնուրույն բնակության մեկնելու կարծիքները՝ ըստ երկրների (%)

Կարող էին ինքնուրույն մեկնել բնակության	Արտագաղթի երկիրը				
	Ռուսաստան	ՄՂՀ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	Այլ երկրներ
Միանշանակ ոչ	13,9	12,5	28,6	37,5	31,3
Հավանաբար ոչ	25,6	43,8	22,1	25,0	18,8
Հավանաբար այո	37,6	18,8	18,2	20,0	25,0
Միանշանակ այո	19,5	25,0	20,8	15,0	25,0
Դժվ. եմ պատ.	3,4	-	10,4	2,5	-
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0

Այսպիսով, միգրացիոն ցանցը նվազեցնում է տեղաշարժերի ծախսերը և ռիսկերը և բարձրացնում միգրացիայից ակնկալվող օգուտները: Ցանցը նոր միջավայրում օգնում է լուծել նորեկ միգրանտների առջև ծառայած մի շարք կարիքներ և արտերկրում հեշտացնում է նրանց մուտքը ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուցիոնալ կառույցները: Ցանցը նոր միգրանտների համար արտերկրում վերածվում է կարևոր սոցիալական կապիտալի, քանի որ տրամադրում է մարդկային և նյութական ռեսուրսներ:

ԱՐՏԱԳԱՂԹԱԾՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ

4.1. Արտագաղթածների զբաղվածության կարգավիճակը և ոլորտները

XX դարի երկրորդ կեսից սկսած՝ բնակչության զանգվածային միգրացիան դարձել է համաշխարհային հանրության կյանքի բնորոշ կողմերից մեկը: Այն, ի թիվս այլ ազդեցությունների, նաև տնտեսական ազդեցություն է թողնում ինչպես ելքի, այնպես էլ մուտքի երկրների վրա: Միջազգային փորձագիտական գնահատականներով (2000-ական թթ. սկզբի տվյալներ)՝ յուրաքանչյուր բարձրակարգ մասնագետի արտագաղթի հետևանքով պետության տնտեսության համընդհանուր կորուստները (մտավոր, նյութական, ֆինանսական) կարող են գնահատվել մինչև 1 մլն դոլար¹⁹:

Աշխատության այս բաժնում նպատակ ունենք ցույց տալ, թե վերջին երեք տասնամյակում արտագաղթի հետևանքով ինչ մարդկային կապիտալ է կորցրել Հայաստանը և ինչ ռեսուրս է ապահովել ընդունող երկրների համար:


Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ արտագաղթած չափահաս բնակչության գերակշիռ մասը՝ շուրջ 79%-ը, տնտեսապես-սոցիալապես ակտիվ խմբի անդամ է, այսինքն՝ նրանք կան տարբեր կարգավիճակներով աշխատում են մուտքի երկրներում (գործատու, ինքնազբաղված, վարձու աշխատող և ժամանակավոր աշխատանք կատարող), կան ուսանող են, և ընդամենը 21%-ն է պասիվ կարգավիճակում՝ գործազուրկ է, տնային տնտեսությանը զբաղվող և կենսաթոշակառու (գծ. 11): Եթե նույն սկզբուն-

19 «Утечка мозгов» как глобальное явление: причины и последствия. Центр гуманитарных технологий. // Электрон-ная публикация: Центр гуманитарных технологий. 05.04.2008. <https://gtmarket.ru/library/articles/1653>

քով հարցը դիտարկենք ըստ արտագաղթի երկրների, ապա այս ցուցանիշից որոշակի շեղում կնկատենք միայն ԱՄՆ-ի և Կանադայի դեպքում. այստեղ արտագաղթածների մեջ ակտիվ զանգվածը կազմում է 76%: Մնացած երկրների պարագայում այդ ցուցանիշը տատանվում է 78,8-79,7-ի միջակայքում (Ռուսաստան՝ 79,7%, ԱՊՀ երկրներ՝ 79,6%, եվրոպական երկրներ՝ 78,8%, այլ երկրներ՝ 79,5%): Նշված ցուցանիշներից կարող ենք եզրակացնել, որ հայ միգրանտներն իրենց տնտեսական ներդրումն են ունենում ընդունող երկրների համար:

Գծապատկեր 11.

Արտագաղթածների զբաղվածության կարգավիճակը (%)



Արտագաղթածների մասնագիտական նկարագրի վերլուծությունից պարզ դարձավ (գլուխ առաջին), որ նրանց շուրջ կեսը բարձր որակավորում ունեցող մասնագետներ են (հասարակական գիտություններ՝ 23,1%, ճարտարագիտություն և նոր տեխնոլոգիաներ՝ 8,2%, բժշկական մասնագիտություններ՝ 7,9%, հումանիտար գիտություններ՝ 6,6%, բնական գիտություններ՝ 2,6% և այլն): Չնայած նշված մասնագիտությունների որոշ մասը Հայաստանում մեծ պահանջարկ չունի և այդ իսկ պատճառով դժվար է մասնագիտությամբ աշխատանք գտնելը, սակայն մյուս կողմից էլ հետազոտությունը բացահայտում է, որ նրանք արտագաղթի երկրում ևս մաս-

նագիտական աշխատանք չեն կատարում: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 31-ի տվյալները, նրանց կեսից ավելին ընդգրկված է բարձր որակավորում չպահանջող ոլորտներում. դրանք են, օրինակ, սպասարկման ոլորտը՝ 20,3%, առևտուրը՝ 19,4%, շինարարությունը՝ 17,5%, տրանսպորտը՝ 8,9% և այլն: Նրանց որոշ մասը մասնագիտությամբ աշխատում է ավելի շատ կրթության, մշակույթի ոլորտում՝ 7,0%, ապա առողջապահության համակարգում՝ 5,0%:

Աղյուսակ 31.

Արտագաղթածների զբաղվածության ոլորտները՝ ըստ երկրների (%)

Աշխատանքի ոլորտները	Ընդհանուր	Ռուսաստան	ՄՊՀ՝ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	Այլ երկրներ
Սպասարկում	20,3	18,9	22,5	24,4	21,0	19,2
Առևտուր	19,4	19,5	25,0	19,9	18,5	7,7
Շինարարություն / վերանորոգման աշխատանքներ	17,5	21,8	12,5	10,2	3,7	15,4
Արտադրություն	13,7	15,6	22,5	6,8	12,4	3,9
Տրանսպորտ	8,9	10,6	5,0	4,5	8,7	3,8
Կրթություն, արվեստ, մշակույթ, սպորտ	7,0	5,2	7,5	10,2	7,4	26,9
Առողջապահություն	5,0	2,9	0,0	9,1	12,3	11,6
Հանրային ծառայություններ	3,8	3,2	0,0	6,3	3,7	7,7
ՏՏ ոլորտ	2,4	0,6	5,0	5,7	8,6	0,0
Այլ (իրավաբանություն, լրագրություն, զինված ուժեր, գյուղատնտեսություն)	1,7	1,3	0,0	2,3	3,7	3,8
Դժվարանում եմ պատասխանել	0,3	0,4	0,0	0,6	0,0	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Հարցը դիտարկելով ըստ արտագաղթի երկրների՝ ներկայացնենք որոշ ուշագրավ ցուցանիշներ: Որպես բարձր որակավորված մասնագետներ՝ նոր արտագաղթած հայերն ավելի շատ աշխատում են եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում: Օրինակ՝ առողջապահության ոլորտում այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 9,1% և 12,3% այն դեպքում, երբ ընդհանուրի ցուցանիշը 5%-ն է: Նույնը վերաբերում է SS ոլորտին. երբ ընդհանուրի դեպքում այդ զանգվածը կազմում է 2,4%, եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում՝ համապատասխանաբար 5,7% և 8,6% (աղ. 31):

Այլ երկրների պարագայում, օրինակ, անհամեմատ բարձր է կրթության ոլորտում աշխատողների տեսակարար կշիռը՝ 26,9%: Խոսքը մասնավորապես վերաբերում է Չինաստանին և Հնդկաստանին, որտեղ հայերը տեղափոխվել են կրթական ծրագրերով: Այս հարցին անդրադարձել է նաև մեր ծրագրի փորձագետներից մեկը. «Չինաստանը միգրանտ ընդունող բավական հեռանկարային երկիր է և ոչ միայն հայերի համար. շատ մեծ աշխարանքային շուկա ունի: Ինչ-որ մի շրջան եղավ, որ գնում էին այստեղ՝ անզերեն դասավանդելու: Հնդկաստանի կրթական համակարգում էլ փոփոխություններ եղան, որ մերոնք գնում են՝ հայկական դպրոցներում դասավանդելու» (հարցազրույց միգրացիայի հիմնասինդիկներով զբաղվող մասնագետի հետ, փորձագետ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունում): Կրթության, մշակույթի ոլորտում աշխատողների տեսակարար կշիռը համեմատաբար մեծ է նաև եվրոպական երկրներում (10,2%):

Ինչ վերաբերում է Ռուսաստանին և ԱՊՀ այլ երկրներին, ապա նույն աղյուսակ 31-ի տվյալներից տեսնում ենք, որ նոր արտագաղթած հայերն ընդգրկված են միջին որակավորման և մասնագիտություն չպահանջող աշխատանքներում: Ռուսաստանում, համեմատած ընդհանուր միջինի հետ, այդ ցուցանիշը համեմատաբար բարձր է շինարարության, արտադրության և տրանսպորտի (համապատասխանաբար 21,8%, 15,6% 10,6%), իսկ ԱՊՀ երկրներում՝

արտադրության, առևտրի և սպասարկման (համապատասխանաբար 22,5%, 25,0% 22,5%) ոլորտներում:

Այսպիսով, մեր ուսումնասիրության արդյունքները ցույց տվեցին, որ վերջին երեսուն տարիներին արտագաղթած հայերի մեծամասնությունը սոցիալ-տնտեսապես ակտիվ խմբում է գտնվում՝ հանդիսանալով որպես մտավոր և նյութական ռեսուրս ընդունող երկրների համար: Չնայած Հայաստանում ձեռք բերած մասնագիտությանը՝ նրանցից շատերն արտերկրում մասնագիտական աշխատանք չեն կատարում, այլ, լրացուցիչ հմտություններ ձեռք բերելով, հարմարվում են տեղի աշխատաշուկայի պահանջներին կամ ընդգրկվում մասնագիտություն չպահանջող աշխատանքներում: Իսկ, որպես մասնագետներ, նրանք ավելի շատ պահանջված են հիմնականում եվրոպական երկրների, ԱՄՆ-ի և այլ երկրների (Չինաստան, Հնդկաստան) առողջապահության, կրթության և ՏՏ ոլորտներում:

4.2. Արտագաղթածների իրավական կարգավիճակը

Արտագաղթածների զբաղվածության հարցն ուղղակիորեն կապված է այն փաստի հետ, թե ինչ իրավական կարգավիճակ ունեն ընդունող երկրում, քանզի գիտենք, որ, առանց տվյալ երկրում աշխատանքի թույլտվության, հնարավոր չէ գրանցված աշխատանք կատարել: Կամ պարզ է, որ արդեն քաղաքացիություն ունեցող անձանց համար ավելի հեշտ է աշխատանք գտնել մուտքի երկրներում:

Ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրության արդյունքները, արտագաղթածների կեսից ավելին՝ 62,6%-ը, ձեռք է բերել ընդունող երկրի քաղաքացիություն: Այդ ցուցանիշն ամենաբարձրն է ՌԴ-ի և ամենացածրը՝ այլ երկրների պարագայում՝ համապատասխանաբար 70,5%, 38,9% (աղ. 32):

Աղյուսակ 32.

Արտագաղթածների իրավական կարգավիճակը՝ ըստ երկրների (%)

Կարգավիճակը	Ընդհանուր	Ռուսաստան	ՎՊՀ երկրներ	Եվրոպական երկրներ	ՍՄԵ, Կանադա	Այլ երկրներ
Տվյալ երկրի քաղաքացի	62,6	70,5	59,2	42,5	57,3	38,9
Երկարաժամկետ բնակվելու թույլտվություն	24,1	17,3	38,8	37,1	33,3	41,7
Կարճաժամկետ բնակվելու թույլտվություն	11,5	11,6	2,0	14,1	8,5	13,8
Ուսանող / համալսարանում հետազոտող	0,7	0,3	0,0	2,1	0,0	5,6
Ապաստան փնտրող	0,2	0,3	0,0	0,4	0,0	0,0
Փախստականի պաշտոնական կարգավիճակ	0,8	0,0	0,0	3,8	0,0	0,0
Չբուսաշրջության վիզա	0,1	0,0	0,0	0,0	0,9	0,0
Ընդամենը	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0

Պետք է նշել, որ այս հարցն ուղղակիորեն կապված է տվյալ երկրում բնակվելու տարիների հետ: Այսպես, նշենք, որ 1988-1991 թթ. տեղափոխվածների 94,9%-ն արդեն ձեռք է բերել ընդունող երկրի քաղաքացիություն, իսկ 2018-2021 թթ. տեղափոխվածների՝ միայն 25,4%-ը:

Վերջին տասը տարիներին արտերկիր տեղափոխված հայերն ավելի շատ ձեռք են բերել երկարաժամկետ կամ կարճաժամկետ բնակվելու թույլտվություն, ունեն ուսանողի կամ փախստականի կարգավիճակ: Վերջինս վերաբերում է միայն եվրոպական երկրներին, և այս հարցի հետ կապված՝ ծրագրի փորձագետն իր դիտարկումն է անում. «Եվրոպայում Սփյուռքի դերակատարումը շարքիչ է: 200000 ապաստան հայցողները Եվրոպային է բաժին ընկել, և ամբողջ Եվրոպան էս հոսքով է ձևավորվել, համենայնդեպս, 60–70 տոկոսը՝ հասարակ: Իսկ էդ հոսքը ո՛չ Սփյուռքի հետ կապ

ունի, ո՛չ սոցիալական ցանցի հետ կապ ունի, ուղղակի մարդիկ փախչում են երկրից այս հեշտ ճանապարհով» (դասախոս, ԵՊՀ Կրթնապահության ֆակուլտետ, միգրացիայի հարցերով փորձագետ):

Ուսանողի կարգավիճակն ավելի շատ վերաբերում է այլ երկրներին, ինչպես նշեցինք վերևում, մասնավորապես, Հնդկաստանին և Չինաստանին, որտեղ հայերը մեկնում են երկարաժամկետ կրթական ծրագրերով: Ընդհանուր առմամբ, 5,3% դեպքերում հայ միգրանտները մուտք են գործել այլ երկրներ, այդ թվում՝ եվրոպական և ամերիկյան երկրներ, ուսանողի/հետազոտողի կարգավիճակով, իսկ տարիներ անց այդ կարգավիճակում մնացել է ընդամենը 0,7%-ը:

Կարգավիճակի հարցում հայ միգրանտների ունեցած հաջողությունները ցույց տալու համար ներկայացնենք նաև այլ տվյալներ. ընդունող երկիր մուտք գործելիս ամենաշատ հանդիպող կարգավիճակը եղել է կարճաժամկետ բնակվելու թույլտվությունը՝ 27,8%, ապա աշխատանքի թույլտվությունն (22,6%) ու երկարաժամկետ բնակվելու թույլտվությունը (20,7%): Սկզբնական շրջանում միայն 7,2% դեպքերում են ունեցել ընդունող երկրի քաղաքացիություն, այժմ՝ 62,6%: Կարող ենք եզրակացնել, որ նոր միգրանտների մեծամասնությունը լուծել է նաև կարգավիճակի հետ կապված հարցերը և ինտեգրվել ընդունող երկրին նաև իրավական տեսանկյունից:

ՑԱՆՑԸ ԵՎ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5.1. Սփյուռքի համայնքային կառույցների և նոր միգրանտների փոխառնչությունները

Հետխորհրդային Հայաստանից բնակչության աճող միգրացիոն հոսքերը տարբեր երկրներում առաջացնում են մի շարք խնդիրներ ոչ միայն ընդունող երկրների համար, այլև իրենց՝ միգրանտների հետագա հարմարման, ինտեգրման հարցերում: Այս առումով սփյուռքում մեծ դերակատարություն ունեն համայնքային կառույցները: Սակայն հարկ է նշել, որ հայկական սփյուռքի համայնքները բազմազան են, և այդ բազմազանությունն ավելի ընդգծվեց, երբ համալրվեց նոր արտագաղթած հայերով: Միգրացիայի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների գնահատականներով՝ 1988-2019 թթ. Հայաստանից արտաքին միգրացիոն բացասական մնացորդի մեծությունը կազմել է շուրջ 1600-1700 հազար մարդ²⁰, և այդ տեղաշարժերի 90%-ը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ ուղղվել է Ռուսաստանի Դաշնություն, իսկ մնացածը՝ ԱՊՀ այլ երկրներ, եվրոպական երկրներ, ԱՄՆ, Կանադա և այլն²¹: Բերված վիճակագրական տվյալները փաստում են, որ Հայաստանից արտագաղթի պատճառով արտերկրի հայ ավանդական համայնքների կողքին հաստատվում են միգրանտների նոր խմբեր, որոնք հետագայում ձևավորում են առաջիններից տարբերվող սոցիալ-մշակութային նոր տարածք: Ընդհանուր առմամբ, սկզբնական շրջանում միգրանտների մոտ տեղի է ունենում սոցիալական իրա-

20 Եզանյան Գ. 2020, Միգրացիոն իրավիճակը և բնակչության տեղաշարժերի կառավարման ռազմավարությունները ՀՀ-ում, Բանբեր Երևանի համալսարանի (տնտեսագիտություն) գիտական հանդես, N 3 (33), էջ 52-66:

21 Միգրացիա, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2020, https://www.armstat.am/file/article/demog_2020_7.pdf (հասանելի է՝ 31.03.2022):

կանության ընկալման վերախնաստավորում, որը նոր միջավայրում հանգեցնում է խմբային կենսաձևի²² և ներփակման գործընթացների: Այս երևույթներն առկա են նաև հայ նոր միգրանտների մոտ, որը պարզվել է մեր ուսումնասիրության արդյունքում:

Աղյուսակ 33.

Հայ համայնքի հետ առնչության ձևերը՝ ըստ արտագաղթի երկրի (%)

Առնչության ձևերը	Ընդհանուր	Արտագաղթի երկիրը		
		Ռուսաստան	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա
Անդամակցում են որևէ համայնքային կազմակերպության	6,3	5,3	6,6	9,7
Երեխաները հաճախել են կիրակնօրյա դպրոց	8,9	7,2	9,8	16,1
Հայ համայնքը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել	2,8	2,7	4,1	3,2
Հայ համայնքը ոչ ֆինանսական աջակցություն է ցուցաբերել	6,4	3,4	12,3	9,7
Մասնակցել են համայնքային միջոցառումներին	26,9	24,1	32,0	33,9
Մասնակցել են հայ համայնքի կազմակերպած ակցիաներին, ցույցերին	21,3	17,0	29,5	37,1
Մասնակցել են հայ համայնքի կազմակերպած դրամահավաքներին	32,9	30,5	34,4	54,8

Այսպես, նոր միգրանտների և սփյուռքի գործող կառույցների հետ հարաբերությունների հարցը պարզելու նպատակով հարցազրույցի մասնակիցներին տրված «Խնդրում եմ, ասացե՛ք, թե ինչպե՛ս են կապված տեղի հայկական համայնքի հետ» հարցի պատասխաններից կարելի է եզրակացնել, որ այն կրում է հատվածային բնույթ,

22 Brubaker R. 2002, Ethnicity without groups, University of California (Los Angeles), European Journal of Sociology, 43 (2), pp. 163-189.

և մի քանի հարցերի շուրջ է, որ համագործակցության այդ ցուցանիշը բարձր է: Ինչպես ցույց են տալիս քանակական տվյալները, արտագաղթածների՝ *համայնքային որևէ կազմակերպությանն անդամակցելու* միջին ցուցանիշը չի գերազանցել 6,3%-ը (աղ. 33): Համայնքային կառույցներին ֆորմալ անդամակցելու ցուցանիշը համեմատաբար բարձր է ԱՄՆ-ում և Կանադայում (9,7%): Եվրոպական երկրներում այն կազմում է 6,6%, ամենացածրը ՌԴ-ում է՝ 5,3%:

Այս տվյալներից կարող ենք եզրակացնել, որ նրանց անդամակցությունն ավանդական կառույցներին թույլ է՝ կապված դրանց պահպանողական գործունեության, միգրանտների՝ համայնքային կյանքի մասնակցության փորձի պակասի, ինչպես նաև իրենց սոցիալական ցանցերում մնալու հանգամանքի հետ, որը հանգեցնում է նրանց մոտ խմբային, իսկ որոշ գնահատականներով՝ նաև անհատականացված գործելաոճի: Նման դիտարկում է արել նաև ծրագրի փորձագետներից մեկը. «...Որոշ դեպքերում՝ սահմանափակ է լինել անհատ, քան թե համայնքի ներկայացուցիչ, որն էլ բերում է համայնքից կորվելուն: Եվ այսօրվա Սիյուոքը դառնում է անհատների հավաքածու, որի անդամներն ունեն հայկական ազգանուն, այլ ոչ թե հերցեղասպանական Սիյուոք» (փորձագիտական հարցազրույց ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիայի հարցերով զբաղվող դասախոսի հետ):

Ամերիկյան և եվրոպական երկրների պարագայում նաև ավանդական սիյուոքի և նոր արտագաղթածների արժեքային և աշխարհայացքային տարբերությունն է պատճառը, որ վերջիններս չեն ինտեգրվում սիյուոքի համայնքային կազմակերպություններին: Այդ կարծիքն առկա է նաև փորձագիտական գնահատականներում. «Ավանդական սիյուոքն արժեքային ուրիշ համակարգ ունի ձևավորած, քան նոր սիյուոքը: Այդ առումով իրենց մոտ անտրագոնիստական բաներ կան, որը գուցե թե սոցիալ-մշակութային ադապտացիային բացարձակապես չի նպաստում» (հարցազրույց միգրացիայի հիմնասինդիկներով զբաղվող մասնագետի հետ՝

փորձագետ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունում):

Համայնքային կազմակերպություններին ֆորմալ անդամակցելու ցուցանիշը, ինչպես արդեն նշեցինք, ամենացածրն է ՌԴ-ում (աղ. 33), որտեղ համայնքային կառույցները չունեն հարուստ պատմություն և ձևավորվել են վերջին 30 տարիների ընթացքում (օրինակ՝ Ռուսաստանի հայերի միությունը): Միայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանի հայությունը կանգնեց համայնքային միավորներ ձևավորելու անհրաժեշտության առաջ, քանզի խորհրդային շրջանում ՌԴ հայությունն իրեն սփյուռք չէր ընկալում այն պատճառով, որ հայության հայրենաբնակ հատվածի հետ միասին հանդիսանում էր մեկ պետության՝ ԽՍՀՄ-ի քաղաքացի²³: Համայնքային ինստիտուտների ձևավորումը ՌԴ-ում ընթացավ հայաշատ բնակավայրերում համայնքային մարմինների ստեղծման ճանապարհով: Այսօր, սակայն, միգրանտները Ռուսաստանը մոտ են ընկալում մշակութային ընդհանրությունների տեսանկյունից, որի հետևանքով համայնքային կազմակերպություններին անդամակցելու և նրանց առաքելությանը հետևելու հարցը խիստ չի դրված: Համայնքային կառույցների առաքելությամբ ամրագրված՝ ինքնության պահպանման միջավայրի ձևավորման գործառույթն էլ երկրորդային է դառնում, քանզի այդ պահանջումները հայերը բավարարում են հաճախակի Հայաստան այցելելով, ամռան ամիսներին երեխաներին հարազատների մոտ ուղարկելով: Համայնքների շուրջ համախմբված է հայության փոքր մասը՝ նաև այն պատճառով, որ ճնշող մեծամասնությունը, զբաղված լինելով ընտանիքի գոյության համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելով, կարծես բավարարվում է միայն տոներին և այլ համահայկական միջոցառումներին մասնակցելով:

Հայ համայնքն արտերկրում կարևոր դեր է ստանձնում նաև արտագաղթած ընտանիքների երեխաների կրթական և ինքնության

23 Арутюнян Ю. 2011, Об Армянской диаспоре в России. Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара, Ереван, «Гитутюн», 154 с.

պահպանման հարցերում. դրանք հիմնականում եվրոպական մի շարք երկրներում և ԱՄՆ-ում կյանքի են կոչվում եկեղեցու կամ հասարակական, բարեգործական կազմակերպությունների միջոցով: Ըստ հետազոտության ցուցանիշների՝ հարցման մասնակիցների ողջ համախմբությունից միգրանտների միայն 8,9% ընտանիքներում են երեխաները հաճախել/հաճախում *կիրակնօրյա դպրոցներ*: Այդ ցածր ցուցանիշները կարող են պայմանավորված լինել Հայաստանից տեղափոխված ընտանիքների երեխաների մի մասի հայերենի իմացության, ինչպես նաև հետագայում կրթություն ստանալու և աշխատանք գտնելու նպատակով օտար լեզվի իմացությանը նախապատվություն տալու հանգամանքներով: Մեր փորձագետներից մեկի գնահատմամբ՝ այդ իրավիճակը պայմանավորված է նաև նոր միգրանտների զբաղվածության խնդրով, որոնք ժամանակ չունեն համայնքային կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելու և երեխաների ինքնության պահպանության հարցերով ավելի շատ զբաղվելու. «Գլխավոր խնդիրներից մեկը նաև համայնքային կառույցներում՝ մշակութային, բարեգործական, կրթական և այլն, երիտասարդության ցածր ներգրավվածությունն է: Բայց սա ունի իր պարճատները: Այնպես չէ, որ այդ կառույցները գրավիչ չեն, խթանող ծրագրեր և միջոցառումներ չեն անում, այլ մարդիկ ներստված են կյանքի փարբեր խնդիրների ու հարցերի շրջանակի մեջ և չունեն այդ ժամանակը» (հարցազրույց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետի հետ):

Եթե ըստ երկրների դիտարկենք հարցը, ապա ակնառու կլինի գրեթե նույն օրինաչափությունը. կիրակնօրյա դպրոցներ ավելի շատ հաճախում են/հաճախել են ԱՄՆ և Կանադա, ավելի քիչ՝ ՌԴ արտագաղթած ընտանիքների երեխաները (աղ. 33): ԱՄՆ-ում առկա է կրթական հաստատությունների բավական լավ ցանց, և 16,1% ընտանիքների երեխաներ հաճախել են կիրակնօրյա դպրոցներ՝ ուսանելով մայրենի լեզու, հայոց պատմություն, զբաղվածություն, երգ ու պար և այլն: Եվրոպական որոշ երկրներում նույնպես

ակտիվ են կիրակնօրյա դպրոցները, որոնց նկատմամբ, ըստ մեր քանակական հետազոտության տվյալների, հետաքրքրություն ցուցաբերել են 9,8% ընտանիքներ: Այստեղ հայապահպանությունը կարևոր դիրքերում է՝ հաշվի առնելով նաև համայնքային կազմակերպությունների, եկեղեցու ակտիվությունը, եկեղեցուն կից տարբեր դպրոցների և խմբակների առկայությունը:

ՌԴ-ում, բացի հանրակրթական որոշ դպրոցներում դասավանդվող հայերենից, կիրակնօրյա դպրոցների տրամադրած գիտելիքներից օգտվել են 7,2% ընտանիքների երեխաները: Այս հարցում փորձագետները կրկին ընտանիքի գործոնն են կարևորում. «Ընտանիքների մեծ մասը, որոնք հատկապես նոր կամ ոչ հեռավոր անցյալում են տեղափոխվել ՌԴ, բախվելով սոցիալ-տնտեսական և այլ խնդիրների, զբաղված լինելով նաև իրենց աշխատանքով, ընտանիքի հոգսերով, այս խնդիրը բարձիթողի են մատնել: Եվ որոշակիորեն նկատելի է, որ ՌԴ հայ համայնքը կամ նոր սերունդը մայրենի լեզվին տիրապետում է կամ կենցաղային մակարդակով, կամ բարբառային մակարդակով, կամ հասկանում է, բայց չի կարողանում խոսել» (հարցազրույց Միյուոքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետի հետ):

Արտագաղթի երկրում միգրանտները նաև բազմաթիվ խնդիրների են բախվում, որոնք մեղմացնելու համար փնտրում են հենման կետեր. օրինակ՝ ձևավորված հայ համայնքից որևէ օժանդակության ակնկալում: Տվյալ դեպքում կարելի է համարել, որ համայնքը նրանց համար դառնում է «սոցիալական կապիտալ», որը, ըստ Պ. Բուրդյեի, կարող է տրամադրել փաստացի կամ հավանական ռեսուրսներ²⁴: Այս պարագայում սփյուռքյան համայնքային կառույցներն ունեն բավականաչափ ռեսուրսներ՝ նոր միգրանտներին ոչ միայն նյութական, այլև ոչ նյութական աջակցություն ցու-

24 Bourdieu P. 1985, The Forms of Capital. In Handbook of Theory and Research for the Sociology of Education, edited by J. G. Richardson, New York: Greenwood Press. pp. 241-258.

ցաբերելու համար՝ իրավունքների պաշտպանություն, սոցիալական և բարեգործական ծրագրերի իրականացում: Ըստ փորձագետի դիտարկման՝ «Շար էն օրինակները, երբ հայ համայնքն օգնության է հասնում ծանր վիճակում հայրնված հայրենակցին՝ աջակցելով նրա սոցիալ-մշակութային ադապտացիային...» (հարցազրույց սփյուռքի հիմնասինդիքներով զբաղվող փորձագետի հետ, դասախոս ԵՊՀ պարմության ֆակուլտետում):

Սակայն, ինչպես ցույց են տալիս մեր հետազոտության արդյունքները, այդ հարցում ավանդական համայնքների և նոր միգրանտների միջև դեռևս առկա է վստահության պակաս: Թերևս դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ ֆինանսական տեսքով աջակցություն ստացել է նրանց 2,8%-ը, իսկ ոչ ֆինանսական օժանդակություն՝ 6,4%-ը (աղ. 33): Այսինքն՝ կարող ենք փաստել, որ ավանդական համայնքային կառույցները, որպես «սոցիալական կապիտալ», շատ քիչ դերակատարում ունեն նոր միգրանտների խնդիրների լուծման հարցում:

Համայնքի բնութագրիչների մեջ կարևոր են նաև հետևյալ հատկանիշները՝ ընդհանուր պահանջներ և նպատակներ, ընդհանուր կենցաղ, կենսագործունեության, աշխարհայացքների, մշակույթի և կոլեկտիվ գործողության ընդհանրության զգացում²⁵: Այս տեսանկյունից դիտարկելով սփյուռքահայ համայնքի և նոր միգրանտների փոխառնչության հարցը՝ *համայնքային միջոցառումներին մասնակցության* պարագայում կտեսնենք ցուցանիշների որոշակի բարձրացում. հետազոտության արդյունքներով նոր արտագաղթած ընտանիքների 26,9%-ը մասնակցել է համայնքի կազմակերպած որևէ միջոցառման: Հիմնականում դա մասնակցությունն է ազգային և ավանդական հայկական տոներին: Այս ցուցանիշը կրկին բարձր է ամերիկյան և եվրոպական երկրներում՝ համեմատած ՌԴ-ի՝ համապատասխանաբար 33,9%, 32,0% և 24,1% (աղ. 33):

25 Silk J. 1999, The dynamics of community, place and identity, Environment and Planning A, v. 31, pp. 5-17.

Ընդհանուր մշակույթին պատկանելության և կոլեկտիվ գործողության պահանջմունքը բավարարելուց զատ՝ այդ միջոցառումներին մասնակցությունը երբեմն ունենում է ձևական բնույթ. այդ մասին նշվում է նաև փորձագիտական գնահատականներում. «Ես մի անգամ առիթ ունեցա Շվեյցարիայի հայ համայնքի փարեկան հավաքույթին մասնակցելու: Շար-շար փափովրված էի, թե ինչքան բազմաշերտ էր շվեյցարահայ համայնքը... Հին համայնքի ներկայացուցիչները նորեկների նկատմամբ շար գգուշավոր էին՝ նկարի ունենալով, որ եկան, փեսնես ինչով պիտի զբաղվեն, ինչու հայրենիքը թողեցին... Ու դու փեսնում էիր, որ յուրաքանչյուր սեղանի շուրջ հավաքվել էին որոշակի խավի ներկայացուցիչներ՝ հին, նոր, շար նոր. այդ լարվածությունը կար, բայց բոլորը ցույց էին փալիս, թե շար ուրախ են՝ այնտեղ գտնվելով» (փորձագիտական հարցազրույց ՏԿԵՆ Միգրացիոն ծառայության մասնագետի հետ):

Նոր արտագաղթածների շրջանում ավանդական համայնքային կառույցների հետ համագործակցությունը համեմատաբար բարձր է նաև կոլեկտիվ գործողությունների ժամանակ. օրինակ՝ *համայնքի կազմակերպած ցույցերին ու սկզբիաներին* մասնակցելիս: Նրանց յուրաքանչյուր հինգերորդը՝ 21,3%-ը, դրանով ցույց է տալիս իր համերաշխությունը համայնքային կազմակերպությունների նկատմամբ (աղ. 33): Մասնակցությունը բարձր է հատկապես յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ին ցեղասպանության զոհերի ոգեկոչման և Արցախին նվիրված միջոցառումներին: Այս առումով կրկին ավելի ակտիվ են ԱՄՆ և եվրոպական երկրներ արտագաղթած հայերը, քան Ռուսաստանի Դաշնություն՝ համապատասխանաբար 37,1%, 29,5% և 17,0% (աղ. 33):

Նրանք ակտիվ մասնակցություն են ունենում նաև համայնքի կազմակերպած *դրամահավաքներին*՝ հատկապես Արցախյան պատերազմների ժամանակ մարդասիրական օգնություն ցուցաբերելիս: ԱՄՆ-ում, եվրոպական երկրներում և Ռուսաստանում մասնակցության ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 54,8%, 34,4% 32,9% (աղ. 33):

Այսպիսով, կարող ենք նշել, որ հետխորհրդային Հայաստանի բնակչության արտագաղթի հետևանքով արտերկրում ձևավորված նոր սփյուռքի և ավանդական համայնքային կազմակերպությունների միջև համագործակցությունը սահմանափակ է՝ հանգեցնելով խմբային կենսաձևի և ներփակման գործընթացների: Տեղին ենք համարում ներկայացնել նաև մեր փորձագետի դիտարկումն այս հարցի առնչությամբ. «Միգրացիոն այն հոսքը, որ տեղի ունեցավ 90-ականներից սկսած, առկա է աշխարհի տասնյակ երկրներում: Մենք սա կարող ենք տեսնել նաև ավանդական հայկական համայնքների կազմակերպությունների կողքին զանգվածաբար նոր՝ համայնքային, մշակութային, բարեգործական, կրթական կառույցների ձևավորման տեսքով: Կան ավանդաբար գործող կառույցներ, և կան կառույցներ, որոնք 10-20 տարվա պատմություն ունեն. սրանք հայաստանցիների շերտն են ներկայացնում: Որոշակի չըմբռնվածություն կա հին և նոր համայնքների միջև. սա նկատելի է որոշ տեղերում: Դա պայմանավորված է նոր մեկնած հայաստանցիների ոչ լիարժեք ինտեգրմամբ, գիտության, մշակութի, քաղաքականության, հասարակական կյանքի, տեղական կառավարման մարմիններում դեռևս ընդգրկված չլինելու, նաև միգրանտների անօրինական և փախստականի կարգավիճակում գտնվելու հանգամանքներով, որոնք հակասություններ են բերում հին և նոր հայության խմբերի միջև» (փորձագիտական հարցազրույց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետի հետ):

Հայերի այս երկու հատվածների միջև առկա են նաև լեզվական, մշակութային, կրոնի և եկեղեցու նկատմամբ վերաբերմունքի որոշակի տարբերություններ, որը խոչընդոտում է սփյուռքի ավանդական համայնքային կազմակերպությունների և նոր միգրանտների միջև համագործակցությունը: Ի տարբերություն ավանդական սփյուռքի՝ Հայաստանից մեկնածները չունեն համայնքային-մշակութային կյանքով ապրելու փորձ, չեն անդամակցել սփյուռքում գործող անդրազգային կազմակերպություններին: Այդ հարցում

պետք է հաշվի առնել նաև սփյուռքի ավանդական համայնքի ոչ միատարր լինելու և բազմազանության խնդիրը: Այս և նմանատիպ այլ գործոններով պայմանավորված՝ նրանք դեռևս չեն ինտեգրվում սփյուռքի համայնքային կազմակերպություններին:

Ելնելով հետազոտության արդյունքներից՝ կարող ենք եզրակացնել, որ նոր միգրանտների՝ սփյուռքի համայնքային կազմակերպությունների հետ ունեցած թույլ հարաբերությունները դրսևորվում են համայնքային կառույցներին անդամակցության, երեխաների՝ կիրակնօրյա դպրոցներ հաճախելու, նյութական և ոչ նյութական աջակցության հարցերում: Համագործակցության համեմատաբար բարձր ցուցանիշներ են արձանագրվել համայնքային միջոցառումներին մասնակցության դեպքում, սակայն դրանք կրում են հատվածային բնույթ: Պայմանավորված ընդունող երկրի գործոնով՝ համագործակցության ցուցանիշներն ունեն տարբեր միտումներ:

5.2. Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը և ցանցային հարաբերությունները

Արտագաղթածների ինտեգրման, համայնքային կառույցների հետ կապի հաստատման և գործառնության հարցերին զուգահեռ՝ կարևոր է քննարկել նաև էթնիկ ցանցի ներսում ունեցած հարաբերությունները: Հայ հասարակության մեջ ցանցային հարաբերությունների կառուցման և գործառնության դեպքում որոշիչ դեր ունեն ցանցի ներսում ունեցած կապերը և դրանց բնույթը: Եվ այս առումով կարևոր է ուսումնասիրել, թե հայերն այլ երկրներում ինչպես են հարաբերություններ հաստատում և զարգացնում, արդյոք պահպանվում են նշյալ առանձնահատկությունները, և արտաքին միջավայրի ազդեցությամբ դրանք ինչ փոփոխություններ են կրում²⁶:

26 Barnes J. 1969, Networks and political process, Ed. J. C. Mitchell, Manchester, Social

Ըստ քանակական հետազոտության արդյունքների՝ արտագաղթածների գերակշիռ մասը՝ 88,6%-ը, արտերկրում ունի սոցիալական մերձմիջավայր՝ բարեկամ, ընկեր, հարևան, որոնց հետ շփվում է: Այդ ցուցանիշն ամենաբարձրն է Ռուսաստանում՝ 93,8%, ապա ԱՊՀ երկրներում՝ 88,5%, իսկ ամենացածրը եվրոպական երկրներում է՝ 77,2%:

*Աղյուսակ 34.
Ցանցի հետ շփման առիթները՝
ըստ արտագաղթի երկրի (%)
(«այո» պատասխանները)*

Առիթները	Ընդհանուր	Արտագաղթի երկիրը				
		Ռուսաստան	ԱՊՀ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	Այլ երկրներ
Ընտանեկան միջոցառումներին	48,1	50,0	43,5	50,5	45,3	10,5
Տոներին	35,9	33,9	47,8	41,9	41,5	10,5
Ամենօրյա շփում	20,1	23,0	21,7	11,4	15,1	26,3
Գործնական	18,6	21,9	8,7	11,4	11,3	26,3
Ժամանցն անցկացնելու նպատակով	11,3	9,8	17,4	17,1	7,5	10,5
Համայնքային միջոցառումներին	3,5	1,4	8,7	10,5	1,9	5,3
Տիտղոս առիթներին	1,8	2,5	4,3	0,0	0,0	0,0
Եկեղեցական արարողություններին	1,4	0,5	0,0	1,9	7,5	0,0
Չեն շփվում	3,2	3,0	4,3	2,9	3,8	5,3
Դժվ. են պատ.	7,1	6,3	8,7	5,7	11,3	15,8

Networks in Urban Situations, Manchester University Press, pp. 51-76; Wasserman S., Faust K. 1994, Social Network Analysis, Methods and Applications (Vol. 8), Cambridge, Cambridge University Press, p 30-48.

Հայերին բնորոշ առանձնահատկություններից է հյուրասիրությունը և այս համատեքստում՝ ընտանեկան միջոցառումներին բարեկամներին և ընկերներին հրավիրելը: Ընտանեկան տարատեսակ միջոցառումները՝ հարսանիքները, ծննդյան տոները, մկրտության ծեսերը, նշելն առիթ է նաև արտերկրում բնակվող հայերի համար, ընդ որում, այն ամենաշատ հանդիպող պրակտիկան է: Ըստ քանակական ցուցանիշների՝ գրեթե ամեն երկրորդ ընտանիք՝ 48,1% (աղ. 34), վերոնշյալ միջոցառումներն անցկացնում է հարազատ շրջապատի հետ: Այս պրակտիկան ավելի շատ տարածված է Ռուսաստանում և Եվրոպական երկրներում՝ համապատասխանաբար 50,0%, 50,5% (աղ. 34), ավելի քիչ այլ երկրներում՝ 10,5% (վերջինիս պարագայում ավելի ուշ կտեսնենք, որ ցանցի ներսում հիմնականում տարածված են գործնական հարաբերությունները):

Արտերկրում ապրող միգրանտների համար «հայրենիքի կարոտն առնելու», «պատկանելության զգացում» ունենալու²⁷, մշակութային ինքնության պահպանման և վերարտադրման ու այն երեխաներին փոխանցելու համար կարևոր գործոն է նրանց ակտիվ մշակութային կյանքի կազմակերպումը: Թերևս այս նպատակին է միտված նաև հայ միգրանտների այն վարքագիծը, որ, ըստ հետազոտության արդյունքների, գրեթե ամեն երրորդ ընտանիք՝ 35,9% (աղ. 34), հայկական ավանդական տոները՝ Նոր տարին, Սուրբ Ծնունդը, Զատիկը և այլն, նշում է հարազատի, ընկերոջ, համերկրացու հետ: Ընդ որում, այս պրակտիկան ավելի շատ զարգացած է ԱՊՀ երկրներում, ապա Եվրոպայում և ԱՄՆ-ում բնակվող հայերի շրջանում՝ համապատասխանաբար 47,8%, 41,9%, 41,5%, (աղ. 34): Ռուսաստանում ընդհանուր միջինից ցածր ցուցանիշ է արձանագրվել՝ 33,9%: Իսկ այլ երկրներում այս առիթով շփումները, կարելի է ասել, սահմանափակ են, որը կարող է պայմանավորված

27 Mata-Codesal D., Peperkamp E., Tiesler N. 2015, Migration, migrants and leisure: meaningful leisure? *Leisure Studies*, Vol. 34, No.1, pp. 1-4. <http://dx.doi.org/10.1080/02614367.2015.992620>

լինել հայերի սակավ քանակով, նրանց՝ տարբեր երկրներում ցրիվ բնակությամբ և շատ մոտ միջավայրի բացակայությամբ, որն էլ չի նպաստում ցանցի ներսում ավելի մտերիմ հարաբերությունների ձևավորմանը: Ընդհակառակը, նրանց շրջանում ավելի տարածված են գործնական և ամենօրյա ռեժիմով շփումները:

Ամենօրյա ռեժիմով շփումները, համեմատած Ռուսաստանի հետ, քիչ բնորոշ են եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում ապրող հայերին՝ համապատասխանաբար 23,0%, 11,4% և 15,1% (աղ. 34): Այստեղ ևս պատճառներից մեկը նրանց ցրիվ բնակությունն է: Մեր ծրագրի փորձագետը ևս անդրադարձել է այս խնդիրներին. «*Ռուսաստանում ինքնության պահպանության ինդիքն էդքան սուր չի, ինչքան եվրոպական երկրներում: Թերևս Ամերիկայում էլ էդքան սուր չի, եթե դա Կալիֆոռնիային է վերաբերում, որովհետև բավականին հոծ հայկական զանգված կա: Եվ շարք հայեր իրենց համար սովորական ապրում են. ինչ պայմաններում որ էստեղ էին ապրում, նայն բարքերով այնտեղ են շարունակում ապրել: Նույնը Ռուսաստանում, բայց ոչ էդքան վառ արտահայտված: Քիչ չեն հայկական բնակավայրերը՝ Մոսկվա, Մոսկվայի մարզ, Ռոստով, Ռոստովի մարզ: Այստեղ շարք են հայերը, իրար հետ «նարդի» խաղալ, «բլոք» խաղալ, որն ինքնության պահպանման համար մեծ գործոն է» (դասախոս, ԵՊՀ Կրթության գիտության ֆակուլտետ, միգրացիայի հարցերով փորձագետ): Կարող ենք նշել, որ սոցիալական մերձմիջավայրն ու ամենօրյա շփումները մշակութային ինքնության պահպանման կարևոր երաշխիք են, որոնք ավելի շատ բնորոշ են հայկական հոծ համայնքներին՝ չպայմանավորված կոնկրետ երկրի գործոնով:*

Արտերկրում միգրանտի «ինքնությունը հայտնվում է ճգնաժամի մեջ»²⁸. երբ անձը հայտնվում է այլ սոցիալ-մշակութային միջավայրում, հաստատուն ու կայուն թվացող մշակութային կողերը սկսում

28 Mercer C. 1990, Identity Crisis, Australian Left Review, 1(119), pp. 20-25. <https://ro.uow.edu.au/alr/vol1/iss119/9/>

են կասկածի ու անորոշության տեղիք տալ: Հետևաբար, այլ երկրում ձևավորվող համայնքի համար «մենքի» և «ուրիշների» պատկերացումների վերախմաստավորման գործընթաց է սկսվում²⁹: Այս ամենը բնորոշ է նաև Հայաստանից արտագաղթողների համար: Եվ քանակական ցուցանիշներն էլ վկայում են այն մասին, թե ինչպես են մշակութային ինքնության պահպանման և վերարտադրման համար կարևոր խթան դառնում արտերկրում սեփական համայնքի հետ կապ հաստատելը, համայնքային միջոցառումներին (ավելի շատ տարածված է Եվրոպայում՝ 10,5%) և եկեղեցական արարողություններին (ավելի շատ տարածված է ԱՄՆ-ում՝ 7,5%) մասնակցելը: Սակայն պետք է նշել նաև, որ, ընդհանուր առմամբ, այս առիթով շփումները քիչ հաճախականություն են գրանցել շփման ընդհանուր ձևերի մեջ: Դրա փոխարեն՝ շատ հայեր արտերկրում ունեն մերձմիջավայր, որի հետ հարաբերություններն ավելի սերտ են և ընտանեկան:

Ինչքան մեծ է արտերկրում բնակվելու տարիների թիվը, այնքան ցանցի ներսում շփումներն ավելի հաճախակի և մտերմիկ են դառնում, այնքան մշակութային ինքնության պահպանման հրամայականն արդիական է դառնում: Օրինակ՝ տոները միասին նշելու պրակտիկան ավելի շատ տարածված է վաղ մեկնածուների, քան վերջին 7-8 տարիներին արտագաղթածների շրջանում: Կամ վերջին 3-4 տարիներին արտագաղթածները, համեմատած այլ տարիների հետ, էթնիկ ցանցի հետ ավելի շատ գործնական հարաբերություններ ունեն: Այստեղ կարող ենք նշել, որ մշակութային ինքնության պահպանումն ու վերարտադրումը հնարավոր են դառնում նաև ցանցի անդամների՝ հայրենիքը վերապրելու և պատկանելության զգացում ունենալու շարունակական ցանկության դեպքում³⁰:

29 Wenjing X. 2005, Virtual space, real identity: Exploring cultural identity of Chinese Diaspora in virtual community, *Telematics and Informatics*, “Elsevier”, Volume 22, Issue 4, pp. 395-404.

30 Wenjing X. 2005, նշվ. աշխ. pp. 395-404.

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա և այս հարցում ընդունելով նաև Ֆ. Բարտի մոտեցումները³¹ կարող ենք եզրակացնել, որ ցանցն արտերկրում նպաստում է էթնիկ սահմանների ստեղծմանը և պահպանմանը: Այն նոր միջավայրում դառնում է միգրանտների սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպման, այլէթնիկ խմբերի հետ վարքագծային և կայուն մշակութային տարբերությունների ձևավորման կարևոր պայմաններից մեկը: Էթնիկ ցանցի միջև շփումները նաև նպաստում են ազգային մշակույթի պահպանմանն ու սովորույթների վերարտադրությանը:

31 Когда этническая идентичность становится социальным системом? Этнические группы и социальные границы. Социальная организация культурных различий, Сборник статей, Под. ред. Ф. Барта, пер. с англ. И. Пильдикова, М., Новое издательство, 2006, с. 17-18. Etnicheskie_Gruppy_I_Sotsialnye_Granitsy_Sb_statey_Pod_Red_Frederika_Barta.pdf

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՑԱՆՑԸ ԵՎ ՆՈՐ ԱՐՏԱԳԱՂԹԻ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

6.1. Նոր արտագաղթի հավանականությունը. ուղղություններ և գործոններ

Էմիգրացիան, մեկ անգամ սկսվելով, երբեմն հակված է շարունակականության, անգամ եթե ի սկզբանե այն պայմանավորող գործոնները թուլացել են կամ այլևս չկան: Օրինակ՝ ամերիկացի գիտնականների առաջ քաշած կուտակային պատճառականության հայեցակարգը³², «միգրանտի համախտանիշ»³³ երևույթները խոսում են այն մասին, որ Էմիգրացիան ելքի հասարակությունում կարող է բերել սոցիալ-տնտեսական, մշակութային և անգամ քաղաքական համատեքստի այնպիսի փոփոխությունների, որ հետագա միգրացիան առավել նախընտրելի, ավելին՝ նպատակահարմար է դառնում: Միգրացիայի շարունակականության մասին դիտարկում է անում նաև մեր ծրագրի փորձագետը. «Միգրացիան վարակիչ պրոցես է: Ինչպես ցանկացած պրոցես, որն ապահովում է որոշակի բարեկեցություն, վարակիչ է: Մեկ միգրացիոն ակտը որոշակի հավանականությամբ պայմանավորում է լրացուցիչ միգրացիոն ակտեր: Եվ այսպես առաջանում է միգրացիոն գործառնման ցանց, համակարգ, որն էդպես էլ աշխարհում է» (փորձագիտական հարցազրույց ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիայի հարցերով զբաղվող դասախոսի հետ):

Մեր հետազոտությունը դիտարկել է սույն հարցը՝ փորձելով բացահայտել արտագաղթի հակվածությունն այն ընտանիքներում,

32 Massey D., Goldring L., Durand J. 1994, Continuities in Transnational Migration: An Analysis of Nineteen mexican Communities, American Journal of Sociology, Volume 99, Issue 6, pp. 1492-1533.

33 Reichert J. S. 1981, The Migrant Syndrome: Seasonal US. Wage Labor and Rural Development in Central Mexico, Human Organization, Vol. 40, No. 1, pp. 56-66.

որտեղ անդամների մի մասն արդեն երկարաժամկետ միգրանտ է աշխարհի բազմաթիվ երկրներում: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 35-ի տվյալները, արտագաղթի մտադրություն ունի ընդամենը 16,9%-ը, որը Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի տեսանկյունից արդեն իսկ մեծ ցուցանիշ է համարվում: Ավելին, նրանց պլանները հիմնականում հստակ են, այսինքն՝ արտագաղթի մտադրություն ունեցողների 46,5%-ը պատասխանել է, որ պատրաստվում է մեկնել առաջիկա տարում՝ 2022 թ., 20,2%-ը կմեկնի 2023 թ. և հետո, իսկ 1/3-րդ մասը դեռևս դժվարանում է Հայաստանից հեռանալու որոշակի ժամկետ նշել:

Եթե ըստ երկրների դիտարկենք հարցը, ապա կտեսնենք, որ, ընդհանուրի համեմատ, ավելի մեծ հակվածություն նկատվում է ԱՄՆ-ի պարագայում՝ 27,8%, այսինքն՝ այն ընտանիքների շրջանում, որտեղ անդամների մի մասն այլևս բնակվում է ԱՄՆ-ում: Ապա համեմատաբար ավելի մեծ հակվածություն է նկատվում այն ընտանիքներում, որտեղ անդամների մի մասն արդեն արտագաղթել է ԱՊՀ և այլ երկրներ՝ համապատասխանաբար 20,8% և 18,2% (աղ. 35):

Աղյուսակ 35.

Նոր արտագաղթի հավանականությունը (%)

Արտագաղթի երկիրը	Այո	Ոչ	Դժվ. եմ պատ.	Ընդամենը
Ռուսաստան	16,3	80,7	3,0	100,0
ԱՊՀ երկրներ	20,8	79,2	-	100,0
Եվրոպական երկրներ	12,9	79,8	7,3	100,0
ԱՄՆ և Կանադա	27,8	68,5	3,7	100,0
Այլ երկրներ	18,2	77,3	4,5	100,0
Ընդհանուր	16,9	79,2	3,9	100,0

Ինչպես գլուխ 2-րդում Հայաստանից արտագաղթի պատճառների վերլուծությունից պարզ է դառնում, որ գլխավոր պատճառը տնտե-

սականն է, այնպես էլ այս բաժնում կփաստենք, որ նոր, հավանա-
կան արտագաղթը ևս մեծավ մասամբ պայմանավորված է տնտե-
սական գործոններով: Այսպես, արտագաղթի մտադրություն ունե-
ցող հարցվողների մեծ մասը արտագաղթի հիմնական պատճառ է
համարում վանող տնտեսական գործոնները՝ բավարար կենսա-
մակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնա-
րիխությունը և Հայաստանում աշխատանքի բացակայությունը՝
համապատասխանաբար 24,1%, 13,5% (աղ. 36): Վանող գործոննե-
րի մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում նաև քաղաքական ան-
կայուն իրավիճակն ու վերջին ժամանակներս արդիական դար-
ձած պատերազմի վտանգը՝ համապատասխանաբար 12,0%, 8,3%
(աղ. 36): Արտագաղթի պատճառները կարող են լինել նաև սո-
ցիալ-հոգեբանական բնույթի, որոնք թեև քիչ չափով, սակայն ընդ-
գծել են մեր հետազոտողները. դրանք են երկրի/բնակավայրի
զարգացման հեռանկարների բացակայությունը (3,8%), բարոյա-
հոգեբանական մթնոլորտը (2,3%): Այսպիսով, Հայաստանից մեկ-
նելու որոշման կայացման մեջ վանող գործոններն ավելի մեծ տե-
սակարար կշիռ ունեն ընդհանուր պատճառների մեջ, քան արտ-
երկրի ձգող գործոնները (բարեկեցիկ կյանքի ակնկալիքները, արտ-
երկրում աշխատանք ունենալու հնարավորությունները, կրթական
և մասնագիտական աճի հնարավորությունները՝ համապատաս-
խանաբար 6,0%, 4,5% 1,5% (աղ. 36): Ծրագրի փորձագետները ևս
այն կարծիքին են, որ Հայաստանից արտագաղթը հիմնականում
պայմանավորված է վանող գործոնների առկայությամբ, իսկ վեր-
ջին երկու տարիներին դրանք ավելի արդիական են դարձել. «Պա-
րտերազմը և կորոնավիրուսն այսօր ցնցել են Հայաստանը: Իհար-
կե, էս կարճ ժամանակահատվածում րնտեսական կանխարե-
սումները, որ սով կլինի, էսքան էլ տեղի չունեցավ փարբեր պար-
ճառներով, բայց հեղինակներից մեկն այն էր, որ զգալի խմբերի
մոտ առաջացան միգրացիոն փրամադրություններ» (փորձագի-
րական հարցազրույց ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրա-
ցիայի հարցերով զբաղվող դասախոսի հետ):

Ըստ հետազոտության արդյունքների՝ արտագաղթի մյուս պատճառներն ունեն ընտանեկան, անձնական բնույթ. օրինակ՝ ընտանիքի միավորումն ու ամուսնությունը՝ համապատասխանաբար 21,1%, 2,3% (աղ. 36): Առաջինն ուշագրավ է այն տեսանկյունից, որ ականատես ենք լինում, թե արտերկրի ընտանիքի անդամներից և հարազատներից ձևավորված ընտանեկան ցանցն ինչքան մեծ ազդեցություն է ունենում արտագաղթի որոշման կայացման վրա:

Աղյուսակ 36.

Հարցվողի՝ ՀՀ-ից հեռանալու պատճառները (%)

Պատճառները	%
Բավարար կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարիությունը	24,1
Ընտանիքի միավորումը	21,1
Հայաստանում աշխատանքի բացակայությունը	13,5
ՀՀ քաղաքական անկայուն իրավիճակի պատճառով	12,0
Պատերազմի վտանգը	8,3
Բարեկեցիկ կյանքի ակնկալիքները	6,0
Արտերկրում աշխատանք ունենալու հնարավորությունները	4,5
Երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարների բացակայությունը	3,8
Ամուսնության նպատակով	2,3
Սոցիալական, բարոյահոգեբանական մթնոլորտը	2,3
Կրթության, մասնագիտական աճի նպատակով	1,5
Դժվարանում եմ պատասխանել	0,8
Ընդամենը	100,0

Կարող ենք ասել, որ, ընդհանուր առմամբ, արտագաղթածների մշտական կապը հայրենիքի հետ, նրանց պարբերաբար այցելությունները Հայաստան, միգրանտ ունեցող ընտանիքների՝ ֆինանսական տեսանկյունից առավել շահեկան դրության մեջ գտնվելը ևս շրջապատում առաջացնում են լրացուցիչ հակվածություն դե-

պի միգրացիան: Նպաստող հանգամանքներից հավելենք նաև բարեկամներից և ընկերներից ձևավորված սոցիալական ցանցը. այն առավել կանխատեսելի և պակաս ռիսկային է դարձնում հետագա միգրացիան՝ նախորոշելով հնարավոր արտագաղթի ուղղությունը: Մեր հետազոտության տվյալները վկայում են այն մասին, որ արտագաղթի հակվածություն ունեցողների մոտ ուղղությունը հիմնականում համընկնում է, սակայն ընտանիքի անդամները, հարազատները կարող են դիտարկել նաև այլ երկրներ: Օրինակ՝ այն հարցվողները, որոնք Ռուսաստանում ընտանիքի անդամ/հարազատ ունեն և արտագաղթելու մտադրություն, մեծավ մասամբ՝ 74,6%-ը, նախընտրում է Ռուսաստանը, սակայն ԱՄՆ-ն և եվրոպական երկրները ևս հավանական ուղղություններ են համարում՝ համապատասխանաբար 16,9% և 5,1% (աղ. 37): Գրեթե նույն օրինաչափությունն է եվրոպական երկրների պարագայում՝ այստեղ ևս հիմնական ուղղությունը Եվրոպան է, սակայն չի բացառվում ԱՄՆ մեկնելու տարբերակը, իսկ մի մասն էլ դեռ հստակ չի որոշել՝ համապատասխանաբար 68,8%, 12,5%, 18,8% (աղ. 37): Այսինքն՝ կարող ենք ասել, որ, բացի ցանցից, ինչքան մեծ թվով հնարավորություններ են կուտակված տվյալ երկրում, այնքան այդ տարածքն ավելի գրավիչ է դառնում հնարավոր միգրանտների համար՝ տնտեսական հնարավորություններից մինչև արժեքային, հոգեբանական գործոններ: Հետաքրքիր է ԱՄՆ-ի օրինակը. այստեղ ցանցն ավելի ձգող է և մեծ դեր ունի հավանական արտագաղթի ուղղության հարցում (86,7%):

Բացի այս երկու հարցերի փոխկապակցված վերլուծությունից, նաև հարցվողներն են նշել այն հիմնական գործոնները, որոնք ընկած են արտագաղթի ուղղության ընտրության հիմքում: Եվ աղյուսակ 38-ի տվյալներից տեսնում ենք, որ կեսից ավելին՝ 51,2%-ը, կարևորում է ընտանիքի անդամների, հարազատների առկայությունը: Այս ցուցանիշն ավելի բարձր է ՌԴ-ի պարագայում, քանի որ 70,4%-ը որպես այդ երկիր արտագաղթելու հիմնական պատճառ կարևորել է ընտանիքի և հարազատների առկայությունը:

Պատասխանների որոշ մասն առնչվում է նաև մուտքի երկրների ձգող գործոնների հետ. դրանք են, օրինակ, աշխատանքի հնարավորությունը/առաջարկը՝ 14,9%, բարձր վարձատրությունը՝ 6,6%:

Աղյուսակ 37.

*Հնարավոր արտագաղթի ուղղությունը՝
ըստ էթնիկ ցանցի առկայության (%)*

Արտագաղթած ընտանիքի ուղղու- թյունը	Երկրները						
	Ռուսաստան	ԱՊՀ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	Այլ երկրներ	Դժվ. եմ պատ.	Ընդամենը
Ռուսաստան	74,6	-	5,1	16,9	-	3,4	100,0
Եվրոպական երկրներ	-	-	68,8	12,5	-	18,8	100,0
ԱՄՆ և Կանադա	-	-	-	86,7	-	13,3	100,0


Աղյուսակ 38.

Հնարավոր արտագաղթի համար երկրի ընտրության գործոնները (%)

Գործոնները	%
Ընտանիքի անդամների, հարազատների առկայությունը	51,2
Աշխատանքի հնարավորությունը/առաջարկը	14,9
Երկրի զարգացվածությունը	10,7
Բարձր վարձատրությունը	6,6
Երկիր մուտք գործելու հասանելիությունը	3,3
Նախկինում այդ երկրում աշխատելը, հանգիստը	3,3
Ընկերների, ծանոթների առկայությունը	2,5
Անվտանգ է	1,7
Լեզվի իմացությունը	0,8
Դժվարանում եմ պատասխանել	5,0
Ընդամենը	100,0

Արտագաղթի մտադրություն ունեցողները կարևորում են նաև երկրի զարգացվածությունը՝ 10,7% (աղ. 38), որն ավելի գրավիչ է դարձնում տվյալ ուղղությունը: Եվ տարակուսելի չէ, որ այս ցուցանիշն ավելի բարձր է եվրոպական երկրների (23,5%) և ԱՄՆ-ի պարագայում (18,9%): Թեպետ փոքր չափով, սակայն այլ գործոններ ևս պայմանավորում են հարցվողների՝ այս կամ այն երկիրն ընտրելու վարքագիծը՝ երկիր մուտք գործելու հասանելիությունը, նախկին փորձը, ընկերների առկայությունը, անվտանգությունը և այլն (աղ. 38):

Գծապատկեր 12.
Արտագաղթի հավանական երկրները (%)




Այսպիսով, ըստ մեր հետազոտության արդյունքների, որն ամփոփված է գծապատկեր 12-ում, այսօր հավանական արտագաղթի հիմնական ուղղությունը և շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը՝ 46,5%: Ավելի գրավիչ և նախընտրելի են դարձել ԱՄՆ-ն և Կանադան՝ 28,3%, ապա նաև եվրոպական երկրները՝ 14,1%: Արտագաղթի ուղղության ընտրությունը մեծավ մասամբ պայմանավորված է տվյալ երկրներում բնակվող ընտանիքի անդամների և հարազատների առկայությամբ. դա էլ պայմաններ է ստեղծում՝ ի կատար ածելով երկրի տնտեսական և քաղաքական իրավիճակից դժգոհ մարդկանց արտագաղթելու մտադրությունները:

6.2. Արտագաղթի մտադրություն ունեցողների սոցիալ-ժողովրդագրական տվյալները

Ինչպես արդեն նշել ենք, հարցվողների 16,9%-ն արտագաղթի մտադրություն ունի: Այժմ ներկայացնենք զծապատկեր 13-ում ամփոփված՝ նրանց սոցիալ-ժողովրդագրական տվյալները:

Գծապատկեր 13.
Արտագաղթելու մտադրություն ունեցողների սոցիալ-ժողովրդագրական տվյալները (%)



Արական սեռի հարցվողների ընդհանուր խմբից 20,9%-ն արտագաղթի պլաններ ունի, իգական սեռի խմբից՝ 15,7%-ը (զծ. 13): Ըստ տարիքային խմբերի՝ ստացվել են հետևյալ ցուցանիշները. արտագաղթի հակվածություն ավելի շատ երիտասարդներն ունեն՝ 18-35 տարեկանների 32,4%-ը պատասխանել է, որ մտադիր է մեկնել արտերկիր՝ բնակվելու նպատակով: Այս աչք ցուցանիշն ավելի բարձր է 36-50 տարիքային խմբում՝ 20,9%: Այս տվյալներից կարող ենք եզրակացնել, որ շարունակվում է ակտիվ աշխատունակ տարիքի մարդկանց արտագաղթը հանրապետությունից: Կենսաթոշակառուների խմբում համեմատաբար բարձր ցուցա-


նիշն էլ (9,3%) վկայում է այն մասին, որ նրանք մեկնում են արտերկիր՝ իրենց զավակների հետ համատեղ բնակվելու:

Ըստ կրթական ցուցանիշի վերլուծությունը փաստում է, որ շարունակվում է Հայաստանից «ուղեղների արտահոսքը»՝ բարձրագույն կրթություն ստացածների մեկ չորրորդ մասը պատրաստվում է լքել Հայաստանը: Մյուս կրթական մակարդակներում այդ ցուցանիշը գրեթե կրկնակի պակաս է (գծ. 13): Եթե ըստ մասնագիտությունների դիտարկենք հարցը, ապա կտեսնենք, որ նրանց մեծ մասը հասարակական գիտությունների մասնագետներ են. ընդհանուրը 30,2% է, որի մեջ մեկ երրորդը մանկավարժ է: Ապա մեծ տոկոս են կազմում հումանիտար գիտությունների և արվեստի ոլորտի մասնագետները՝ 18,2%: Փաստորեն, վերը նշված մասնագիտությունները շարունակում են մնալ ոչ պահանջված հայաստանյան աշխատաշուկայում, որն էլ մեծացնում է արտագաղթի հավանականությունը: Համեմատաբար մեծ զանգված են նաև միջին որակավորման մասնագետները՝ 10,1%: Արտագաղթի հակվածություն ունեցողների մեջ միայն 16,2%-ը մասնագիտություն չունի:

Արտագաղթելու մտադրություն ունեցողների կեսից ավելին՝ 60,5% (գծ. 14), սոցիալ-տնտեսապես ակտիվ խմբում է՝ մեծ մասը վարձու աշխատանք է կատարում, նաև ինքնագրաված է տարբեր ոլորտներում, ժամանակավոր աշխատող է և ուսանող: Պասիվ խմբի մեջ ավելի մեծ զանգված են կազմում տնային տնտեսություն վարողները՝ 18,2%, ապա թոշակատուները՝ 13,1%:

Ուշագրավ է նաև այն ցուցանիշը, որ արտագաղթի հակվածությունն ավելի բարձր է չամուսնացածների խմբում՝ նրանց մեջ յուրաքանչյուր երրորդը մտադիր է մեկնել Հայաստանից՝ 34,2% (գծ. 13): Ինչ վերաբերում է ընտանեկան մյուս կարգավիճակներին, ապա արտագաղթի մտադրություն ունեցողները համեմատաբար փոքր զանգված են: Հետազոտության արդյունքներից ելնելով՝ նշենք նաև, որ մեծ մասը (71,8%) մեկնելու է ընտանիքի անդամների՝ ամուսնու/կնոջ, երեխաների կամ ծնողների հետ, իսկ 28,2%-ը՝ մենակ:

Գծապատկեր 14.
Արտագաղթի մտադրություն ունեցողների
գրադվածության կարգավիճակը (%)



Եթե հարցը դիտարկենք ըստ բնակավայրի տիպի, ապա կտեսնենք, որ արտագաղթելու հավանականությունն ավելի բարձր է Երևանից՝ 23,2%, ապա գյուղերից (գծ. 13): Մարզային քաղաքների դեպքում միջին ընդհանուրից ցածր ցուցանիշ է արձանագրվել՝ 11,0%: Հետազոտության արդյունքներով՝ ՀՀ մարզերից արտագաղթի համեմատաբար բարձր հավանականություն կա Արարատից, Կոտայքից, Արմավիրից, Լոռիից (այստեղ հարցվողների համապատասխանաբար 31,4%-ը, 18,2%-ը, 17,2%-ը, 17,0%-ը մտադիր են մեկնել արտերկիր՝ բնակվելու նպատակով):

Այսպիսով, սոցիալ-ժողովրդագրական տվյալների համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ արտագաղթած ընտանիքներում նոր արտագաղթի հակվածություն ավելի շատ ունեն 18-35 տարեկան չամուսնացած տղաները, որոնք երևանաբնակ են և բարձրագույն կրթություն ունեն: Արտագաղթի մտադրություն ունեցողների մեջ տասից վեցն աշխատում է Հայաստանում, հետևաբար, գործազրկությունը երկրորդային է դառնում արտագաղթի պատճառների մեջ. այլ հարց է բարձր վարձատրվող աշխատանքի ձգտումը: Սոցիալապես պասիվ խմբի (տնային տնտեսություն

վարողներ, թոշակատուներ) արտագաղթելու մտադրությունը հիմնականում պայմանավորված է արտերկրում բնակվող իրենց ընտանիքի անդամների հետ միավորմամբ, որի իրագործումն ավելի շատ կախված է ընդունող կողմից, քան սեփական ցանկություններից:

ԱՐՏԱԳԱՐԹԱԾՆԵՐԻ ԿԱՊԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ ԲՆԱԿԿՈՂ ՀԱՐԱՉԱՏՆԵՐԻ ՀԵՏ

**7.1. Հայաստանի հետ կապվածության ձևերն
արտագաղթածների շրջանում**

Միգրանտները, ապրելով արտերկրում, ամուր կապված են հայրենիքին, որտեղ մեծ մասը թողել է իր տունը և հարազատներին: Նրանց՝ հայրենիքի հետ կապերը, ինչպես նաև կայուն հարաբերությունները ՀՀ-ում գտնվող հարազատների հետ ձևավորում են յուրօրինակ սոցիալական միջավայր՝ մի կողմից նպաստելով արտերկրում հանդիպող բազմաթիվ խոչընդոտների հաղթահարմանը և արագ ադապտացիային, մյուս կողմից՝ դժվարացնելով այդ գործընթացը: Ամեն դեպքում, նրանք տարիներ շարունակ ապրում և գործունեություն են ծավալում ընդունող հասարակությունում՝ մասը լինելով անդրազգային սոցիալական տարածության և դրանով իսկ իրենց հեռավոր հայրենիքի:

Մեր հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ նոր միգրանտների՝ հայրենիքի և հարազատների հետ կապի պահպանման ձևերը բազմազան են: Աշխարհի տարբեր երկրներում բնակություն հաստատած հայերի 92,2%-ը Հայաստանի հարազատների հետ կապը պահպանում է ամենօրյա տեսակապի միջոցով, և տեսնում ենք, որ այս ցուցանիշը գրեթե նույնն է բոլոր երկրների պարագայում (աղ. 39): Ամենօրյա շփումը նրանց «ներկա է դարձնում» Հայաստանում գտնվող ընտանիքի անդամների, հարազատների առօրյայում, և փոխադարձաբար վերջիններս են «տեղափոխվում» աշխարհի տարբեր երկրներ՝ մաս կազմելով միգրանտների առօրյա և կենսագործունեության:

Աղյուսակ 39.

Հայաստանի հետ կապը՝ ըստ արտագաղթի երկրի (%)

Կապի ձևերը	Ընդհանուր	Արտագաղթի երկիրը				
		Ռուսաստան	Վրչ երկրներ	Եվրոպական երկրներ	ՎՄԸ և Կանադա	Այլ երկրներ
Տեսակապով շփվում են Ձեզ հետ գրեթե ամեն օր	92,2	92,8	88,5	91,2	92,2	91,3
2-3 տարին գոնե մեկ անգամ այցելում են Հայաստան	59,8	65,4	61,5	45,6	53,1	65,2
Այցելում են Հայաստան ընտանեկան միջոցառումների ժամանակ	44,0	49,7	57,7	31,6	34,4	30,4
Հարազատները մեկնում են նրանց մոտ՝ աշխատելու նպատակով	12,2	16,7	7,7	5,1	4,7	4,3
Գումար են ուղարկում	56,3	57,4	34,6	53,7	65,6	52,2
Մասնակցում են հայրենի քաղաքի / գյուղի վերակառուցման աշխատանքներին	7,0	6,4	7,7	8,1	7,8	8,7
Բարեգործություն են անում կարիքավոր ընտանիքների համար Հայաստանում	10,5	9,7	7,7	9,6	15,6	17,4
Մասնակցել են Արցախյան պատերազմի հետ կապված հանգանակություններին	60,6	59,2	42,3	64,0	76,6	39,1

Բնականաբար, միգրանտների շփումները տեսազանգով և հեռախոսազանգով չեն սահմանափակվում. նրանց կյանքի կարևոր իրադարձություններից է հայրենիք կարճաժամկետ այցելությունը, որին պատրաստվում են ամբողջ տարվա ընթացքում: Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 39-ի տվյալները, միգրանտների 59,8%-ը 2-3 տարին գոնե մեկ անգամ այցելում է Հայաստանի հարազատներին, իսկ 44,0%-ը այցելում է Հայաստան ընտանեկան/ազգակցական միջոցառումների ժամանակ (վերջին չորս տարվա՝ 2018-2021 թթ. ընթացքում Հայաստանում եղել է արտագաղթածների

67,6%-ը): Եթե նայենք ըստ երկրների ցուցանիշի, ապա պարզ կդառնա, որ այդ այցելությունները համեմատաբար քիչ են եվրոպական երկրների և ԱՄՆ-ի պարագայում (աղ. 39): Պատճառները թերևս քաղաքացիության կարգավիճակին առնչվող սահմանափակումներն են և հեռավորությունը, սակայն ակնհայտ է՝ նրանք, ովքեր երկար ժամանակ չեն այցելել հայրենիք, այս կամ այն ձևով պահպանում են պարբերական կապերը, շարունակում փոխազդեցությունները հայրենիքի հետ: Կարող ենք ասել, որ անդրազգային միգրացիայի համար փաստացի տեղաշարժը պարտադիր պայման չէ, սակայն փաստացի այցելությունները շատ կարևոր են միգրանտների համար: Նրանք դրանով ոչ միայն ներկա են լինում հայրենիքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, այլև ցուցադրում են իրենց կարգավիճակի դրական փոփոխությունները: Ժամանակ առ ժամանակ այցելելով Հայաստան՝ ոչ միայն հայրենիքի կարոտն են առնում, այլև իրենց՝ որպես հայի, ինքնության պահպանման երաշխիքները «կուտակում»: Դա կարևոր է հատկապես երեխաների և պատանիների համար, որոնք փոքր տարիքում են հեռացել Հայաստանից, և որոնց համար անմիջական շփումներն ու այցելություններն անփոխարինելի են այս հարցում: Ունանք նաև ապագայի պլաններ են գծում, որը ոչ միայն ամրացնում է Հայաստանի հետ կապը, այլև լրացուցիչ գործոն դառնում ինքնության պահպանման համար: «Վերջերս եվրոպական երկրներից ժամանել էին իմ ընկերներն իրենց ընտանիքներով, և հենց դա էր մեր քննարկման օրակարգը՝ երեխաներին, որ այստեղից գնացել են 3-4 տարեկանում, պերք է ամենօրյա ուշադրության ներքո պահել, եթե ուզում ենք մեր ինքնությունը պահել: Ավելին, ուզում են, որ այստեղից հարս տանեն...» (հարցազրույց փնտրեսագետ-փորձագետի հետ՝ դասախոս ՀՊՏՀ-ում):

Փաստորեն, միգրանտի առօրեականությունն ու ապագան պայմանավորված են բազմաթիվ անդրազգային կապերով. նրա ինքնությունը ձևավորվում է մեկից ավելի երկրների սոցիալական

տարածությունների, արժեքային համակարգերի համադրմամբ³⁴: Նա ներառում և վերարտադրում է սոցիալական սպասումներ, մշակութային արժեքներ և նորմեր, մարդկային հարաբերությունների ձևեր, որոնք առաջանում են աշխարհագրորեն տարանջատված մեկից ավելի սոցիալական, քաղաքական, տնտեսական համակարգերի վերադրումից³⁵:

Արտագաղթած ընտանիքների 56,3%-ը պարբերաբար գումար է ուղարկում Հայաստան իր հարազատներին, և եթե կրկին ըստ երկրների դիտարկենք հարցը, կտեսնենք, որ այս պրակտիկան ավելի շատ տարածված է ԱՄՆ, ավելի քիչ՝ ԱՊՀ երկրներ արտագաղթած հայերի շրջանում՝ համապատասխանաբար 65,6%, 34,6% (աղ. 39): Կարող ենք ասել, որ արտերկրի ընտանիքի անդամներից և հարազատներից ձևավորված ցանցը հայաստանցիների համար դառնում է յուրօրինակ «սոցիալական կապիտալ», որը, ըստ Բուրդյեի³⁶, տրամադրում է փաստացի կամ հավանական ռեսուրսներ, այս դեպքում՝ փաստացի ֆինանսական ռեսուրսներ:

Բացի ֆինանսական աղբյուր լինելուց, արտերկրի ցանցը հայաստանաբնակների համար երբեմն հանդես է գալիս որպես գործատու: Այս մասին վկայում են նաև մեր հետազոտության արդյունքները, ըստ որի՝ արտագաղթած ընտանիքների 12,2%-ը հարազատներին կանչում է իր մոտ՝ աշխատանքի նպատակով: Եվ զարմանալի չէ, որ այս ցուցանիշն ավելի մեծ է ՌԴ-ի պարագայում՝ 16,7% (աղ. 39), քանզի գիտենք, որ Ռուսաստանի հետ վիզայի ռեժիմի սահմանափակումներ չկան, մոտ է Հայաստանին, մեկնելու համար քիչ ծախսեր են պահանջվում և, հետևաբար, ամենահարմար տարբերակն է համարվում:

34 Basch L., Glick Schiller N., Blanc-Szanton C. 1994, Nations Unbound: Transnational Projects, Postcolonial Predicaments, and Deterritorialized Nation States, New-York, p. 356.

35 Levitt P. 2001, Transnational Migration: Taking Stock and Future Directions, Global Networks, Volume 1, Issue 3, pp. 196-204.

36 Bourdieu P. 1985. “The Forms of Capital.” In Handbook of Theory and Research for the Sociology of Education, edited by J. G. Richardson, New York: Greenwood Press. pp. 241-258.

Հայրենիքի և հարազատների հետ կապի բազմազան ձևերի վերլուծությունից և քանակական ցուցանիշներից ակնհայտ է դառնում անդրազգային միգրացիոն գործընթացների և պրակտիկաների բազմաբարդությունը, որն առաջացնում է վերջինիս տիպականացման անհրաժեշտություն: Լ. Գարնիգոն տարանջատում է «հիմնական» անդրազգայնությունը, որին համապատասխան՝ միգրացիան միգրանտի սովորական կյանքի անբաժան մասն է՝ հստակ պարբերականությամբ, անընդհատությամբ: Մինևույն ժամանակ, խոսում է «ընդարձակ» անդրազգայնության մասին, որտեղ միգրանտը հստակ պարբերական, շարունակական ներառվածություն չունի, գործում է պատահական, հանգամանքների բերումով³⁷:

Միգրանտների՝ ընտանիքներին ուղարկած դրամական փոխանցումները համալրվում են համայնքային մասշտաբի ներդրումներով, ֆինանսատնտեսական աջակցություններով: Ըստ հետազոտության քանակական տվյալների՝ 7,0%-ը մասնակցել է համայնքների վերակառուցման աշխատանքներին, 10,5%-ը ֆինանսապես օգնել է Հայաստանի կարիքավոր ընտանիքներին (այս պրակտիկան ավելի շատ գործում է եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում և այլ երկրներում, քան Ռուսաստանում բնակվող հայերի շրջանում, աղ. 39): Որոշ միգրանտներ վերակառուցում են համայնքային, գյուղական ենթակառուցվածքները, կառուցում մանկապարտեզներ, եկեղեցիներ և այլն: Սա վկայում է իրենց «նախկին» համայնքին, գյուղին հավատարիմ լինելու և պատկանելության մասին: Ասվածը հաստատվում է նաև ներդրումների ակնհայտ ցուցադրմամբ, որը պետք է հասարակական կարգավիճակը հայրենիքում բարձրացնելու համար: Այս առումով ծրագրի փորձագետն իր դիտարկումն է անում՝ հարցը տանելով պետական վերհասկողության դաշտ. «Նոր գնացած և ֆինանսապես կայացած հայերը կարող է նկարելի բաներ անեն, որը պետք է ուղղորդել: Ես էլի եմ

37 Guarnizo L. E., 2000, Notes on Transnationalism, Paper for Conference: Transnational migration: Comparative theory and Research Perspective, Oxford, UK.

ասել՝ եթե մարդն ունի փող, որ Հայաստանի այսինչ գյուղում հերթական եկեղեցին է կառուցում, պետությունը պետք է իրեն իրավունք վերապահի և ասի՝ իմ առաջնահերթությունը սա է, քո փողը այս նպատակով ծախսիր» (հարցազրույց միգրացիայի հիմնահանդիրներով զբաղվող մասնագետի հետ՝ փորձագետ ԱՄԵ Միջազգային զարգացման գործակալությունում):

Ինչպես ավանդական սիյուոքը, այնպես էլ նոր արտագաղթածներն իրենց նյութական աջակցություններով միշտ ներկա են նաև հայրենիքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին, իսկ Արցախյան վերջին պատերազմը բացառություն չէ: Ե՛վ մեր դիտարկումների արդյունքներով, և՛ քանակական ցուցանիշներով (60,6%-ը մասնակցել է Արցախյան պատերազմի հետ կապված հանգանակություններին, ադ. 39) արտասահմանաբնակ հայերի մեծամասնությունը առանցքային դեր է ունեցել Արցախյան վերջին պատերազմի ժամանակ՝ ֆինանսատնտեսական մեծ օգնություն ցուցաբերելով Հայաստանին և Արցախին: Ըստ աղյուսակի՝ այս օժանդակությունն ավելի մեծ է եղել ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում (համապատասխանաբար, 76,6% 64,0%), քան ՌԴ-ում բնակվող հայերի շրջանում:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը նշվածը և առաջ քաշելով անդրազգային միգրացիոն գործընթացների մասշտաբայնության հարցը, կարող ենք ասել, որ միգրանտներից ոմանք կարող են ներառված լինել անդրազգային տնտեսական ակտիվության մեջ՝ մասնակցություն չունենալով, օրինակ, մշակութային միջոցառումներին, մյուսները կարող են ներառված լինել բոլոր տեսակի անդրազգային ակտիվություններում՝ հարազատներին դրամական փոխանցումներից մինչև լիարժեք մասնակցություն հայրենիքի անգամ քաղաքական կյանքին: Առաջին դեպքում գործ ունենք «ընտրողական», իսկ երկրորդում՝ «ընդհանրական» անդրազգային ակտիվության հետ³⁸:

38 Levitt P. 2001, Transnational Migration: Taking Stock and Future Directions, Global

7.2. Արտագաղթածների սեփականությունը Հայաստանում

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքները, միգրանտների 55,6%-ը Հայաստանում տուն ունի, որը ևս հայրենիքի հետ կապի կարևոր միջոց է: Այն կարող է դառնալ նաև դեպի հայրենիք հետագա վերադարձի կարևոր պայման: Օրինակ՝ Հայաստան վերադառնալու մտադրություն ունեցողների մեջ 63,3%-ը տուն ունի հայրենիքում, իսկ նրանք, ովքեր ներկայիս բնակության երկրից առաջիկա մեկ տարվա ընթացքում մտադիր են տեղափոխվել այլ երկիր, տուն չունեն Հայաստանում:

Աղյուսակ 40.

Հայաստանում սեփականության առկայությունը (%)

Սեփականությունը	Ընդամուտ	Ըստ արտագաղթի երկրի				
		Ռուսաստան	Վրչ երկրներ	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա	Այլ երկրներ
Բնակարան	55,6	59,5	46,2	50,7	48,4	47,8
Հողամաս	29,7	35,4	26,9	18,4	28,1	8,7
Ավտոմեքենա	8,1	8,7	3,8	5,1	12,5	8,7
Բիզնես	1,1	0,5	3,8	0,0	6,3	0,0

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 40-ի տվյալներից, բնակարանով ավելի շատ ապահովված են ՌԴ, քան այլ երկրներ արտագաղթած ընտանիքները: Նրանցից շատերը ոչ միայն չեն վաճառել իրենց բնակարանը, այլև վերակառուցում և վերանորոգում են այն, գնում նաև նորը: Ծրագրի փորձագետներից մեկն այս առումով իր դիտարկումն է անում. «Գիտեմ բազմաթիվ դեպքեր, երբ արտասահմանից ներդրումներ արեցին, օրինակի համար, առան

բնակարաններ Երևանում, մուրիկ մարզերում: 2018 թվականից հետո եկան և գնեցին հող, տարածքներ, այգիներ և այլն» (փորձագիտական հարցազրույց ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի միգրացիայի հարցերով զբաղվող դասախոսի հետ):

Ըստ հետազոտության արդյունքների՝ նրանք, բացի տնից/բնակարանից, ունեն նաև հողամաս (29,7%), ոմանք՝ ավտոմեքենա, փոքր մասը՝ նույնիսկ բիզնես (աղ. 40): Սեփականության առկայության միջոցով միգրանտներն ուզում են փաստել «նախկին» բնակավայրերում իրենց «ներկայությունը», հիշեցնել իրենց մասին՝ ի ցույց դնելով սեփական հաջողություններն ու սոցիալական նոր կարգավիճակը:


Այսպիսով, հետխորհրդային տարիներին արտագաղթածները, ապրելով արտերկրում, առանձնահատուկ կապված են Հայաստանին: Իրենց սեփականությունը Հայաստանում, հայրենիքի հետ անդրազգային հաղորդակցությունը, որը նոր միգրանտները ծավալում են ՀՀ-ում գտնվող հարազատների հետ, և անդրազգային ընդգրկվածությունը՝ մասնակցությունը հայրենիքում ընտանեկան և այլ մշակութային միջոցառումների, դրամական փոխանցումները, ապահովում են նրանց ներկայությունը մեկից ավելի սոցիալական տարածքներում՝ վերածելով մեկից ավելի մշակույթների կրողի:

7.3. Հայաստան հնարավոր վերադարձի մասին կարծիքները

Հետազոտության կարևոր խնդիրներից էր նաև պարզել, թե միգրանտները երբևէ կվերադառնան Հայաստան, և որոնք են վերադարձի պատճառները: Ըստ գծապատկեր 15-ի ցուցանիշների՝ միգրանտի ընտանիքի անդամների 71,3%-ը այդ հարցին տվել է բացասական, իսկ 20,6%-ը՝ դրական պատասխան:

Գծապատկեր 15.

Հայաստան հնարավոր վերադարձի մասին կարծիքներ (%)



Միլիոնքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչը, անդրադառնալով այդ խնդրին, նշել է, որ, Հայաստանից արտագաղթի հետ առկա է նաև ներգաղթ: Նա հարցազրույցի ժամանակ հրապարակեց հետևյալ թվերը՝ 2018-2020 թթ. 32000 հայրենակից դարձել է ՀՀ քաղաքացի: Ընդ որում, 2020 թ. նրանց թիվը 9600 մարդ էր, երբ պատերազմի և դրա հետևանքների շրջանն էր: Բացի այս, հազարավոր մեր հայրենակիցներ ընդունում են կացության մշտական կարգավիճակ կամ հատուկ կարգավիճակ, որը 10 տարով անձնագիր է տրամադրում: Ըստ նրա՝ այդ ցուցանիշի մեջ զգալի են հետխորհրդային շրջանում արտագաղթած ընտանիքները. «Ամենաշատը մենք հայրենադարձություն կամ վերադարձ ունենք ՌԴ-ից: Ունենք և՛ Ուկրաինայից, և՛ Միջին Ասիայից, և՛ Վրաստանից, բայց անհամեմատ գերակշռում են ՌԴ-ից վերադարձող մեր հայրենակիցները: Նրանք վերադառնում են փարբեր պատճառներով՝ նախ, արդեն երեխա ունեն մեծացնելու և այդ երեխային ուզում են մեծացնել հայրենիքում, երեխա ունեն կրթություն փակել, որին ուզում են կրթության փակ ՀՀ-ում, և երկրորդը՝ արդեն այնքան կայացած են, որ կարող են իրենց թույլ փակ հայրենիքում սեփական բիզնեսը դնել: Բացի այդ, կան խմբեր, որոնց վիճակն այնպես վատթարացել է, և նրանք նախընտրում են վերադառնալ, եթե հյուրընկալ երկիրը այդպիսի առավելություններ չի տալիս» (փորձագիտական հարցազրույց

Միյունքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետի հետ):

Միգրանտների վերադարձի խնդիրը հետազոտողները պայմանավորում են արտերկրում նրանց ունեցած հաջողություններով՝ ձեռք բերած բարձր եկամուտներով, որի միջոցով ծագման երկրում զբաղվում են ձեռներեցությամբ և բացում նոր աշխատատեղեր: Բացի ֆինանսական միջոցներ ձեռք բերելուց, այդ գործընթացն ազդում է նրանց զարգացման մակարդակի վրա. միգրանտների որոշ մասն օտար միջավայրում ձեռք է բերում նոր մասնագիտություն, հմտություններ և նոր գաղափարներ, որոնք վերադառնալուց հետո ներդնում է ծագման երկրի զարգացման համար: Այս առումով ուշագրավ է Լևիթի՝ «սոցիալական տրանսֆերտների» հայեցակարգի մասին մոտեցումը, որով միգրացիոն գործընթացների համար, փողային փոխանցումներից բացի, արդի փուլում կարևորվում են «գաղափարների, գործելակերպի, հմտությունների, ինքնության և սոցիալական կապիտալի փոխանցումները՝ ուղարկող և ընդունող համայնքների միջև»³⁹: Հարցազրույցին մասնակցած ՏԿԵՆ Միգրացիոն ծառայության աշխատակիցներից մեկի կարծիքով՝ այդ հարցում անհրաժեշտ է մշակել ճիշտ ուղղվածություն. «Եթե մի քիչ ավելի ճիշտ ուղղվածություն որդեգրենք, էս հարցը կլուծվի: Բայց սրա համար երկարաժամկետ և կարճաժամկետ քայլեր են պետք մշակել, այսինքն՝ եթե մենք ուզում ենք վերադառնան, ապա դրա համար պետք է սկսենք քայլեր մշակել: Բայց մարդիկ, եթե չեն վերադառնում, չասենք՝ դուք հայ չեք, էս չեք, էն չեք: Այսինքն՝ մենք չպիտի փակենք ինչ-որ դռներ մեր հայրենակիցների առջև: Հակառակը, մենք պիտի այնպես անենք, որ եթե նույնիսկ ֆիզիկապես չվերադառնան, միգրացի վիրտուալ վերադառնան: Եթե վիրտուալ չվերադառնան, միգրացի իրենց երեխաները, թոռները, ծոռները վերադառնան: Այսինքն՝ մենք էս առումով իսկապես պետք է ազգային ուղղվածու-

39 Levitt, P. 1998, Social Remittances: migration driven local-level forms of cultural diffusion, *International Migration Review*, 32:4, 926-948.

րություն մշակենք: Սա իմ րեսակերն է այն առումով, որ սա մի օրվա հարց չի: Եթե փարհներով խնդրին լուծում չի տրվել, և ամբողջ գործունները ի վսաս են աշխատել, որ մարդիկ որոշում են կայացրել, բայց չպիտի մենք անդադնալիորեն իրենց կորցրած համարենք, այլ մենք պիտի համարենք, որ մենք փասը միլիոն ենք, և բոլորի հնարավոր պոտենցիալ վերադարձ, թեկուզ ոչ ֆիզիկապես, բայց հոգուր Հայաստանի և հայրենիքի, հնարավոր է: Մենք պետք է մրաժենք, թե ինչպես դա հնարավոր դարձնել» (փորձագիտական հարցազրույց ՏԿԵԿ Միգրացիոն ծառայության մասնագետի հետ):

Փորձագետներից մեկը, որ աշխատել է Սփյուռքի նախարարությունում (2008-2013 թթ.), մասնակցել է «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգը» և «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակմանը, նշել է, որ դրանով, սփյուռքահայերից բացի, նախատեսվում էր հայրենադարձի կարգավիճակ շնորհել նաև ՀՀ-ից առնվազն 15 տարի առաջ արտագաղթած հայերին, որոնք այդ կարգավիճակը ստանալու նպատակով դիմում են ներկայացրել. «Հայաստանից հեռացածների շրջանում առկա էր որոշակի միտում՝ հայրենիք վերադառնալու և մշտական բնակչություն հաստատելու ուղղությամբ, որի պարձառով էլ հայեցակարգում և օրենքի նախագծում ներառվել էր ՀՀ-ից առնվազն 15 տարի բացակայող ՀՀ քաղաքացիներին հայրենադարձի կարգավիճակ շնորհելու դրույթը» (դասախոս, ԵՊՀ պարունության ֆակուլտետ, սփյուռքի հիմնասինդիքներով զբաղվող փորձագետ):

Հետազոտությունը ցույց տվեց, որ միգրանտի ընտանիքի անդամները նրա վերադարձի համար չեն կարևորել արտերկրում նրա ձեռք բերած միջոցներով իրենց համայնքներում փոքր բիզնես հիմնելու և նորարական գաղափարներ իրագործելու մոտիվը: Վերադարձն ավելի շատ պայմանավորել են հոգեբանական առումով՝ հայրենիքում ապրելու, կարտի, ծերությունը Հայաստանում անցկացնելու հանգամանքով (53,8%): Նրանց 24,0%-ը հարազատ-

ների վերադարձի համար նշել է անձնական պատճառներ (ընտանիքի վերամիավորում՝ 21,1%, ամուսնանալու նպատակ՝ 2,9%): Հարազատների վերադարձի մյուս պատճառները հարցման մասնակիցների 8,2%-ը պայմանավորել է Հայաստանում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման ակնկալիքով, 4,7%-ը՝ երեխաների հայեցի կրթություն ստանալու և արտերկրում որոշակի խնդիրներ ունենալու հանգամանքով:

Աղյուսակ 41.

Հայաստան վերադառնալու պատճառները (%)

Պատճառները	%
Կարոտում են Հայաստանը	14,6
Ուզում են հայրենիքում ապրել	34,5
Ընտանիքի վերամիավորման համար	21,1
Հայաստանի վիճակի բարելավման ակնկալիքով	8,2
Որ երեխաները կրթություն ստանան Հայաստանում	4,7
Ծերությունը Հայաստանում անցկացնելու	4,7
Ամուսնանալու նպատակով	2,9
Արտերկրում խնդիրներ ունեն	4,7
Դժվարանում են պատասխանել	4,7
Ընդամենը	100,0

Փորձագետներից մեկը վերադարձի համար կարևորել է Հայաստան ձգող գործոնների դերը՝ գործազրկության ցուցանիշների կրճատումը, բնակչության կենսամակարդակի բարձրացումը. «Հայրենիքը սիրելով, էմոցիոնալ կողմով պայմանավորել միգրացիոն վեկտորի ուղղությունը, ճիշտ չի: Դա հաշվարկի արդյունք է՝ ծախսեր և ակնկալիքներ կողք կողքի դնել և րեանել, թե քեզ որտեղ է հարմար: Որպեսզի դա լինի, պետք է Հայաստանի վանող գործոնների դերակատարումը նվազի էսպես, դրա փոխարեն ավելանան ձգող, կլանող գործոնները՝ բարձր կենսամակարդակ, կայունություն, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, ճիշտ

արժեքային համակարգ: Արելություն, չարություն, չարահինդություն չլինի երկրում. դրանք վանող գործոններ են բոլորը» (դասախոս, ԵՊՀ Կրթնազգիության ֆակուլտետ, միգրացիայի հարցերով փորձագետ): Այսպիսով, միգրանտների վերադարձի համար պետությունը պետք է կիրառի ակտիվ նախաձեռնողական քաղաքականություն նրանց հետագա զբաղվածության հարցում: Մասնավորապես այն միգրատներին, որոնք վաստակել են որոշ ֆինանսական միջոցներ, ձեռք են բերել նոր գիտելիքներ ու հմտություններ, պետությունը պետք է աջակցի, որ դրանք ներդրվեն ընտանիքի և համայնքի զարգացման գործում:

ԷԹՆԻԿ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻԳՐԱՆՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՆԱԿԿՈՂ
ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընդունող երկրում էթնիկ ցանցի առկայության կամ բացակայության հանգամանքը կարևոր գործոն է մշտական բնակության մեկնած անձանց և նրանց ընտանիքի անդամների համար: Հաճախ էթնիկ սոցիալական ցանցի դերը ուսումնասիրվում է միգրացիոն հոսքերի ընդլայնման, դրանց ուղղությունների ընտրման, ռիսկերի նվազեցման, օտար միջավայրում միգրանտների հարմարման, անդրազգային գործընթացների տեսանկյունից⁴⁰: Գրեթե աննշան են էթնիկ ցանցի հոգեբանական նշանակությունն ուսումնասիրած հետազոտությունները, մինչդեռ ընդունող երկրում էթնիկ ցանցի առկայության կամ բացակայության հանգամանքը էական հոգեբանական դեր կարող է ունենալ ինչպես հենց արտագաղթողի, այնպես էլ վերջինիս ընտանիքի անդամների համար՝ իրենց հարազատի արտագաղթի հանդեպ վերաբերմունքի ձևավորման գործում: Այն կարող է նաև օգնել արտագաղթողի ընտանիքի անդամներին ավելի ստույգ պատկերացում կազմել օտար երկրում իրենց հարազատի կյանքի պայմանների մասին, ընկալել նրա դժվարությունները, ճախողումները կամ հաջողությունները և այդպիսով ավելի իրական և խորքային հարաբերություն պահպանել արտագաղթողի հետ՝ նրա արտագաղթից հետո:

Էթնիկ ցանցը, ինչպես արտերկիր մեկնած անձի, այնպես էլ նրա՝ Հայաստանում ապրող ընտանիքի անդամների համար կարող է համարվել արտագաղթը պայմանավորող կարևոր հոգեբանա-

40 Арутюнян Ю. В. 2011, Об Армянской диаспоре в России. Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара, Ереван, «Гитутюн» НАН РА, 151 с.

կան հանգամանք, և նրանք կարող են ընկալել դա որպես որոշակի պաշտպանիչ գործոն արտագաղթողի համար՝ կատարելով ֆրանսիացի հոգեբան Դիդիե Անգլոյի⁴¹ նկարագրած «պաշտպանիչ ծրարի» դեր: Ըստ Դ. Անգլոյի՝ ընտանեկան, մշակութային, սոցիալական հարաբերությունների շերտերը կարծես թաղանթներ լինեն, որոնք անձին պաշտպանում են արտաքին սոցիալ-մշակութային միջավայրի անկանխատեսելի գործոններից: Կարող ենք համարել, որ արտագաղթողի համար ընդունող օտար երկրում առկա էթնիկ ցանցը կարող է համատեղել ընտանեկան, մշակութային, սոցիալական հարաբերություններում առկա հարաբերությունները՝ նրա համար դառնալով «պաշտպանիչ ծրար»:

Մեր հետազոտության համար կարևոր է հաշվի առնել մշտական բնակության նպատակով մեկնած միգրանտների ընտանիքների հոգեբանական առանձնահատկությունները: Նշենք, որ այս ընտանիքները, որպես կանոն, «կիսված» ընտանիքներ⁴² են («անդրազգային ընտանիքներ»), որոնք ապրում և զարգանում են բաժանման մշտական զգացման, մեծ հեռավորության վրա ընտանեկան հարաբերությունների պահպանման խնդրի, ինտենսիվ վիրտուալ շփման պայմաններում: Երկարատև բաժանման զգացումը արտագաղթողի ընտանիքի անդամների համար էլ ավելի կարևոր է դարձնում ընդունող երկրում օգնող, աջակցող մարդկանց ներկայությունը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մշտական բնակության մեկնած միգրանտները հիմնականում միգրացիայից առաջ ընդունող երկրում արդեն ունենում են որոշակի սոցիալական կապեր. այդ մարդիկ սովորաբար ազգությամբ հայեր են (միգրանտի ընտանիքի անդամները, բարեկամներ, ընկերներ, ծանոթներ և այլն): Իսկ եթե չեն ունենում նման սոցիալական ցանց, ապա տեղում փորձում են ստեղծել որոշակի սոցիալական միջավայր, որում կիրառործվեն և կրավարարվեն միգրանտի ինք-

41 Anzieu, D. et al. 2000, Les enveloppes psychiques, Dunod, Paris, 287p.

42 Գալստյան Մ., Օհանջանյան Ռ., Ջաքարյան Թ., Հակոբյան Գ. 2017, Արդի հայ ընտանիքը փոխակերպվող հասարակությունում, «Գիտություն», Երևան, 328 էջ:

նության պահպանման, սոցիալական ռեսուրսների տիրապե-
ման, խմբի ներսում ու դրանից դուրս փոխհարաբերությունների
հարմարավետության ապահովման պահանջները⁴³: Այսպես՝ էթ-
նիկ ցանցի առկայությունը կարող է մեծ հոգեբանական կարևո-
րություն ունենալ մշտական բնակության մեկնած անձանց ընտա-
նիքի անդամների համար՝ ընկալվելով որպես արտագաղթողի
համար պաշտպանիչ գործոն օտար երկրում, ինչպես նաև տեղում
նրա հարմարմանը նպաստող էական հանգամանք:

Ելնելով այս նախնական դատողություններից՝ մեր հետազոտա-
կան աշխատանքի *նպատակն է* ուսումնասիրել էթնիկ ցանցի հո-
գեբանական նշանակությունը մշտական բնակության նպատա-
կով մեկնած միգրանտի՝ Հայաստանում բնակվող ընտանիքի ան-
դամների շրջանում: Մեր հետազոտության հիմնական *խնդիրներն*
են ուսումնասիրել՝

- էթնիկ ցանցի մասին պատկերացումները մշտական բնակու-
թյան մեկնած միգրանտի ընտանիքի՝ Հայաստանում ապրող ան-
դամների շրջանում,
- էթնիկ ցանցի անդամներին կատարվող վերագրումների բնույ-
թը,
- էթնիկ ցանցի մասին պատկերացումները՝ ըստ ընտանիքի պատ-
մության մեջ արտագաղթի ունեցած դերի:

Հետազոտության *առարկան է* էթնիկ ցանցի հոգեբանական նշա-
նակությունը մշտական բնակության նպատակով մեկնած միգ-
րանտի՝ Հայաստանում բնակվող ընտանիքի անդամների շրջա-
նում: Հետազոտության *սուբյեկտներն* են արտերկրում մշտական

43 Ներսիսյան Ս. 2014, Ցանցային հարաբերությունների առանձնահատկություն-
ները սփյուռքում. հայերի ինքնակազմակերպման խնդիրները այլ էթնիկ
միջավայրում, էջ 93-114, Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմա-
տական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, Հայաստանի և սփյուռքի
էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ N7, խմբ.՝ Ռ.Ս.Կարապետյան,
Երևան, «Գիտություն»:

բնակություն հաստատած անձանց ընտանիքի՝ Հայաստանում բնակվող անդամները:

Հետազոտության ընտրանքը կազմում են մշտական բնակության մեկնած միգրանտների՝ Հայաստանում ապրող ընտանիքի անդամները: Ընտրանքը կազմված է 60 հոգուց, որոնք մշտական բնակության մեկնած անձանց ծնողները, զավակները կամ քույր-եղբայրներն են: Հետազոտության 60 մասնակցից 42-ը՝ իգական, 18-ը արական սեռի անձինք են, որոնց տարիքը տատանվում է 22-75 տարեկանի սահմաններում: Նրանցից 33-ը բնակվում են Երևանում, 27-ը՝ մարզերում: 60 մասնակցից 16-ի ընտանիքի անդամ/ներ/ը մշտական բնակության է/են մեկնել ԵՄ որևէ երկիր, 10-ը՝ ԱՄՆ և Կանադա, իսկ 34-ը՝ ՌԴ: Նրանցից 38-ը արտագաղթի նպատակը նշում է աշխատանքը, որոնցից 4-ը որպես պատճառ նշում է ֆինանսական կամ սոցիալական ծանր դրությունը: 11 դեպքի համար արտագաղթի նպատակը ամուսնությունն է: Ընտրանքի մնացած մասնակիցները 2 դեպքի համար որպես միգրացիայի դրդապատճառ նշում են «պատերազմից խուսափումը », 2-ը՝ ուսումը, 2-ը՝ ընտանիքի վերամիավորումը, իսկ մեկական դեպք նշվում է «Հայաստանում չհարմարվելը», «ստողջական խնդիրը», «հասարակությունից խուսափելը», «անորոշությունը», 1 դեպքի առնչությամբ էլ հատուկ պատճառ չի նշվում:

60 մասնակցից 28-ը նշում է, որ իր հարազատը արտագաղթելուց առաջ ընդունող երկրում չի ունեցել որևէ սոցիալական կապ կամ էթնիկ ցանց, իսկ 32-ը նշում է, որ ունեցել է նման ցանց:

Հետազոտությունն իրականացվել է *որակական* մեթոդաբանությամբ՝ հոգեդինամիկ տեսությունների մոտեցումներին համապատասխան: Հետազոտության մեթոդներն են. *կիսակառուցվածքային հարցազրույցը*, որն անցկացվել է նախապես պատրաստված 24 բաց հարցերով հարցարանի միջոցով, *չներգրավված դիպուամը* և *տրհմածառի մեթոդիկան* (վերջինս ևս բաց հարցերով հարցարան է, որի շնորհիվ փորձել ենք պարզել, թե ընտանիքի պատմու-

թյան մեջ արտագաղթի դեպքեր առկա են, թե ոչ, և ինչ նշանակու-
թյուն ունի արտագաղթը հետազոտվողի ընտանիքի համար):

Վերը նշված մեթոդների կիրառմամբ ստացված արդյունքները
վերլուծվել են *բովանդակության վերլուծության* միջոցով:

Հետազոտական մեթոդների կիրառման շնորհիվ ստացել ենք
որակական տվյալներ, որոնք փորձելու ենք ներկայացնել բովան-
դակության թեմատիկ վերլուծությամբ: Նախ ներկայացնենք մի
քանի թվային տվյալ, որից հետո կանդրադառնանք հիմնական
թեմաներին, որոնք դուրս ենք բերել ընտրանքի հետ հարցազ-
րույցների բովանդակության վերլուծությունից:

Հետազոտության 60 մասնակիցներից 32-ը հաստատում է, որ իր
ընտանիքի անդամ(ներ)ի մշտական բնակության մեկնելու համար
նշանակալից է եղել էթնիկ ցանցի առկայությունը ընդունող երկ-
րում, և որ այն վճռորոշ է եղել ինչպես արտագաղթելու որոշումը
կայացնելու հարցում, այնպես էլ արտագաղթի առաջին փուլում
արտագաղթողի հարմարմանը նպաստելու առումով: Իսկ հետա-
զոտվողներից 27-ը նշում է, որ իր ընտանիքի անդամն ընդունող
երկրում ոչ ոք չի ունեցել, և արտագաղթի որոշում կայացնելու մեջ
էթնիկ ցանցը նշանակություն չի ունեցել: Մեկ մասնակից նշում է
ընդունող երկրում ոչ նշանակալից էթնիկ ցանցի առկայության
մասին: Կարող ենք նկատել, որ, ըստ արտագաղթի նպատակի,
էթնիկ ցանցի առկայության պատկերը զգալիորեն տարբեր է:
Նշենք, որ մեր ընտրանքի դեպքում առանձնանում է արտագաղթի
երկու հիմնական նպատակ՝ աշխատանք (38 դեպք) և ամուսնու-
թյուն (11 դեպք): Այսպես՝ աշխատանքի նպատակով մեկնած ան-
ձանց դեպքում 38 դեպքից 25-ը մինչև արտագաղթելը ընդունող
երկրում ունեցել է էթնիկ ցանց, իսկ 13-ը չի ունեցել: Մինչդեռ
ամուսնության նպատակով արտագաղթի պարագայում 11 դեպքից
և ոչ մեկը չի ունեցել էթնիկ ցանց ընդունող երկրում (բացի այն ան-
ձից կամ նրա ընտանիքից, որի հետ ամուսնանում է):

Հարցազրույցների ընթացքում հետազոտվողները տարբեր հա-
մատեքստերում անդրադառնում են էթնիկ ցանցի կարևորությա-

նը իրենց ընտանիքի անդամի արտագաղթի իրականացման և արտերկրում մշտական բնակություն հաստատելու համար: Էթնիկ ցանցի դերը նրանք կարևորում են՝ ելնելով երկու հիմնական հանգամանքից. այն որպես արտագաղթողի միգրացիան պայմանավորող գործոն և տեղում արտագաղթողի ինտեգրմանը նպաստելու գործոն:

8.1. Էթնիկ սոցիալական ցանցը՝ որպես արտագաղթը պայմանավորող և ընդունող երկրում ինտեգրմանն օգնող գործոն

Հետազոտության այն մասնակիցները, որոնք նշում են իրենց ընտանիքի անդամի արտագաղթից առաջ ընդունող երկրում էթնիկ ցանցի առկայության մասին, հաճախ շեշտում են, որ էթնիկ ցանցի առկայությունը նրանք համարում են իրենց ընտանիքի անդամի արտագաղթի հիմքում ընկած և դա պայմանավորող առաջնային գործոն: Այսպես, հետևյալ տրամաբանությունն է գործում. «Եթե ծանոթ [մարդ] չլինեք, հավանաբար չէր գնա, որովհետև շատ կարևոր է եղել այնպեղ աջակցող ուժի առկայությունը», «Կարծում եմ [եթե ծանոթ մարդ չլինեք], չէր լինի նման որոշում, այն ժամանակ ուղղակի հեշտ չէր արտագաղթելը, ինչպես հիմա է: Երևի իրենք էլ չէին գնա, կարևոր էր ունենալ դրսում մեկը, որ կարողանայիր արտագաղթել», «Եթե հարազատ մարդ չլինեք, չէր կայացվի նման որոշում: Գնացել են հիմնականում հարազատի համար, հարազատն է կանչել: Նույն հաջողությամբ չգնացին Ֆրանսիա կամ այլ երկիր, [գնալը] ավելի շատ կապված է ազգակցական կապի հետ, կապ չունի երկիրը»: Հետազոտվողներից երեքը նույնիսկ նշում է, որ առհասարակ չի պատկերացնում արտագաղթը՝ առանց տեղում էթնիկ ցանցի առկայության. «Բնական է՝ պետք է ծանոթ ունենան, որ կարողանան գնալ», «Առանց ծանոթի հնարավոր չէ», «Կգնար այնպեղ, ուր հարազատ կա: Հնարավոր է ընտրվել այլ քաղաք, բայց այն, որ այնպեղ հարազատ մարդ կա, թե՛ մեզ է

օգնում լինել ավելի հանգիստ, թե՛ իր համար է լավ, որ այնպեղ կա հարազատ մեկը, որին հարցերի դեպքում կարող է դիմել»։ Համոզվածությունը, որ էթնիկ ցանց ունենալն անհրաժեշտություն է նոր երկրում հաստատվելու համար, առկա է նաև այլ հետազոտվողների շրջանում. նրանք ուղղակիորեն չեն խոսում այդ մասին, սակայն ոչ միջնորդավորված արտահայտում են դա:

Այն փաստը, որ էթնիկ ցանցի առկայությունը այս մասնակիցների համար ընկալվում է որպես վճռորոշ պայման իրենց ընտանիքի անդամի՝ արտերկիր մեկնելու որոշումը կայացնելու գործում, թույլ է տալիս ենթադրել, որ էթնիկ ցանցի առկայությունն այս անձանց համար կարող է կարևոր պաշտպանական նշանակություն ունենալ, հատկապես արտագաղթի որոշումը կայացնելու և արտագաղթելու պատասխանատվությունը էթնիկ ցանցի հետ կիսելու առումով: Էթնիկ ցանցը հետազոտության մասնակիցների համար կարծես սուբյեկտիվորեն դառնում է արտագաղթի արմատական պայման՝ իր վրա վերցնելով դրա դրական և բացասական կողմերի, հետևանքների, ինչպես նաև հատկապես անորոշության պատասխանատուն:

Հետազոտության մասնակիցները հաճախ հատկապես շեշտում են էթնիկ ցանցի կարևորությունը իրենց ընտանիքի անդամի՝ ընդունող երկրում հաստատվելու, ինտեգրվելու գործում:

Հարցազրույցների ընթացքում ակնհայտ է, որ ընտանիքի անդամների համար միգրանտն ընկալվում է որպես ինքնին, ի սկզբանե օգնության կարիք ունեցող մարդ. մեկը, ով ապրում է որոշակի արտակարգ հանգամանք կամ կյանքի ինչ-որ բարդ փուլ, որի պատճառով ունի օգնության, նեցուկի, անգամ խնամքի կարիք:

Հարցազրույցների ժամանակ հետազոտության մասնակիցներն էթնիկ ցանցի անդամների մասին խոսելիս հաճախ վերջիններիս դիտարկում են որպես օգնության աղբյուր, նրանց վերագրում օգնողի գործառույթ: Իրենց խոսքում նշում են, օրինակ, այն մասին, որ տեղում ծանոթները, հարազատները լուծել են արտագաղթողի

համար հատկապես նախնական փուլի խնդիրները, օրինակ. «Մեր ծանոթը օգնում է իրենց [ծնողներին], նախօրոք տուն էր գրել, դիմավորել էր: Գիրեին, որ մենակ չեն, դժվար կլիներ առանց ծանոթի»:

Հարցազրույցների ժամանակ մասնակիցներն իրենց խոսքում հաճախ կիրառում են «օգնող ձեռք» արտահայտությունը («Որ մերոնց հետ լավ են վերաբերվում, ես ինչ-որ տեղ հանգստանում եմ, որ իրենց օգնող ձեռք կա» կամ «Քանի որ հայեր կան, մանավանդ հարազատներ, ավելի ապահով ենք զգում, որ օգնության հարց լինի, ձեռք են մեկնում»): Ակնատու է, որ երբ միգրանտին ընդունող երկրում օգնող մարդիկ կան, հետազոտության մասնակիցների մոտ նկատվում է հանգստության զգացում. «Դե հանգիստ ենք, որ հարազատներ կան, որ իրեն կօգնեն ամեն հարցում, ի վերջո ընտանիք են, դա շատ կարևոր է», «Ավելի հանգիստ ենք, որ շրջապատ ունեն, շփվում են, օգնող ձեռք ունեն, որ դժվար պահին կարող են օգնել»:

Տարբեր հետազոտություններ փաստում են, որ շրջապատի մարդկանց աջակցությունը միգրանտ սուբյեկտի համար կարևոր պաշտպանիչ գործոն է: Այն չեզոքացնում է իրավիճակի սթրեսածին ազդեցությունը՝ ուժեղացնելով ինքնազնադատականը և սեփական անձի արդյունավետության, պետքականության զգացումը, իսկ դրանք տոկոսության համար կենտրոնական տարրեր են⁴⁴: Հարկ է նշել, սակայն, որ միգրանտի և նրա ընտանիքի համար էթնիկ ցանցից ստացած օգնությունն ունի նաև արտագաղթի պատասխանատվությունը կիսելու նշանակություն, որը մեծ կարևորություն ունի միգրանտի մեջ ապահովության զգացումը վերականգնելու համար:

44 Martin, E., Steyart, M., Deccache, A. 2005. Favoriser la résilience de l'enfant migrant primoarrivant et de sa famille. Rapport de recherche Projet UNISOLUCL.:<http://docplayer.fr/24961559-Projet-unisol-ucl-partie-i-rapport-de-recherche-documentde-travail.html>

Ավելին, հետազոտության մասնակիցների շրջանում էթնիկ ցանցի մասին պատկերացումներում կարող ենք նկատել, որ էթնիկ ցանցին վերագրվում է նաև միգրանտին տրվող ապահովության գործառույթ («*Եթե կան հայեր, իրենք [միգրանտները] կարող են իրենց ապահովության մեջ զգալ*», «*Որքան շար շփում ունենան հայերի հետ, այնքան ավելի ապահով կլինեն*») : Այս համատեքստում կարող ենք տեսնել էթնիկ ցանցի «պաշտպանիչ ծրարի» գործառույթը, որտեղ էթնիկ ցանցն ընկալվում է որպես աջակցություն և ապահովության զգացում ստեղծող գործոն, պաշտպանում անձին օտար և նոր միջավայրում առկա անկանխատեսելի հանգամանքներից :

Հաճախ կարող ենք նկատել, որ միգրանտի ընտանիքի անդամները հարաբերականորեն *բարձր սպասելիքներ ունեն էթնիկ ցանցի անդամներից* : Առկա է միտում էթնիկ ցանցին վերագրել այնպիսի գործառույթներ, որոնք նա կարող է մասամբ կատարել կամ չկարողանալ կատարել : Դրանք այնպիսի գործառույթներ են, որ անձը կարող է ակնկալել սերտ ազգակցական հարաբերություններից, մասնավորապես՝ ընտանիքից : Ավելի ստույգ, էթնիկ ցանցի անդամները հետազոտության մասնակիցների կողմից հաճախ կարող են ընկալվել որպես միգրանտին առանց նախապայմանների պաշտպանող, նրա մասին հոգ տանող, կենցաղային պայմաններ ապահովող մարդիկ : Այսինքն՝ միգրանտի ընտանիքի անդամները որոշակի իդեալական պատկերացում ունեն էթնիկ ցանցի անդամների վերաբերյալ : Այդ իդեալականացումը, որպես կանոն, գործնականում չի հաստատվում : Անհամապատասխանությունը նրանց սպասելիքներին և վերագրումներին ինչպես միգրանտի, այնպես էլ նրա ընտանիքի անդամներին հաճախ հիասթափեցնում է՝ «Շատ հաշվարկով հարաբերություններ են», «Ջերմություն չկա, մարդկություն չկա» : Այս հանգամանքը կարող է նաև առիթ դառնալ լքվածության զգացման՝ հանգեցնելով ցանցի անդամների հետ կոնֆլիկտների, ընդհուպ հարաբերությունների խզման («...գործնական են իրար հետ [ընկերոջ հետ], այլևս չի

դիմի օգնության: Առանձնացել է, որովհետև պայմանները չի հավանել, լարված հարաբերություններ են եղել» կամ «Քույրս մի կերպ տղայիս օգնեց, շար մեծ դժվարությամբ: Տղաս, հալածվեցի քնելով, իր թոք ու մորը լսելով, մի քանի ամիս մնաց, մի քանի տարվա նյարդեր քայքայեց այնպես, գնաց»):

Էթնիկ ցանցի վերաբերյալ չափազանցված սպասելիքների համատեքստում կարող ենք նկատել նաև այն, որ հետազոտության մասնակիցները կարծես թե ակնկալում են, որ իրենց ընտանիքի անդամը ընդունող երկրում կարող էր ունենալ Հայաստանում ունեցած սոցիալական հարաբերություններին համարժեք հարաբերություններ: Այս երևույթը փաստում են հետևյալ արտահայտությունները. «Այնպես հարաբերությունները շար գործնական են, ազգակցական չեն», «Շփումներ ունի, բայց միևնույն է՝ Հայաստանի նման չէ» կամ «Այն, ինչ այսպես է ունեցել, նույնը այնպես է չունի»: Այս համատեքստում կարող ենք նկատել հերքում՝ կապված այն բանի հետ, որ միգրանտը, լքելով հարազատ երկիրը, կարող է ունենալ կորուստ՝ այս պարագայում սոցիալական կյանքի բովանդակության կորուստ: Այս կորստի հերքմամբ կարծես թե փորձ է արվում էթնիկ ցանցի շուրջ վերակառուցել որոշակի պաշտպանական բնույթի պատրանքային իրականություն: Այդ իրականության մեջ էթնիկ ցանցն իդեալականացված է և կատարում է գրեթե նույն գործառնությունները, ինչ միգրանտի ընտանիքը: Ուստի էթնիկ ցանցի յուրաքանչյուր արարք, որ կարող է չհամապատասխանել այդ իդեալականացված կերպարին, փլուզում է ստեղծված պատրանքային իրականությունը և առիթ դառնում էթնիկ ցանցի կտրուկ արժեզրկման: Դրա հետևանքով տեղի են ունենում կոնֆլիկտներ, հարաբերությունների խզում: Այդ միջադեպերը լրջորեն տրավմայի են ենթարկում ինչպես միգրանտ անձի միգրացիայի փորձառությունը, այնպես էլ նրա՝ Հայաստանում զարգացող ընտանեկան կյանքը:

8.2. Միգրացիոն ցանցի դերը համայնքային կյանքում. ինքնութայան խնդիրները

Հետազոտության մասնակիցները հաճախ նշում են, որ ընդունող երկրում ապրող այն մարդիկ, որոնք նպաստել են իրենց ընտանիքի անդամի արտագաղթին, հիմնականում բարեկամական հարաբերություններ են կառուցել արտագաղթողի հետ: Այդ կապվածությունը հաճախ դրսևորվում է հարաբերությունների խորացմամբ, հաճախակի հանդիպումներով (օր.՝ «*Բարեկամական կապ է, չնայած առանձին են ապրում, բայց միշտ հանդիպում են*»):

Հետազոտության մասնակիցների ճշող մեծամասնության խոսքից ակնհայտ է, որ էթնիկ ցանցի անդամների և արտագաղթողի միջև հարաբերությունների բնութագրական կողմ է տոն օրերը միասին նշելը («*Կա մեծ կապվածություն, հաճախ այցելում են իրար, նշում են տոները հայերի պես, իրար տուն այցելելով, հյուր գնալով, հյուր ընդունելով*», «*Դե հիմնականում առիթներին, ծննդյան օրերին, տոներին, հավաքվում, նշում են*» և այլն): Ինչպես ցույց են տալիս հետազոտությունները⁴⁵, ծիսակատարությունները, ավանդույթների պահպանումը միգրացիայի իրավիճակում խրախուսում և նպաստում են տոկունության զարգացումը, իսկ մշակութային դրսևորումները խմբի ներսում դրդում են փոփոխել սթրեսի առաջնային աղբյուրները: Մեր հետազոտության մասնակիցների դեպքում ավանդույթների պահպանումը երևում է հիմնականում հայկական տոներին երեկույթների կազմակերպմամբ: Որպես կանոն՝ միգրանտները ջանքեր են գործադրում, որ հայկական տոները նշեն նույնկերպ, ինչպես նշում էին Հայաստանում: Միասին պատրաստում են ավանդական կերակուրները՝ փորձելով ստանալ նույն համերը, ինչ Հայաստանում: Տոնի յուրաքանչյուր տարրի հաջող կրկնությունը նրանց հաճույք է պատճառում: Նրանք ուրա-

45 Martin, E., Steyart, M., Deccache, A. 2005. Favoriser la résilience de l'enfant migrant primoarrivant et de sa famille. Rapport de recherche Projet UNISOLUCL.:<http://docplayer.fr/24961559-Projet-unisol-uc-partie-i-rapport-de-recherche-documentde-travail.html>

խանում են՝ բացահայտելով, որ աշխարհը չի փոխվել իրենց վերապրած խզումից՝ արտագաղթից հետո⁴⁶: Ուստի դրանք միասին նշելու հնարավորությունը կարևոր պաշտպանիչ գործոն է, որն ընդունող երկրում ապահովում է էթնիկ ցանցը: Այս իմաստով՝ արտագաղթողի ընտանիքի կողմից էթնիկ ցանցը կարող է ընկալվել որպես հոգեկան այնպիսի տարածք, որտեղ իրենց հարազատը կարող է վերագտնել հարազատ միջավայրի մշակութային տարրերը՝ զգալով սեփական «ես»-ի համապատասխանությունը արտաքին միջավայրին: Գուցե պատահական չէ, որ հետազոտության մասնակիցներից շատերը հայկական համայնքի ներկայությունը ընդունող երկրում համարում են պայման՝ իրենց հարազատի անձի ամբողջականության, լիարժեքության համար. *«Կուզեի ավելի շատ հայերի հետ շփվել, իրեն լիարժեք զգար»*:

Դրան զուգահեռ՝ որոշ դեպքերում հետազոտության մասնակիցները նշում են նաև տեղի հայ համայնքի աջակցող, գործնական հարաբերությունների մասին: Նրանց խոսքում հաճախ շեշտվում է հայ համայնքի օգնող գործառնությունը. *«Աշխատանքի հարցով անմիջապես դիմում են իրար»*, *«Հենց ինչ-որ աշխատանքի տեղ է լինում, կարիք է լինում, առաջինը հենց մեկը մյուսին են ասում, տեղեկացնում»*: Փոխօգնությունը համայնքային կյանքի կարևոր բնութագրիչ է ինչպես էթնիկ ցանցի շնորհիվ արտագաղթածների, այնպես էլ մենակ արտագաղթածների համար: Սակայն ուշագրավ է, որ մեր հետազոտության մասնակիցների հարազատներից համայնքային կյանքում առավել ակտիվ են ներգրավված հատկապես այն արտագաղթողները, որոնք արտագաղթելուց առաջ ընդունող երկրում չեն ունեցել էթնիկ ցանց: Ընդ որում, ավելի հաճախ է նկատվում այն միտումը, որ եվրոպական երկրներ մշտական բնակության մեկնած միգրանտները հայ համայնքին ինտեգրվելու անմիջական փորձեր են կատարում: Հետազոտության մասնակիցների հարազատների շրջանում նույնիսկ կա դեպք, որ

46 Մասցականյան Լ. 2021, Արտագաղթի հոգեկան փորձառությունը ապաստանի հայցման պայմաններում, Ակտուալ Արվեստ հրատ., Երևան, 406 էջ:

վկայում է ակտիվ համայնքային գործունեության մասին (ավելին, քան տեղում արդեն հաստատված հայերը). «Քանի որ աղջիկս աշխատանք չուներ, փնտրեց և գրավ հայ համայնքի անդամներին, սկսեց գնալ հայկական պարերի խմբակ, ապա բացեց հայերենի դասերի խումբ: Ամբողջ ապրիլ ամիսն անցկացրել էր համայնքի հետ ցեղասպանության վերաբերյալ դասեր, կինոդիտումներ, քննարկումներ կազմակերպելով: Հիմա սովորեցնում է նրանց նաև հայերեն գրել, կարդալ: Բացի այդ, սովորեցնում է նաև հայոց պարմություն, դիրում են հայերեն մուլրեր, երգեր են լսում: Մեպրեմբերից բացել է խմբակ, ուր դասավանդում է հայերեն, շախմատ, պարեր է սովորեցնում: Համայնքի ղեկավարը շար ծրագրեր ունի և պարտապարհ է աղջկաս օգնել հայ համայնքի կյանքն ակրիվացնելու գործում» (կին, 49 տարեկան, ք. Մասիս):

Համայնքային կյանքի մեջ գերներգրավվածությունը կարող է միայնակության, անապահովության դեմ, նաև օտար միջավայրում անկանխատեսելիության, տագնապի հանդեպ պաշտպանական գործողություն լինել, որի շնորհիվ փորձ է արվում նաև ամրացնել օտար միջավայրում ապակայունացած ինքնությունը, պահպանել կողմնորոշիչները՝ մինչև նոր միջավայրում ինտեգրման պատրաստ լինելը: Մշակույթի փոփոխությունը ենթադրում է նաև «ես»-ի փոփոխություն, և սուբյեկտին հաճախ թվում է, որ այդ փոփոխության համար անհրաժեշտ է հրաժարվել սեփական «ես»-ի մի որևէ մասից, այսինքն՝ այն կորցնել: «Ես»-ի որևէ մասի կորուստը կամ դրանից հրաժարումը, որպես կանոն, մերժվում է սուբյեկտի կողմից. համայնքային կյանքում գերներգրավվածությունը կարող է վկայել նման կորստի հերքման մասին կամ «ես»-ի որևէ մասից հրաժարվելու դիմադրելու միտման մասին:

Արտագաղթի իրավիճակը, երկրի փոփոխությունը, նոր և անծանոթ մշակույթի գերիշխող դիրքը ինքնությանն առնչվող բազմաթիվ հարցադրումների տեղիք են տալիս: Էթնիկ ցանցի մասին խոսելիս և հատկապես հայկական ինքնության մասին նրանց դատողություններում կրկնվող թեմա է հատկապես արտերկրում

«հայկականությունը պահելու», «հայ մնալու» մասին մտահոգությունը: Այս բավական ընդհանուր և ոչ հստակ արտահայտությունը մեզ հիշեցնում է Էմանուել Բոնվիլի առաջարկած «հակադրության սկզբունքի » մասին⁴⁷: Ըստ նրա՝ ինքնության զգացումը հիմնվում է նաև դրա եզակիության հաստատման վրա: Այլ ինքնությունների հանդիպելը ուրիշի ինքնությանը նմանվելու և դրա կողմից յուրացվելու վտանգ է ներառում: Իսկ ինքնության մասնատման ու սուբյեկտիվ տարրալուծման հետևանքների դեմ հիմնական գործիքները ընդունող երկրի դեմ աֆեկտիվ ընդդիմացումն ու մշակութային միջավայրում տարբերակումն են՝ «հայ մնալը»:

Հետազոտության մասնակիցներն իրենց խոսքում ցանկություն են արտահայտում տեսնել ընտանիքի անդամին՝ որպես հայկական ինքնության կրող անձ. «Հայկական ընտանիքներ կան, որոնց հետ մտերիմ շփվում են, մեկուսացված չեն, ձուլված չեն, պահում են հայկականությունը: [Եղբայրս] ունի երկու աղջիկ, և նրանց համար շատ կարևոր է անընդհար հայերի հետ շփվելը: Դա շատ կարևոր է այն առումով, որ աղջիկները հայկական դաստիարակություն կստանան» (կին, 31 տ., Երևան):

Նրանք շատ կարևորում և հաճախ շեշտում են հատկապես հայկականությունը երեխաներին փոխանցելու հանգամանքը. «Քրոջս երեխաները հաճախել են հայկական դպրոց, և սերյոզ կապը հայ համայնքի հետ միշտ եղել է, որի շնորհիվ իրենց զգում են հարազատ միջավայրում» (կին, 22 տ., ք. Արարատ), «Շատ լավ զգացողություն [ունեն], որովհետև պահվում ա հայկականը: Երեխաները հայերեն գրել-կարդալ գիրեն: Եթե մենք օգտագործում ենք օտար բառեր, իրենք մաքուր խոսում են հայերեն: Հայերի հետ շփումը նաև դա է փալիս, փառք Ասրծո, որ ընտրել են էդ փարբերակը: Դրանով պահում են առաջին հերթին լեզուն, հետո՝ ավանդույթ-

47 Bonneville, E. 2003. L'ennemi nécessaire : Caractéristiques psychologiques et rôles dans l'identité du sujet. Sociétés, no 80(2), 5-15pp.

ները: *Դրանք ավելի շար գալիս են այնպեղից այսպեղ, քան հակառակը*» (տղամարդ, 60 տ., Երևան): Վերջին մտքից կարող ենք եզրակացնել, որ անձի ցանկությունը՝ տեսնել հայկական ինքնության փոխանցումը հաջորդ սերնդին, տեղիք է տալիս որոշակի իդեալականացման՝ կապված ընտանիքի անդամների՝ այդ փոխանցումը անելու կարողության հետ: Սակայն հետազոտության ոչ բոլոր մասնակիցներին է հատուկ նման միտում. «*Կասյր, իհարկե, սերտ է: Լավ է, որ գոնե մի քանի ընտանիքներ իրար հետ կսպ ունեն, չնայած դա ինձ չի ոգևորում, բայց գոնե լեզուն չի կորում և այլն: Բայց դա քիչ է նրախացում*» (կին, 50 տ., Երևան):

Էթնիկ ցանցի վերաբերյալ դատողություններում մեր հետազոտության մասնակիցները ակամայից դրսևորում են նաև իրենց սուբյեկտիվ վերաբերմունքը հայկական ինքնության նկատմամբ: Դեպքերի մեծամասնությունը *դրական* է գնահատում հայերի ներկայությունը իրենց ընտանիքի անդամ միգրանտի կյանքում. «*Իհարկե, նրախանում եմ, ինքը հայերի հետ շար շփվում է. մեկը մեկի հետ միսիթարվում են: Շատ լավ է, որ հայերի հետ կսպ, շփում կա... քո երկրացու հետ շար հեշտ է*» (կին, 65 տ., Երևան): Նրանց խոսքում հատկապես կարևորվում է այն հանգամանքը, որ հայերով շրջապատված լինելը հոգեկան հանգստության կամ ապահովության պայման է իրենց և ընտանիքի անդամների համար. «*Ավելի հանգիստ ես զգում քեզ, որ [այնպեղ] հայ կա: Հայ ընկերների մասին շար լավ է խոսում, ինքը արդեն հանգիստ է այդ առումով, ես էլ եմ հանգիստ*» (կին, 24 տ., Երևան), «*Որքան շար շփում ունենան հայերի հետ, այնքան ավելի լավ... այսինքն՝ իրենք կարող են իրենց կոմֆորտի մեջ զգալ...*» (կին, 31 տ., Երևան): Սակայն հետազոտության չորս մասնակից հայերի ներկայությունը ընդունող երկրում չի համարում դրական գործոն, ավելին, որոշակի զգուշավորություն, անգամ *բացասական* վերաբերմունք կա նրանց նկատմամբ. «*Իհարկե, լավ է, որ կարող ես շփվել հարենակիցներիդ հետ, սակայն որոշ հայերի մոտ դեռ շարունակում է լինել նախանձը դիմացինի հաջողությունների հանդեպ, ու նման*

դեպքերում լավ է խուսափել շփումներից» (կին, 60 տ., գ. Արալեզ), «Նահաանձություն կա իրար նկատմամբ, հայր միշտ էլ նահաանձ է» (կին, 69 տ., Գյումրի), «Ես մրսածում եմ, որ նույնիսկ լավ է, որ հայեր շար չկան իր շրջապատում: Թող մենակ սովորի, կոփվի: Հեղու հայերը որքան կարող են օգնել, այնքան էլ կարող են խանգարել» (տղամարդ, 46 տ., Երևան):

Բացասական այս վերաբերմունքը էթնիկ ցանցի վերաբերյալ կարող է բազմաթիվ գործոններով պայմանավորված լինել, ներառյալ նախկին միգրացիոն փորձի մեջ իրենց ծանոթ հայերի ունեցած դերը. «Որևէ կապ չունեն [հայերի հետ]: Մայրս ավելի շար մեքսիկացիների հետ է մրերիմ, քան հայերի: Ինքը Լոսոսում չապրեց, որպեսզի հայերի հետ չապրի, քանի որ հայերը շար շուր են մարդու ծախում: Նույն հարցին բախվել ենք Հունգարիայում, երբ հայերին ում օգնել էինք, մեր մասին տեղեկացրել էին ներգաղթի ծառայություններին: Մայրս իրեն ավելի ապահով է զգում, երբ չի շփվում հայերի հետ» (կին, 43 տ., Երևան):

Հետազոտության որոշ մասնակիցներ էթնիկ ցանցի հանդեպ երբեմն արտահայտում են նաև որոշակի հակասական վերաբերմունք: Այսպես՝ նրանք կարող են իրենց խոսքում արտահայտել համոզվածություն, որ իրենց ընտանիքի անդամի համար ընդունող երկրում հայերի ներկայությունը օգտակար է և հոգեբանորեն կարևոր, սակայն միաժամանակ անվտանգություն և տագնապ դրսևորել հայերի ներկայության առնչությամբ. «Մի կողմից վարահություն կա, հանգիստ ես, որ նեղության մեջ էլ լինի, կարող է [հայերը] օգնեն... բայց նաև հավանականություն կա, որ կարող է դավաճանեն, դա ևս իմ զգացողություններից է, հայի վայիտություն այսպես ասած» (կին, 27 տ., Երևան) կամ «Այնտեղի հայերը վարահելի չեն, այստեղի նման չէ» և այլն: Այս հակասականության մեջ կարող ենք տեսնել անձի մեջ սեփական հայկական ինքնության հանդեպ հակասական վերաբերմունք: Եվ կարծես թե անձի հայկական ինքնությունը երկփեղկված լինի (երկփեղկում՝ պաշտպանական մեխանիզմի առումով), որտեղ ինքնության այդ ճեղքված

մասերից մեկը մերժված է և հակասության մեջ է հայտնվել ինքնության ընդունված հատվածի հետ: Այդպիսով ինքնության մերժված կողմը դառնում է բացասական կերպար՝ անվստահելի, վսասող, հետևաբար՝ հետապնդող⁴⁸, հատկապես օտար մշակութային միջավայրում:

Հետազոտության մեկ մասնակից առաջնայնությունը տալիս է ոչ թե ցանցի անդամի էթնիկ պատկանելությանը, այլ ավելի շուտ մարդկային որակներին. «Ինքը [եղբայրը] լավ է զգում, որ հայերի հետ կապ չունի: Հայերի մեծ մասը տհաճ զգացողություններ են առաջացնում, կոնսերվատիվ են, սահմանափակ ու քննադատող են... հատկապես դրսի հայերը ավելի կոնսերվատիվ են... բայց եթե լինի հետաքրքիր հայ, բարի հոգով մարդ լինի, նա ավելի հաճույքով հայի հետ կշփվի, քան թե այլազգիների» (կին, 24 տ., Գյումրի): Այստեղ կրկին արտահայտվում է բացասական վերաբերմունք հայկական ինքնություն կրող ցանցի մեծամասնության վերաբերյալ, սակայն էթնիկ պատկանելությունը չի ընկալվում որպես առաջնային գործոն ընդունող երկրում արտագաղթողի սոցիալական կյանքը կառուցելու համար, ինչպես հետազոտության մասնակիցների ճնշող մեծամասնության դեպքում է:

Ընդգծենք նաև, որ ինքնության հարցը, արտագաղթի իրավիճակում նույնպես, չի սահմանափակվում մշակութային կամ էթնիկ ինքնությամբ, այլ այն նախևառաջ կրում է անհատական հայեցակետ, սուբյեկտի, որպես այդպիսին, ինքնությունը՝ անկախ մշակութային միջավայրից: Միգրացիայի բերած փոփոխությունները միանգամայն փոխում են սուբյեկտի կյանքը և հետևաբար փոխում հենց սուբյեկտին: Եվ այդ փոփոխություններին հաղորդակից է լինում նախևառաջ Հայաստանում ապրող նրա ընտանիքը, քանի որ վերջինս, մնացած լինելով հարազատ միջավայրում և մեծավ մասամբ չճանաչելով արտագաղթողի նոր միջավայրը,

48 Մնացականյան Լ. 2019, Հետապնդում և արտագաղթ, Ակտուալ Արվեստ #2(8), Պարանոյա, Երևան, էջ 32-37:

առանձնահատուկ զգայուն է արտագաղթած հարազատի ինքնության կրած փոփոխություններին:

8.3. Սփյուռքի միգրացիոն ցանցի հանդեպ վերաբերմունքը՝ ըստ ազգակցական կապի բնույթի

Գիտարկել ենք նաև էթնիկ ցանցի հանդեպ վերաբերմունքը՝ ըստ մեր հետազոտության մասնակիցների *ազգակցական կամ ընտանեկան կապի բնույթի*, այսինքն՝ կախված նրանից, թե արտագաղթողը ով է հետազոտության մասնակցի համար՝ երեխամ, ծնող, թե՞ քույր/եղբայր:

Կարող ենք նկատել, որ եթե արտագաղթողը հետազոտության մասնակցի երեխան է, ապա էթնիկ ցանցի մասին պատկերացումները որոշակիորեն իդեալականացված են: Հետազոտության մասնակիցների խոսքից կարելի է ենթադրել, որ Հայաստանում ապրող ծնողները կարծես թե կարիք ունեն էթնիկ ցանցին վերագրելու ընդգծված հոգատարություն, օգնություն, ապահովություն և պաշտպանություն տվող հատկանիշներ (*«Կարող եմ ասել փայլուն հարաբերություններ են, կիսվում են օր ի դր... շատ մրերիմ են»*, *«Մի փան պես են»*, *«Շատ ջերմ, ազգակցական վերաբերմունք ունեն, ամեն հարցում օգնում են»* և այլն): Նման իդեալականացումը գուցե պաշտպանական նշանակություն ունի, որը ծնողին թույլ է տալիս վանել սեփական երեխայի անպաշտպան լինելու հետ կապված տագնապները և մեղքի զգացումը:

Ծնող մասնակիցների համար հատկապես արդիական է իրենց զավակի՝ արտագաղթի իրավիճակում մենակ լինելու թեման. *«Դե դժվար է, որ երեխաներդ լրիվ մենակ են մեծ օրսար երկրում, մենք այսրեղից ինչով կարող ենք օգնում ենք»*, *«Ես իր փոխարեն չէի կարող, շատ մեկուսացած է, մի քիչ ափսոսում եմ, մի քիչ խղճում, մի քիչ հուսահատվում»*: Օտարության մեջ երեխայի մենակությունը նրա անպաշտպանության և անապահովության աղբյուրն է,

որն էլ ծնողի մեջ կարող է անգործության զգացում և օգնելու ցանկություն առաջացնել: Նշենք նաև, որ հետազոտության ծնող մասնակիցների խոսքը, համեմատած մյուս մասնակիցների խոսքին, շատ ավելի հուզական է, հաճախ՝ իռացիոնալ:

Այն դեպքերում, երբ արտագաղթողը հետազոտության մասնակցի ծնողն է, իդեալականացում կարող ենք նկատել ոչ թե էթնիկ ցանցի վերաբերյալ, այլ արտագաղթած ծնողի կարողությունների վերաբերյալ: Զավակների խոսքում ծնողը հաճախ մարդ է, որ այդքան էլ կարիք չունի օգնության, ինքն իր խնդիրները կարող է լուծել («*Դրական հարաբերություններ են [էթնիկ ցանցի հետ]: Հիմա ինքն արդեն ստանձին է աշխատում: Դրական, գործընկերային են, բայց ոչ շատ մերերիմ, հարազատներ չեն*»), «*Մայրս իր բոլոր հարցերը լուծել է ինքնուրույն*», «*Շփումը միշտ բոլորի հետ կա, լավ է: Իսկ հարազատներին չեն դիմում, եթե հարազատ է, տեղյակ է, օգնում է, բայց ինչ-որ հարցով չեն դիմել...*»): Էթնիկ ցանցի դերը նվազեցնելը գուցե ցանկություն է ընկալել սեփական ծնողին որպես ուժեղ և ունակ անձ, որ պաշտպանության կարիք չունի. դա գուցե հնարավորություն է տալիս զավակին չեզոքացնելու անհանգստությունը ծնողի ապահով վիճակի համար:

Իսկ այն դեպքերում, երբ արտագաղթողը հետազոտության մասնակցի քույրը կամ եղբայրն է, կարող ենք նկատել, որ էթնիկ ցանցն ընկալվում է ավելի շուտ գործառնական և պրագմատիկ տեսանկյունից, մասնավորապես շեշտվում են իրենց հարազատների միայնակ լինելու հանգամանքը և էթնիկ ցանցից օգնություն ստանալու կարիքը. «*Շրջապատ ունեն, ու դա շատ լավ ա, ես գիտեմ, որ մենակ չեն: Իրենք բոլորով միասին են լինում, իրար փուն գնալ-գալ ունեն, դա ինձ շատ ուրախացում է: Դա ինձ բավարար է, որ իրենք մենակ չեն*», «*Ես շատ ուրախ եմ, որ իմ հարազատներն այնպեղ մենակ չեն, ապահով են*», «*Ուրախ եմ, որ իրենց օգնող ձեռք կա*»: Այս պարագայում մասնակիցների խոսքը համեմատաբար ուացիոնալ է, հակիրճ:

8.4. Ցանցը արտագաղթի մասին տրավմատիկ հիշողության համատեքստում

Հետազոտության մասնակիցների հետ տոհմաձառի մեթոդն իրականացնելիս պարզվեց, որ 60 մասնակցից միայն 2-ի մոտ է, որ ընտանեկան պատմության մեջ միգրացիայի որևէ դրվագ չկա, կամ իրենք չեն մտաբերում: Մնացած 58 մասնակիցները նշում են իրենց ընտանեկան պատմության մեջ միգրացիայի առկայությունը: Նրանցից 24-ի ընտանիքում առկա է միգրացիայի պատմություն՝ կապված հայոց ցեղասպանության ժամանակ տեղահանության հետ: 4 մասնակից ներկայացրել է պատմություն Ադրբեջանից ներգաղթի համատեքստում, 5-ը՝ Վրաստանից, 4-ը՝ Իրանից, 2-ը՝ Սիրիայից: 5 մասնակից նշում է ներքին՝ Հայաստանի մարզերից Երևան առկա միգրացիայի մասին, իսկ 3-ը կարծում է, որ իր ընտանիքում միգրացիայի պատմություն կա, սակայն նշանակալից չէ:

Եթե հաշվի առնենք, որ հայերի ցեղասպանությունն ուղեկցվել է բռնի տեղահանությամբ, այսինքն՝ տրավմատիկ արտագաղթով, կարելի է ենթադրել, որ արտագաղթն ինքնին, որպես իրադարձություն, մեր հետազոտության մասնակիցների ընտանիքների ներսում կարող է զուգորդվել ցեղասպանության տրավմատիկ հիշողության հետ, որը գիտակցական կամ անգիտակցական ուղիներով փոխանցվում է սերնդեսերունդ: Ընտանեկան տրավմատիկ այս հիշողության առկայության պարագայում պետք է որ էլ ավելի կարևորվի էթնիկ ցանցի հոգեբանական նշանակությունը՝ դրա ապահովության, պաշտպանիչ գործառույթների առումով:

Ուստի մեզ համար հետաքրքիր է տեսնել, թե ինչ առանձնահատկություն ունի էթնիկ ցանցի հանդեպ վերաբերմունքը մեր հետազոտական ընտրանքի այն հատվածի համար, ովքեր իրենց ընտանեկան պատմության մեջ ընդգծում են ցեղասպանության հետևանքով գաղթած նախնիների մասին:

Մենք փորձել ենք դիտարկել էթնիկ ցանցի մասին պատկերացումները հետազոտության այդ 24 մասնակիցների խոսքում,

գտնել որոշ տարրեր, որոնք կարող են այս կամ այն կերպ մատնանշել էթնիկ ցանցին տրվող հոգեբանական նշանակությունը: Կարող ենք նշել, որ չկան աչքի զարնող տարբերություններ ընտրանքի այս և մյուս հատվածների միջև: Սակայն կարող ենք նկատել, որ ընտանիքում ցեղասպանության ժամանակ արտագաղթի տրավմատիկ փորձն ունեցող մասնակիցների շրջանում առավել շեշտադրված է արտագաղթողի միայնակության խնդիրը: Մա մյուս մասնակիցների խոսքում էլ է նկատվում, բայց պակաս շեշտվածությամբ և պակաս հաճախականությամբ: Այսպես՝ այն մասնակիցները, որոնց ընտանեկան պատմության մեջ առկա է ցեղասպանության հիշողությունը, կրկնվելով խոսում են արտագաղթողի միայնակության, մեկուսացվածության մասին: Այս տեսանկյունից նրանց համար էթնիկ ցանցը կարևորվում է հատկապես այն իմաստով, որ տեղի հայերի հետ հարաբերությունների շտրհիվ իրենց ընտանիքի անդամը միայնակությունը որոշ չափով փարատելու հնարավորություն ունի. «Կապերը միանշանակ օգնում են, հոգեբանական առումով հաստատ, մենակություն չկա», «Դե ինչ-որ մի տեղ լավ ես գտա, որ մենակ չեմ, [այնտեղ] լավ կապեր ունեմ», «Ամեն օր շփվում եմ [հայերի հետ]: Կացարանը, որտեղ մնում եմ, հարազատների փրկող լողփն է», «Դե որ գիտես լրիվ մենակ է, շար դժվար է, կուզեիր իր մտք լինել», «Շրջապատ ունեմ ու դա շար լավ է, ես գիտեմ, որ մենակ չեմ: Իրենք բոլորով միասին են լինում, իրար փրկ գնալ-գալ, դա ինձ շար ուրախացնում է: Դա ինձ բավարար է, որ իրենք մենակ չեն»: Եթե միայնակության վերաբերյալ այս՝ հարաբերականորեն ընդգծված շեշտադրումները դիտարկենք հավաքական տրավմաների տեսության շրջանակներում, ապա կարող ենք ասել, որ միայնակությունը տրավմավորված հանրային համար կարող է նախևառաջ ընկալվել որպես միայնակություն մահվան առաջ կամ միայնակություն այնպիսի վտանգի առաջ, որ կարող է մահվան հանգեցնել: Վերևում քննարկված ենթաբաժիններում մենք արդեն տեսանք, որ արտերկրում բնակությունը կամ հենց արտագաղթը մեր հե-

տագոտության մասնակիցները հաճախ են ընկալում որպես անկանխատեսելի վտանգներ կրող փորձառություն, որի հետևանքով արտագաղթող անձը նույնացվում է որպես օգնության, ապահովության կարիք ունեցող անձի հետ: Արտագաղթին առնչվող ընտանեկան տրավմատիկ պատմություն կրող անձի պարագայում այդ օգնության և ապահովության կարիքը ոչ միայն սոցիալալիզացիային միջավայրը փոխելու արդյունք է, այլև արտագաղթի պատճառած տրավմայից գերպաշտպանության դրսևորման ձև: Եվ քանի որ արտագաղթն ինքնին ընտանեկան տրավմատիկ պատմության համատեքստում ընկալվում է որպես տրավմա, ապա այդ գերպաշտպանական դիրքավորումը կարող է լինել հենց բուն արտագաղթի փորձառությունից պաշտպանություն:

Ընտանիքի կողմից արտագաղթողի միայնակության մասին մտահոգությունը մեզ հիշեցնում է Դոնալդ Վինիկոտտի առաջադրած «միայնակ լինելու կարողություն»⁴⁹ հասկացությունը, որ զարգանում է երեխայի մեջ մեծահասակից բաժանման ժամանակ և համարվում է անձի հասունացման ցուցիչներից: Ստացվում է, որ արտագաղթողը կարծես թե փոխաբերական իմաստով նոր և օտար միջավայրում ընկալվում է որպես երեխա, որի համար անձանոթ միջավայրում «միայնակ լինելու կարողությունը» բավարար չէ՝ ինքն իրեն վտանգներից պաշտպանելու համար: Եվ եթե ընտանիքի տրավմատիկ պատմության համատեքստում միայնակությունը մահվան կամ մահացու վտանգի առաջ միայնակությունն է, ապա էթնիկ ցանցն այն պաշտպանիչ գործոնն է, որը, ըստ արտագաղթողի ընտանիքի անդամների, անհրաժեշտ է արտագաղթողին՝ վերջինիս պաշտպանելու համար:

Կարող ենք եզրակացնել, որ օգնության, անապահովության, միայնակության խնդիրները, որոնք առկա են արտագաղթողների և նրանց ընտանիքների մեծամասնության համար, էլ ավելի արտա-

49 Winnicott D., 1958, Capacity to be alone, (<https://www.oxfordclinicalpsych.com/view/10.1093/med:psych/9780190271374.001.0001/med-9780190271374-chapter-60>)

հայտված, սուր և ցավոտ կերպով կարող են դրսևորվել այն ընտանիքներում, որտեղ առկա է արտագաղթի հետ կապված տրավմատիկ հիշողություն: Ըստ այս հանգամանքի՝ էթնիկ ցանցին տրված հոգեբանական նշանակությունները կարող են փոփոխվել՝ բովանդակային և դրսևորման ուժգնության առումներով:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գրքում քննարկվում է ցանցային միգրացիայի դերը հետխորհրդային Հայաստանի բնակչության արտագաղթի ձևավորման հարցում: Այդ հիմնախնդրի վերլուծության հիմքում 2021 թ. Հայաստանի բոլոր մարզերի քսան քաղաքային, երեսույթ գյուղական բնակավայրերում և Երևան քաղաքում հարցաթերթային հարցման միջոցով 639 ընտանիքներից արտերկիր արտագաղթած 1259 մարդկանց մասին հավաքված տեղեկատվությունն է: Հավաքական մենագրության համար կարևոր տեղեկատվական աղբյուր են նաև այդ հիմնախնդիրներով զբաղվող օրենսդիր, գործադիր համակարգի, մարզպետարանների պատասխանատուների, գիտության տարբեր ոլորտների քսանինը փորձագիտական հարցազրույցների և հոգեբանի՝ միգրանտ ունեցող ընտանիքներում անցկացրած վաթսույն զրույցների արդյունքները: Վերջինս զուգակցվել է նաև մասնակցային դիտարկման մեթոդի և ընտանիքի տոհմաձառի վերակառուցման մոտեցման հետ: Հետխորհրդային Հայաստանից բնակչության շարունակական արտագաղթի վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններում հիմնականում վերլուծվել են միգրացիայի տնտեսական պատճառները, և պատշաճ ուշադրության չի արժանացել արդի աշխարհում լայն տարածում ստացած ցանցային միգրացիայի դերը, որից անմասն չէ նաև մեր երկիրը: Հայկական սփյուռքի գոյությունը միգրացիոն ցանցի միջոցով իր ազդեցությունն է թողնում Հայաստանից արտագաղթի հոսքերի ձևավորման վրա, որը որոշ դեպքերում կապված չէ անգամ այդ երկրների միջև վարձատրությունների տարբերության հետ: «Ցանց» հասկացության մեկնաբանության համար հիմնվել

ենք արևմտյան միգրացիոն տեսություններում լայն տարածում ստացած Դ. Մասսեի այն մոտեցման վրա, ըստ որի՝ ցանցը բնութագրվում է որպես միջանձնային հարաբերությունների ամբողջություն, որը ձևավորվում է ազգակցական, բարեկամական, ինչպես նաև ընդհանուր սոցիալական ծագման հիման վրա երեք խմբերի մարդկանց միջև՝ ծագման երկրում մնացածների, մեկնած միգրանտների և նոր բնակավայրում հաստատվածների միջև:

Հարցման մասնակիցները Հայաստանից արտագաղթի համար բազմաթիվ կարծիքներ են նշել, սակայն գերակշռող մեծամասնությունը գլխավոր պատճառ է համարել տնտեսականը: Սակայն, դրանով հանդերձ, ըստ հարցվածների՝ Հայաստանից մեկնելն ավելի իրական է դառնում այն ժամանակ, երբ նրանք արտերկրում ունեն միգրացիոն ցանց: Հետազոտության արդյունքներով՝ սկյուռքի գոյությունը միգրացիոն ցանցի միջոցով ազդում է Հայաստանից արտագաղթողների որոշումների կայացման վրա, արագացնում ու հնարավորություններ է ստեղծում միգրացիոն տրամադրություններ ունեցող բնակչության այդ հոսքերի ընդլայնման համար: Հարցման մասնակիցների մոտ մեկ երրորդն ընտանիքի անդամի՝ արտերկիր մեկնելու հարցում վճռորոշ է համարում արտերկրում բնակվող ընտանիքի մյուս անդամի/ազգականների, իսկ մոտ մեկ քառորդը՝ ընկերների/ծանոթների գործոնը: Նրանց կարծիքով, արտերկրում բարեկամների/ընկերների բնակվելու փաստն է միգրացիայի մեկնելու որոշումների կայացման վրա ունեցել է «շատ մեծ» ազդեցություն: Ըստ միգրանտի մեկնման երկրների աշխարհագրության՝ արտագաղթի հոսքերի ձևավորման հարցում համեմատաբար մեծ դերակատարում են ունեցել ԱՄՆ-ում և Կանադայում բնակվող հարազատները և ընկերները: Հետազոտությունը ցույց տվեց, որ արտերկրում ցանցի առկայությունը նպաստել է Հայաստանից էմիգրացիայի գործընթացի մասնակիցների թվի ընդլայնմանը և նոր ընտանիքների ու անհատների ներգրավմանը: Այսինքն՝ Հայաստանի որևէ համայնքի անդամներից մեկը, եթե միգրացիայի ուղին է բռնում, հե-

տագայում հիմք է դառնում այդ գործընթացում համայնքի մյուս ազգակից անդամների մասնակցության հնարավորությունների ընդլայնման համար: Նոր մարդկանց ներգրավման առումով միգրացիային մասնակցության այդ գործընթացն ունենում է «ձնակույտի էֆեկտ»:

Հետազոտության արդյունքներով՝ էթնիկ ցանցը դառնում է միգրացիոն ուղիների կազմակերպման կարևոր միջոց՝ կանխորոշելով նաև մեկնման երկրի ընտրության հարցը, որի վրա իր ազդեցությունն է թողնում արտերկրում ցանցի կողմից մարդկային և նյութական ռեսուրսների տրամադրման հանգամանքը: Այդ առումով հարցման մասնակիցների գերակշիռ մեծամասնությունն ընտանիքի անդամների արտագաղթի երկրի ընտրության պատճառ նշել է այնտեղ ունեցած ազգակիցների (ընտանիքի անդամներ, հարազատներ) և ոչ ազգակիցների (ընկերներ, ծանոթներ) գործոնը: Հետազոտությունը ցույց տվեց, որ, բացի երկրի ընտրության վրա ունեցած ազդեցությունից, ցանցը հատկապես ՌԴ-ի համար բնակավայրերի ընտրության հարցում հիմնվում է նաև Հայաստանի ներհամայնքային տարբեր խմբերի միգրացիոն ռազմավարությունների վրա: ՌԴ-ի այս կամ այն տարածաշրջանը, որը, շնորհիվ սոցիալական ցանցի, մեծ ճանաչում ունի ներհամայնքային միգրացիոն որոշակի խմբի շրջանում, գործնականորեն կարող է չհետաքրքրել մյուսներին, քանի որ յուրաքանչյուրն ունի մեկնման իր միգրացիոն վեկտորը և ՌԴ-ում մշտական բնակվելու իր նախընտրելի բնակավայրերը: Շնորհիվ միգրացիոն այդ ռազմավարությունների՝ Հայաստանի նույն բնակավայրից տարբեր ազգակից ընտանիքներ և համազյուղացիներ հավաք ձևով բնակություն են հաստատել ՌԴ-ի տարբեր մարզերում: Ցանցի միջոցով միգրացիայի որոշում կայացնող անձանց որոշ մասն ունեցել է ոչ թե մեկ, այլ մի քանի ուղղության ընտրություն: Նրանց որոշ մասը սկզբնական շրջանում բնակություն է հաստատել արտերկրի այս կամ այն քաղաքում կամ գյուղում, սակայն, բավարարված չլինելով, ցանցի աջակցությամբ տեղափոխվել է այլ բնակավայր:

Հայաստանից արտագաղթի նախընտրելի երկիր շարունակում է մնալ Ռուսաստանի Դաշնությունը, այնուհետև նախընտրում են եվրոպական երկրները, ԱՄՆ-ն և Կանադան:

Հետազոտության արդյունքներով՝ արտերկրում մշտական բնակության մեկնելու համար շատ քիչ մարդիկ են դիմել այդ հիմնախնդրով զբաղվող պետական կամ մասնավոր կազմակերպություններ, և միգրացիայի գործընթացը կազմակերպական առումով շարունակում է մնալ քիչ ինստիտուցիոնալացված: Միգրանտներն այդ հարցում ավելի շատ ապավինում են ոչ ֆորմալ ցանցային կապերին՝ արտերկրում բնակվող բարեկամների/ընկերների աջակցությանը: Ելնելով հարցման մասնակիցների կարծիքներից՝ կարող ենք նշել, որ ցանցի միջոցով տեղի ունեցող միգրացիան դուրս է մնում պետական կառավարման քաղաքականությունից, և այդ գործընթացը դժվարությամբ է վերահսկվում: Ցանցի կարևոր գործառույթներից է նաև արտերկրում միգրանտների աջակցության ցուցաբերումը: Հետազոտության արդյունքներով՝ ցանցը նոր միջավայրում օգնել է լուծել նորեկների առջև ծառայած կարիքները և արտերկրում հեշտացրել է մուտքը սոցիալ-տնտեսական մի շարք ոլորտներ: Նրանք, հենվելով ավելի վաղ այդ երկիր մեկնած ազգականների, ընկերների, ծանոթների ձևավորած ֆորմալ և ոչ ֆորմալ կապերի վրա, ստացել են նոր տեղեկատվություն, նյութական և ոչ նյութական աջակցություն: Էթնիկ ցանցի՝ միգրանտների ցուցաբերած աջակցության ձևերը բազմազան են, և, ըստ հարցման մասնակիցների, արտերկիր տեղափոխված հարազատների մի մասը ցանցի անմիջական օգնությամբ գտել է աշխատանք, վարձով բնակարան, ժամանակավոր բնակվել է հարազատների մոտ, ստացել է նյութական աջակցություն, նոր ծանոթությունների հաստատման հարցում՝ աջակցություն, անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման հետ կապված և ուղևորության գործընթացի կազմակերպման հարցում՝ օգնություն: Ցանցի կարևոր դերակատարներն են համարվում արտերկրում հաստատված ազգակիցները (հայր/մայր, եղբայր/քույր, որդի/դուստր, այլ

ազգականներ), որոնք միգրանտների համար ապահովում են «ուժեղ» սոցիալական կապեր: Օտար միջավայրում միգրանտների որոշ մասին անհրաժեշտ ռեսուրսներ են տրամադրել ընկերները, գործընկերները, հարևանները, ծանոթները, որոնց սոցիալական ամրության խնդիրը երբեմն վիճարկվում է: Հարցման մասնակիցների կարծիքով, եթե չլինեք արտերկրում գտնվող հարազատների/ընկերների աջակցությունը, ապա ընտանիքի անդամները ինքնուրույն չէին կարող մեկնել այնտեղ՝ բնակության: Այսինքն՝ էթնիկ ցանցը նոր միգրանտների համար արտերկրում վերածվում է կարևոր սոցիալական կապիտալի՝ տրամադրելով մարդկային և նյութական ռեսուրսներ, որի միջոցով նվազեցվում են տեղաշարժի ծախսերն ու ռիսկերը, և ուժեղանում է միգրանտների ապահովությունը:

Հետազոտությունն արդյունքները ցույց տվեցին, որ հանրապետությունից արտագաղթել են ակտիվ աշխատունակ տարիքի մարդիկ, որոնց մի մասն ունի բարձրագույն կրթություն, ավելին՝ տնտեսության տարբեր ոլորտների բարձր որակավորում ունեցող մասնագետներ են: Նրանց գերակշռող մեծամասնությունը ամուսնացած է և հիմնականում արտագաղթել է ընտանիքով, իսկ մի մասի ընտանիքը վերամիավորվել է արտերկրում: Արտագաղթած ընտանիքների շուրջ կեսն ունեցել է անչափահաս երեխա: Բնակչության այդ խմբերի արտագաղթն իր բացասական ազդեցությունն է թողնում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման և ժողովրդագրական գործընթացների վրա: Չնայած Հայաստանում ձեռք բերած մասնագիտությանը՝ նրանցից շատերն արտերկրում ընդգրկված է բարձր որակավորում չպահանջող՝ սպասարկման, առևտրի, շինարարության, տրանսպորտի և այլ ոլորտներում: Սա հանգեցնում է սոցիալական վարընթաց շարժունության, քանի որ մասնագիտական զարգացման առումով միգրացիան խոչընդոտում է նրանց առաջընթացը: Տեղի աշխատաշուկայի պահանջներին հարմարվելու պարտադրանքով՝ ձեռք են բերում իրենց որակավորումից ցածր լրացուցիչ հմտություններ: Որպես

մասնագետներ՝ նրանք ավելի շատ պահանջված են առողջապահության, կրթության և ՏՏ ոլորտներում՝ հիմնականում եվրոպական երկրներում, ԱՄՆ-ում և այլուր (Չինաստան, Հնդկաստան): Արտերկրում միգրանտների զբաղվածության խնդիրն ուղղակիորեն առնչվում է իրենց իրավական կարգավիճակի հետ: Ըստ հետազոտության ցուցանիշների՝ գերակշիռ մասն ունեք ընդունող երկրի քաղաքացիություն, մի մասը՝ երկարաժամկետ կամ կարճաժամկետ բնակվելու թույլտվություն, որոշ մասը կրթական ծրագրով՝ ուսանողի/հետազոտողի կարգավիճակով էր գտնվում այդ երկրում: Նոր միգրանտների մեծամասնության կարգավիճակի հետ կապված հարցերի լուծումը կարևոր պայման է նաև իրավական տեսանկյունից ինտեգրվելու ընդունող հասարակությանը:

Հայաստանից արտագաղթի պատճառով արտերկրի հայ ավանդական համայնքների և նրանց կողքին հաստատված միգրանտների նոր խմբերի միջև համագործակցությունը, ըստ հետազոտության արդյունքների, կրում է հատվածային բնույթ, և շատ ցածր է նոր միգրանտների՝ համայնքային որևէ կազմակերպությանն անդամակցելու միջին ցուցանիշը: Հայերի այս երկու հատվածների միջև առկա են նաև լեզվական, մշակութային, կրոնի և եկեղեցու նկատմամբ վերաբերմունքի որոշակի տարբերություններ, որը խոչընդոտում է սփյուռքի ավանդական համայնքային կազմակերպությունների և նոր միգրանտների միջև շփումները: Համագործակցության համեմատաբար բարձր ցուցանիշներ են արձանագրվել համահայկական միջոցառումներին (հայոց ցեղասպանության ոգեկոչման, Արցախյան պատերազմին աջակցության) և ավանդական տոներին մասնակցության դեպքում: Համեմատած ՌԴ-ի հետ՝ մասնակցության այդ ցուցանիշը բարձր է ամերիկյան և եվրոպական երկրներում բնակվող միգրանտների շրջանում: Ի տարբերություն ավանդական սփյուռքի՝ Հայաստանից մեկնածները չունեն համայնքային-մշակութային կյանքով ապրելու փորձ, չեն անդամակցել սփյուռքում գործող անդրազգային կազմակերպություններին: Այդ հարցում պետք է հաշվի առնել նաև սփյուռքի ավանդա-

կան համայնքի ոչ միատարր լինելը և բազմազանության խնդիրը: Այս և նմանատիպ այլ գործոններով պայմանավորված՝ նրանք դեռևս չեն ինտեգրվում սփյուռքի համայնքային կազմակերպությունների: Էթնիկ ցանցը արտերկրում կարևոր դեր է ստանձնում նաև արտագաղթած ընտանիքների երեխաների կրթական և ինքնության պահպանման հարցերում. դրանք հիմնականում եվրոպական մի շարք երկրներում և ԱՄՆ-ում կյանքի են կոչվում եկեղեցու կամ հասարակական, բարեգործական կազմակերպությունների միջոցով: Ըստ հետազոտության ցուցանիշների՝ հարցման մասնակիցների ողջ համախմբությունից միգրանտների երեխաների այդ կազմակերպություններ հաճախելիությունը նույնպես կազմել է ցածր տոկոս:

Հետազոտության արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ ցանցն արտերկրում միգրանտների համար դառնում է ադապտացիայի կարևոր միջոց: Դրա համար կարևոր դեր է կատարում նաև արտերկրում նրանց սոցիալական միջավայրը՝ հարազատները, ընկերները, հարևանները, որոնց հետ շփվում և միասին նշում են հայկական ավանդական տոները և ընտանեկան տարատեսակ միջոցառումները՝ հարսանիքները, ծննդյան տոները, մկրտության և կնունքի ծեսերը և այլն:

Ցանցն օտար միջավայրում նպաստում է էթնիկ սահմանների ստեղծմանը և պահպանմանը: Այն նոր միջավայրում վերածվում է միգրանտների սոցիալ-մշակութային կյանքի կազմակերպման, այլէթնիկ խմբերի հետ վարքագծային և կայուն մշակութային տարբերությունների ձևավորման կարևոր պայմաններից: Էթնիկ ցանցի անդամների միջև շփումները նաև նպաստում են մշակութային պահպանմանն ու սովորույթների վերարտադրությանը: Էթնիկ ցանցը միգրանտների և տեղի բնակչության միջև դառնում է նաև շփումների կարևոր հարթակ:

Հետազոտության արդյունքները փաստում են այն մասին, որ արտագաղթի գործընթացում էթնիկ ցանցը վերածվում է Հայաստա-

նում մնացած միգրանտների նոր ընտանիքների ընդգրկման կարևոր միջոցի և ապահովում է միգրացիայի շարունակականությունը: Ըստ հետազոտության արդյունքների՝ առաջիկա մեկ-երկու տարվա ընթացում Հայաստանից մեկնելու մտադրություն է հայտնել հարցվածների մոտ մեկ հինգերորդը, որը բարձր ցուցանիշ է հանրապետության սոցիալ-ժողովրդագրական բացասական ազդեցության առումով: Հարցվածները հավանական արտագաղթի պատճառ նշել են Հայաստանում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակը և ընտանիքի վերամիավորման հանգամանքը: Հավանական արտագաղթի ուղղությունները հիմնականում համընկնում են այն երկրների հետ, որտեղ բնակություն են հաստատել նրանց ընտանիքի անդամները, հարազատները, բայց նրանց շատ քիչ մասը դիտարկել է նաև այլ ուղղություններ: Ըստ հետազոտության արդյունքների՝ հարցվածները հավանական արտագաղթի հիմնական ուղղություն ևս շարունակում են նշել Ռուսաստանի Դաշնությունը, այնուհետև՝ ԱՄՆ-ն և Կանադան, ինչպես նաև եվրոպական երկրները: Արտագաղթի մտադրություն ունեցողների գերակշիռ մեծամասնությունն ակտիվ վերարտադրողական տարիքի մարդիկ են, որոնց մի մասն ունի նաև բարձրագույն կրթություն: Այդ համախմբության մեջ մի փոքր մասն էլ տարեցներն են, որոնք ցանկանում են մեկնել զավակների մոտ:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ նոր միգրանտները սերտորեն կապված են Հայաստանի հետ, և այդ կապի ձևերը բազմազան են. նրանց գերակշիռ մեծամասնությունը հարազատների հետ շփվել է ամենօրյա տեսակապի միջոցով, որոշ մասը կարճաժամկետ այցելել է Հայաստան, պարբերաբար գումար է ուղարկել ընտանիքի անդամներին, նյութապես աջակցել է իր համայնքին, մասնակցել է Արցախյան պատերազմի հետ կապված հանգանակություններին: Հարցվածները նշել են, որ արտագաղթած հարազատների կեսից ավելին Հայաստանում տուն ունի, որը ևս հայրենիքի հետ կապի և հետագա վերադարձի կարևոր գործոն է: Այդ բոլորը վկայում է այն մասին, որ նրանք, ապրելով այլ

հասարակությունում, շարունակում են կապերը պահպանել հայրենիքի հետ և դրանով իսկ վերածվում են անդրազգային միգրանտների՝ հատելով սոցիալ-մշակութային մի քանի սահմաններ: Նրանց ինքնությունը ձևավորվում է ոչ միայն էթնիկ ցանցի, այլև ընդունող երկրի մշակութային և արժեքային համակարգի ազդեցությամբ: Միգրանտների՝ բազմաթիվ ձևերով Հայաստանի հետ կապվածությունը համարվում է նաև հայրենիք հնարավոր վերադարձի կարևոր պայմաններից մեկը: Հարցման մասնակիցների մոտ մեկ քառորդը նշել է իրենց հարազատների՝ Հայաստան հնարավոր վերադարձի մասին: Հետազոտությունը ցույց տվեց, որ միգրանտների հնարավոր վերադարձը պայմանավորված չէ միգրացիայի շնորհիվ նրանց մասնագիտական զարգացման կամ արտերկրում ձեռք բերված միջոցներով իրենց համայնքներում փոքր բիզնես հիմնելու և նորարարական գաղափարներ իրագործելու դրդապատճառների հետ: Հնարավոր վերադարձն ավելի շատ պայմանավորված է հոգեբանական՝ հայրենիքում ապրելու և կարոտի, ծերությունը Հայաստանում անցկացնելու, ընտանիքի վերամիավորման, ամուսնության, երեխաների հայեցի կրթության և այլ հանգամանքներով:

Հոգեբանի՝ հետազոտական տվյալների վերլուծությունից արձանագրվել է այն փաստը, որ մշտական բնակության մեկնած անձի՝ Հայաստանում բնակվող ընտանիքի անդամների համար միգրացիոն էթնիկ ցանցն ունի կարևոր հոգեբանական նշանակություն: Այն արտագաղթի շարժառիթների ձևավորման վրա ունի մեծ ներգործություն, քանի որ հաճախ ցանցի առկայությունը միգրանտի արտագաղթը պայմանավորող առաջնային գործոն է: Առանց էթնիկ սոցիալական ցանցի առկայության՝ արտագաղթի հավանականությունը կարող էր փոքր լինել: Էթնիկ ցանցի առկայությունը կարծես թե արտագաղթողի ընտանիքի անդամների մեջ այնպիսի զգացողություն է առաջացնում, որ դրա անդամներն այս կամ այն չափով պատասխանատու են հարազատի արտագաղթի համար: Էթնիկ ցանցը ինչպես արտերկիր մեկնած անձի, այնպես էլ նրա՝

Հայաստանում ապրող ընտանիքի անդամների համար ընկալվում է որպես որոշակի պաշտպանիչ գործոն արտագաղթողի համար՝ կատարելով ֆրանսիացի հոգեբան Դիդիե Անգյոյի նկարագրած «պաշտպանիչ ծրարի» դեր: Ուստի Հայաստանում բնակվող միգրանտի ընտանիքի անդամների շրջանում ձևավորվում են հարաբերականորեն բարձր սպասելիքներ միգրացիոն ցանցի անդամներից՝ արտագաղթողին տրվող օգնության տեսանկյունից: Արտագաղթողը հետազոտության մասնակիցների պատկերացումներում ներկայանում է որպես ի սկզբանե օգնության կարիք ունեցող մարդ: Ըստ այդմ՝ միգրացիոն ցանցը շատ հաճախ ընկալվում է որպես օգնության աղբյուր, և էթնիկ ցանցին վերագրվում է օգնողի գործառույթ՝ ինչպես ընդունող երկրում միգրանտի ինտեգրմանը նպաստելու առումով, այնպես էլ հոգեբանական, հուզական աջակցություն, ապահովության զգացում պատճառելու առումով: Այս իմաստով ցանցին վերագրվում են այնպիսի գործառույթներ, որոնք հատուկ են ընտանիքին: Էթնիկ ցանցի անդամներին հետազոտության մասնակիցները հաճախ ընկալել են որպես միգրանտին առանց նախապայմանների պաշտպանող, հոգ տանող, կենցաղային պայմաններ ապահովող մարդիկ: Այս առումով նրանք որոշակի իդեալական պատկերացում ունեն էթնիկ ցանցի անդամների վերաբերյալ, և այդ իդեալականացումը, ըստ հետազոտության նյութերի, երբեմն գործնականում չի հաստատվում: Հաճախ այն սպասելիքների անհամապատասխանության դեպքում առաջ է բերում հիապթափություն ինչպես միգրանտի մոտ, այնպես էլ նրա ընտանիքի անդամների շրջանում: Դրա հետևանքով տեղի են ունենում կոնֆլիկտներ և հարաբերությունների խզում: Այդ միջադեպերը լրջորեն տրավմայի են ենթարկում ինչպես միգրանտ անձին, այնպես էլ նրա՝ Հայաստանում գտնվող ընտանեկան կյանքը:

Էթնիկ ցանցի հոգեբանական նշանակության դրսևորումներից է նաև համայնքային կյանքում արտագաղթողի ներգրավվածության կարևորությունը հետազոտության մասնակիցների համար:

Կարևորվում է այն փաստը, որ ընտանիքի անդամ միգրանտը տոն օրերը կարող է տեղի հայերի հետ նշել, ինչպես նաև հայերի միջև փոխօգնության առկայությունը արտագաղթողի ընտանիքի անդամների համար մեծ նշանակություն ունի (այս հանգամանքը նույնպես վկայում է ցանցին ընտանիքի գործառույթներ վերագրելու միտումը): Հետազոտության մասնակիցներից շատերը հայկական համայնքի ներկայությունն ընդունող երկրում համարում են իրենց հարազատի անձի կենսակերպի ամբողջականության, լիարժեքության համար կարևոր պայման: Համայնքային կյանքի մեջ գերներգրավվածությունն օտար միջավայրում դառնում է միայնակության, անապահովության, անկանխատեսելիության, տագնապի հանդեպ պաշտպանական գործողություն: Դրա շնորհիվ փորձ է արվում նաև ամրացնել օտար միջավայրում ապակայունացած ինքնությունը, պահպանել կողմնորոշիչները՝ ընդհուպ նոր միջավայրում ինտեգրման պատրաստ լինելը:

Միգրացիոն ցանցի հետ հարաբերություններում հարցազրույցի մասնակիցները կարևորել են հայկական ինքնության պահպանման և փոխանցման հարցերը և դրա նկատմամբ վերաբերմունքը. որոշ մասի արտահայտած կարծիքներում առկա է հակասական մոտեցում: Այս համատեքստում ուշագրավ է, որ էթնիկ ցանցի հանդեպ սուբյեկտիվորեն ձևավորվում է գրեթե նույն վերաբերմունքը, ինչ անձն ունի սեփական էթնիկ ինքնության նկատմամբ: Միգրացիայի բերած փոփոխությունները միանգամայն փոխում են սուբյեկտի կյանքը, և դրան հաղորդակից է լինում նախևառաջ Հայաստանում ապրող նրա ընտանիքը, իսկ վերջինս զգայուն է արտագաղթած հարազատի ինքնության կրած փոփոխությունների նկատմամբ:

Պայմանավորված միգրանտի հետ ունեցած ազգակցական կապի բնույթով՝ միգրացիոն ցանցի հոգեբանական նշանակությունը, դրան տրվող վերագրումները և դրա հանդեպ հուզական վերաբերմունքը կարող են միանգամայն տարբեր լինել:

Հետազոտական ընտրանքի այն հատվածը, որ ընտանեկան պատմության մեջ ընդգծում է ցեղասպանության հետևանքով գաղթած նախնիների մասին, որոշակիորեն կրում է գաղթի հետ կապված տրավմատիկ հիշողության հետևանքները: Մասնավորապես, առանձնակի կարևորվում է արտագաղթած հարազատի միայնակության խնդիրը, որը տրավմատիկ գործառնման տրամաբանության մեջ միայնակություն է նախ մահվան առաջ: Ուստի այս համատեքստում էթնիկ ցանցի պաշտպանիչ, ապահովություն պարզևող գործառույթը կարող է շատ ավելի ցայտուն արտահայտվել հետազոտության այս մասնակիցների շրջանում:

ПРОБЛЕМА ЭМИГРАЦИИ НАСЕЛЕНИЯ ПОСТСОВЕТСКОЙ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ СЕТЕВОЙ МИГРАЦИИ

РЕЗЮМЕ

В книге рассматривается роль сетевой миграции в контексте формирования эмиграции населения постсоветской Армении.

В основе исследования лежит обширный материал анкетного опроса, осуществленного в 2021 году в Ереване и двадцати городских и тридцати семи сельских поселениях во всех областях Армении среди 639 семей, у которых члены семей / в общей сложности 1259 чел. / эмигрировали в зарубежные страны.

Важным источником информации для данной коллективной монографии явились также результаты 29 экспертных интервью с представителями законодательной, исполнительной системы власти, областных администраций и различных областей науки, а также бесед, проведенных специалистом - психологом в 60 семьях мигрантов, с применением метода включенного наблюдения. Последнее сочеталось также с методом мониторинга с соучастием и подходом к восстановлению семейного родового дерева.

В многочисленных исследованиях постсоветского времени, посвященных постоянной эмиграции населения Республики Армения, в основном подвергались анализу экономические причины миграции и не уделялось должного внимания роли получившей широкое распространение в современном мире сетевой миграции, чего не

избежала и наша страна. Существование армянской Диаспоры посредством миграционной сети оказывает влияние на формирование потоков эмиграции из Армении, что в отдельных случаях даже не зависит от различия оплаты труда в этих странах.

Для определения понятия «сеть» мы основывались на получившем широкое распространение в западной миграционной теории подходе Д. Масси, согласно которому сеть характеризуется как совокупность межличностных отношений, которая формируется на основе родственных и дружеских связей, а также общего социального происхождения между тремя группами людей: оставшимися в стране происхождения, выехавшими мигрантами и обосновавшимися на новом месте жительства.

Участники опроса высказали многочисленные разнообразные мнения об эмиграции из Армении, но подавляющее большинство сочли главной причиной экономическую проблему. Однако, наряду с этим по мнению опрошенных выезд из Армении становится наиболее реальным тогда, когда они имеют в зарубежной стране миграционную сеть. Согласно результатам исследования, существование Диаспоры посредством миграционной сети влияет на принятие решений об эмиграции из Армении, ускоряет этот процесс и создает возможности для расширения потоков населения, имеющего миграционные настроения. Приблизительно одна треть участников опроса в вопросе выезда членов их семей в зарубежную страну решающим фактором сочли проживание кого-либо из членов семьи/родственника, а приблизительно одна четверть - друзей/знакомых. По их мнению факт проживания в зарубежной стране родственников/друзей имел очень большое влияние на принятие решений об эмиграции. По географическому охвату стран выезда в формировании потоков эмиграции сравнительно большую роль играло наличие родственников и друзей проживающих в США и Канаде. Исследование показало, что существование сети в зарубежной стране способствовало расширению числа участников эми-

грационного процесса из Армении и вовлечению в него новых лиц и семей. Это означает, что если один из членов общины мигрирует из Армении, то впоследствии это расширяет возможности участия в этом процессе других родственников данной общины. В аспекте вовлечения новых лиц в миграцию этот процесс имеет «эффект снежного кома».

Согласно результатам исследования, этническая сеть становится важным средством организации миграционных потоков, предопределяя также вопрос выбора страны въезда, на что свое влияние оказывают возможности предоставляемых в этой стране сетью людских и материальных ресурсов. В этом аспекте подавляющее большинство опрошенных указали, что при выборе страны для эмиграции членов своих семей они руководствовались проживанием там родственников (членов семьи, родственников) и неродственников (друзей, знакомых). Исследование показало, что сеть кроме своего влияния на выбор страны, в частности – в вопросе выбора населенных пунктов в Российской Федерации, основывается также на миграционной стратегии различных внутриобщинных групп Армении. Тот или иной регион Российской Федерации, благодаря социальной сети хорошо знакомый определенной внутриобщинной миграционной группе, может не интересовать другие группы, так как каждая из них имеет свой миграционный вектор и предпочтительные для себя населенные пункты для постоянного проживания в Российской Федерации. Благодаря такой миграционной стратегии многие родственные семьи и односельчане из одного и то же поселения в Армении компактно поселились в разных регионах Российской Федерации. Определенная часть лиц, принимающих решение о миграции через сети, имела возможности выбора не одного, а нескольких направлений эмиграции. Часть из их первоначально обустроивалась в том или ином городе или селе зарубежной страны, но в случае неудовлетворенности своими условиями при содействии сети поменяла свое местожительство.

Предпочтительной страной для эмиграции из Армении продолжает оставаться Российская Федерация, затем – Европейские страны, США и Канада.

Согласно результатам исследования, очень немногие обращались для выезда на постоянное жительство в зарубежные страны в соответствующие государственные или частные организации, и процесс миграции в организационном плане продолжает оставаться мало институционализированным. Мигранты в этом вопросе более всего полагаются на неформальные сетевые связи – на содействие проживающих в зарубежной стране родственников/друзей. Опираясь на мнения участников опроса можно заключить, что имеющая место при посредстве сети миграция оказывается за пределами политики государственного управления, и этот процесс с трудом подвергается контролю.

Одной из важнейших функций сети является оказание содействия мигрантам в зарубежных странах. Согласно результатам исследования, в новой среде сеть помогла разрешить возникшие перед вновь прибывшими многие проблемы и облегчить их доступ в ряд социально-экономических сфер на местах. Они, опираясь на формальные и неформальные связи, сформированные ранее въехавшими в данную страну родственниками, друзьями, знакомыми получили новую информацию, материальное и нематериальное содействие. Формы содействия, оказанного мигрантам этнической сетью, разнообразны: согласно участникам опроса, часть их родственников, переехавших в зарубежные страны, при непосредственной помощи такого содействия нашла работу, съемное жилье, временно проживала у родственников, получила материальное содействие, им помогли установить новые знакомства, они получили помощь в оформлении необходимых документов, оказали содействие в вопросе организации процесса переезда. Важными акторами сети считаются обосновавшиеся в зарубежной стране родственники (отец/мать, брат/сестра, сын/дочь, другие родственники), кото-

рые обеспечивают мигрантам крепкие социальные связи. Необходимые ресурсы для части мигрантов, находящихся в чуждой среде, предоставили друзья, коллеги, соседи, знакомые, проблема социальной прочности которых иногда оспаривается. По мнению участников опроса, если бы ни содействие находящихся в зарубежной стране родственников/друзей, то члены их семей не смогли бы выехать туда на проживание самостоятельно. Это означает, что этническая сеть для новых мигрантов в зарубежной стране превращается в важный социальный капитал, предоставляя человеческие и материальные ресурсы, с помощью которых уменьшаются расходы и риски по их перемещению и повышается безопасность мигрантов.

Результаты исследования показывают, что из республики эмигрировали лица активного трудоспособного возраста, часть из которых имела высшее образование, была специалистами высокой квалификации в различных отраслях экономики. Их подавляющее большинство было семейными и в основном эмигрировало с семьей, около половины из них имели несовершеннолетних детей. Воссоединение же с семьей другой части мигрантов имело место уже в стране въезда. Эмиграция этой группы населения оставляет свое негативные последствия на социально-экономическое развитие и демографические процессы в Армении.

Вместе с тем в зарубежных странах многие их мигрантов, несмотря на приобретенную в Армении профессию, вовлечены в сферы обслуживания, торговли, строительства, транспорта и другие сферы, не требующие высокой квалификации. Это приводит к снижению их социальной мобильности и карьерного роста, и в этом аспекте миграция препятствует их профессиональному развитию. Они вынуждены для приспособления к требованиям местного рынка труда приобретать дополнительные умения, которые ниже их квалификации. В качестве специалистов они востребованы больше в сферах здравоохранения, образования и ИТ в основном в

европейских странах, США и других странах (Китай, Индия).

В зарубежных странах проблема занятости мигрантов напрямую связана с их правовым статусом. Согласно результатам исследования, их подавляющее большинство имело гражданство принимающей страны, часть – разрешение на долгосрочное или краткосрочное проживание, некоторые находились в этой стране в статусе студента/исследователя по образовательной программе. Решение проблем статуса для большинства новых мигрантов с правовой точки зрения является важным условием для интеграции их в принимающее общество.

За рубежом сотрудничество между старыми традиционными армянскими общинами и обосновавшимися рядом с ними новыми группами мигрантов носит фрагментарный характер и, как показывают результаты исследования, довольно низок средний показатель участия новых мигрантов в каких-либо общинных организациях. Между этими двумя частями армянства имеются определенные языковые, культурные, религиозные различия, отличия в отношении к церкви, что препятствует контактам между ними. Сравнительно высокие показатели сотрудничества зафиксированы в случаях участия в общеармянских мероприятиях (поминовение жертв Геноцида армян, поддержка в Карабахской войне) и в традиционных праздниках. В сравнении с Российской Федерацией этот показатель выше у мигрантов, проживающих в странах Америки и Европы. В отличие от традиционной Диаспоры, прибывшие из Армении новые мигранты не имеют опыта общинно-культурной жизни, не вступили в ряды транснациональных организаций, действующих в Диаспоре. В силу этого и ряда подобных факторов они все еще не интегрируются в общинные организации Диаспоры. В этом вопросе следует учитывать также неоднородность самой традиционной армянской Диаспоры и многообразие стоящих перед ней проблем.

Этническая сеть в зарубежных странах принимает на себя важную роль также в вопросах образования и сохранения идентичности детей эмигрирующих семей, что в основном претворяется в жизнь в ряде европейских стран и в США при посредничестве церкви или общественных, благотворительных организаций. Однако, согласно показателям исследования, посещаемость этих организаций детьми мигрантов на фоне общего числа опрошиваемых составляет низкий процент.

Исходя из результатов исследования можно заключить, что сеть в зарубежной стране становится для мигрантов важным средством адаптации. Важную роль в этом играет также имеющаяся там социальная среда – родственники, друзья, соседи, с которыми они общаются и вместе отмечают традиционные армянские праздники, различные семейные мероприятия – свадьбы, церемонии крещения, дни рождения и прочее.

В чуждой среде сеть способствует созданию и соблюдению этнических границ. Она становится одним из важных условий организации социально-культурной жизни мигрантов, формирования поведенческих и стабильных культурных различий с другими инациональными этническими группами. Контакты между членами этнической сети способствуют сохранению национальной культуры и воспроизводству национальных обычаев. Этническая сеть также становится важной площадкой для общения между мигрантами и местным населением.

Результаты исследования убедительно доказывают, что этническая сеть в эмиграционном процессе является важным средством вовлечения оставшихся в Армении новых семей мигрантов и обеспечивает непрерывность процесса миграции. Согласно результатам исследования, о намерении выезда из Армении в ближайшие год – два высказалась приблизительно одна пятая родственников опрошиваемых, что является довольно высоким показателем с точки

зрения негативного воздействия на социально - демографическую ситуацию в Армении. В качестве причины возможной эмиграции опрошиваемые указали на создавшуюся в Армении напряженную социально-экономическую ситуацию и на фактор воссоединение семьи. Направления их возможной эмиграции в основном совпадают с теми странами, в которых обосновались на жительство члены их семей и родственники и лишь незначительная часть рассматривает также выбор другого направления. По данным исследования у опрошиваемых основным направлением возможной эмиграции продолжает оставаться Российская Федерация, затем США и Канада, а также европейские страны. Подавляющее большинство, выразившее намерение эмигрировать, это лица активного репродуктивного возраста, часть из них имеет высшее образование. Небольшую группу составляют пожилые люди, которые желают выехать к своим детям.

Результаты исследования показали, что новые мигранты тесно связаны с Арменией, и формы этих связей многочисленны и разнообразны: их подавляющее большинство ежедневно посредством видеосвязи общаются с родственниками, определенная часть на краткий срок посетила Армению, периодически отправляла денежные средства членам семьи, оказывала материальное содействие своей общине, участвовала в сборе пожертвований, связанных с войной в Арцахе. Опрошиваемые отметили, что более половины их эмигрировавших родственников имеют в Армении дома, что также является важным фактором связи с Родиной и дальнейшего возвращения в Армению. Все это говорит о том, что, проживая в другом обществе, они продолжают сохранять связи с Родиной и тем самым становятся транснациональными мигрантами, преодолевая ряд социально-культурных границ. Их самобытность формируется не только под воздействием этнической сети, но и культуры и системы ценностей принимающей страны. Многочисленные формы связи мигрантов с Арменией могут рассматриваться также

как одно из важных условий их возможного возвращения на Родину. Приблизительно четверть участников опроса указала на подобную возможность со стороны своих родственников. Но, как показало исследование, для них в случае принятия подобного решения побудительные мотивы не связаны с дальнейшей трудовой занятостью в Армении: профессиональным ростом, приобретенным благодаря миграции либо стремлением основать в своих общинах на родине малый бизнес на средства, заработанные за рубежом, или реализацией на местах новаторских идей и пр. Их возможное возвращение в наибольшей степени обусловлено психологическими факторами: стремлением жить на Родине, тоской по ней, желанием провести старость в Армении, воссоединением с семьей, женитьбой, армянским воспитанием детей и пр.

Согласно исследованиям психологов, для проживающих в Армении членов семьи мигранта, выехавшего на постоянное жительство, миграционная этническая сеть имеет важное психологическое значение. Она оказывает значительное воздействие на формирование мотивов эмиграции, так как нередко именно наличие этнической социальной сети является первостепенным фактором для эмиграции, без ее существования вероятность эмиграции могла быть ниже.

Наличие этнической сети приводит к возникновению у членов семьи мигранта чувства, что они в той или иной мере как бы ответственны за эмиграцию родственника. Этническая сеть как для выехавшего в зарубежную страну, так и для оставшихся в Армении членов его семьи воспринимается в качестве защитного фактора для эмигранта, выполняя роль «защитного конверта», описанного французским психологом Дидье Анзье. Следовательно, у проживающих в Армении членов семьи мигранта формируются высокие ожидания от членов сети с точки зрения предоставления ими помощи ему. Эмигрант в представлении участников опроса является человеком, изначально нуждающимся в помощи. Исходя из этого,

у них миграционная сеть зачастую воспринимается в качестве источника помощи, и ей приписывается функция оказания помощи как в аспекте содействия в интеграции мигранта в стране въезда, так и в аспекте психологического, эмоционального содействия, придания чувства обеспеченности и безопасности. В этом смысле сети приписываются функции, которые присущи семье. Члены этнической сети участниками опроса часто воспринимаются в качестве людей, охраняющих мигранта без предъявления предварительных условий, заботящихся о нем, обеспечивающих его бытовые условия. В этом аспекте они имеют определенные идеальные представления о членах этнической сети, и такая идеализация, согласно материалам исследования, иногда не оправдывает ожидания. Такое несоответствие подобным ожиданиям как у мигранта, так и у членов его семьи часто приводит к разочарованию вплоть до конфликта и разрыва отношений. Подобные инциденты наносят серьезные травмы и является испытанием как для мигранта, так и жизни его семьи, находящейся в Армении.

Одним из важных психологических факторов этнической сети для участников исследования является также возможность вовлеченности эмигранта в общинную жизнь. Тот факт, что он может отмечать праздники с местными армянами, а также наличие взаимопомощи между ними имеет большое значение для членов семьи эмигранта (этот фактор свидетельствует о том, что сети приписываются функции семьи). Многие из участников исследования считают наличие армянской общины в принимающей стране важным условием для сохранения целостности, полноты личности своего родственника. Активная вовлеченность в общинную жизнь в чуждой среде становится защитным барьером от одиночества, необеспеченности, непредсказуемости, чувства тревоги. Благодаря этому делается попытка укрепления дестабилизированной самобытности, сохранения ориентиров в чуждой среде вплоть до готовности интеграции в нее.

В отношении к миграционной сети участники опроса придали важное значение проблеме сохранения и передачи армянской идентичности и выразили свое отношение к этому. По мнению определенной части опрошенных имеет место противоречивый подход. В этом контексте примечательно то, что в отношении к этнической сети субъективным образом формируется почти такое же отношение, которое личность имеет в отношении собственной этнической самобытности. Изменения, привнесенные миграцией, полностью преобразуют жизнь субъекта, и это прежде всего отражается на проживающей в Армении его семье, которая весьма чувствительна к тем изменениям, которые претерпевает самобытность их эмигрировавшего родственника.

Психологическое значение миграционной сети, обусловленное характером родственной связи с мигрантом, придаваемые ей отношения и эмоциональное восприятие могут быть совершенно разными. Та часть опрошенных, которые в истории своей семьи подчеркивают наличие предков, эмигрировавших вследствие Геноцида армян, в определенной мере несет в себе последствия травмированной памяти, связанной с подобной эмиграцией. В частности, особая важность придается проблеме одиночества эмигрировавшего родственника, что по логике травматического фактора это - одиночество прежде всего перед смертью. Поэтому в данном контексте защитная функция обеспечения безопасности этнической сети может быть гораздо более выраженной среди данной группы участников исследования.

THE EMIGRATION PROBLEM OF POST-SOVIET ARMENIA'S POPULATION. THE NETWORK MIGRATION CONTEXT

SUMMARY

The book discusses the role of migration networks in shaping the emigration of post-Soviet Armenia's population. A quantitative survey was conducted in 20 urban and 37 rural settlements across all marzes of Armenia, as well as in Yerevan. The study included 639 families with a total of 1259 migrants living abroad. 29 expert interviews with migration scholars, representatives of legislative and executive bodies, officials working at regional administrations, as well as 60 interviews conducted among migrants' families by a psychologist also served as an important source for this collective monograph. In addition, the interviews were combined with the participatory observation method and the family tree reconstruction approach.

Many studies on the continuous emigration of the population from post-Soviet Armenia have focused primarily on the economic reasons of migration, while the role of migration networks, which is widespread in the modern world, has not received due attention. The existence of the Armenian diaspora through the migration network has an impact on the formation of emigration flows from Armenia, which is not always related to wage disparities between immigration countries. To interpret the concept of network, we use D. Massey's approach, which is common in Western migration theories. According to it, networks are sets of interpersonal ties that link migrants, former migrants, and non-migrants

in origin and destination areas through the bonds of kinship, friendship, and shared community origin.

The survey participants named many reasons for leaving Armenia, but the overwhelming majority cited economic reasons as primary. However, according to respondents, the possibility of leaving Armenia becomes more real when they have a migration network abroad. According to the survey results, the existence of the diaspora influences the decision-making of Armenian emigrants, as ethnic networks accelerate and create opportunities for the expansion of the population flows of those with migration intentions. About a third of the survey participants consider that their family members or relatives living abroad played a decisive role in their decision to emigrate, while about a quarter believe that their friends or acquaintances who live abroad were a decisive factor. According to them, the fact that their relatives or friends live abroad had a significant influence on their decision to emigrate. According to the geography of the migrant's departure countries, relatives and friends living in the USA and Canada played an important role in the formation of emigration flows. The research reveals that the existence of networks abroad contributed to the expansion of the number of participants in the process of emigration from Armenia and the involvement of new families and individuals. This means that if a member of an Armenian community chooses to emigrate, it lays the ground for other related members of the community to follow suit. In terms of attracting new people, participation in migration processes has a “snowball effect.”

According to the research findings, ethnic networks become an important means for organizing migration routes, predetermining the choice of the country of departure through the provision of human and material resources by the network abroad. In this regard, the vast majority of survey participants named their relatives' (family members) and non-relatives' (friends, acquaintances) networks as the main factors that influenced their family members' decision to choose countries of emi-

gration. The research shows that, in addition to influencing the country selection, networks are also based on migration strategies of different intra-community groups in Armenia; particularly when selecting migration settlements in the Russian Federation. A specific region of the Russian Federation, which, due to the social network is well-known among a certain intra-community group of migrants may not be of interest to others, because each group has its own migration vector and a preferred place of permanent residence. Accordingly, based on these migration strategies, related families and fellow villagers compactly settled in different regions of the Russian Federation. Some respondents who decided to emigrate through ethnic networks had a choice of not one, but several locations. Some migrants initially settled in a foreign city or village , but, being dissatisfied, moved to another settlement with the help of their network.

The Russian Federation is the most popular migration destination country for Armenian emigrants. It is followed by European countries, the USA, and Canada. According to research findings, the organization of the migration process is still poorly institutionalized, as very few people apply to state offices or private organizations to move abroad for permanent residence. Instead, migrants mostly rely on non-formal networks, i.e., the support of their relatives and/or friends. As the survey shows, migration through ethnic networks is excluded from government policies, making the process difficult to control.

Networks provide assistance to migrants, which is an important function. According to the survey results, the network assists newcomers by helping them meet their needs in a new environment, and facilitates their access to a variety of socio-economic fields. By relying on formal and informal connections formed by relatives, friends, and acquaintances who migrated earlier, newcomers receive new information, as well as material and non-material support. Forms of support provided to migrants by the ethnic network are diverse: migrants find jobs and housing with the support of their networks, they are temporarily host-

ed at their relatives, they receive material support, they are assisted to find new connections and formulate required documents to organize their migration procedures, etc. Migrants' relatives abroad (father/mother, brother/sister, son/daughter, other relatives) are considered important network actors, as they represent "strong" social ties for them. In a foreign environment, some migrants are provided with the necessary support by "weaker ties," such as friends, colleagues, neighbors, and acquaintances, whose stability as a supporting network is sometimes contested. According to the survey participants, if migrants had not had the support of their relatives/friends abroad, they would not have been able to migrate on their own. In other words, ethnic networks become an important social capital for newly arrived migrants by providing them with human and material resources, as they reduce the costs and risks of migration and increase migrants' security.

